

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՄԱՍ 1

Գենդերազգայուն
բյուջետավարում
ընդհանուր դրույթներ

ՄԱՍ 2

Տեղական մակարդակում
գենդերազգայուն
բյուջետավարման
հրահանգներ

Սույն ձեռնարկը համատեղ մշակվել է երկու ծրագրերի շրջանակներում. 1) Հարավային Կովկասում կանանց տնտեսական հզորացում նախագիծ (ՀԿՏՀ), որը համատեղ իրականացվում է ՄԱԿ-Կանայք-ի և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի կողմից և ֆինանսավորվում է Շվեդարական զարգացման և համագործակցության գործակալության (ՇՉՀԳ) և Ավստրիական զարգացման համագործակցության (ԱՉՀ) կողմից, և 2) «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» (ԼԿՏ), որն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) աջակցությամբ և Հայաստանում համաֆինանսավորվում է ՇՉՀԳ կողմից:

Ձեռնարկում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի, ՄԱԿ-Կանայք-ի, ԳՄՀԸ/GIZ-ի, ՇՉՀԳ-ի, ԱՉՀ-ի կամ նրանց կառավարությունների տեսակետների հետ:

ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարավային Կովկասում կանանց տնտեսական հզորացումը նախագծի (ՀԿՏՀ) գլխավոր նպատակն է ապահովել, որ Հայաստանում կանայք, մասնավորապես ամենաաղքատները և սոցիալապես խոցելիները, լինեն տնտեսապես զարգացած և մասնակցեն համապատասխան որոշումների կայացմանը: Մասնավորապես, նախագիծը օժանդակում է, 1) որ շահառու կանայք օգտագործեն հմտություններ, տնտեսական հնարավորություններ և համապատասխան տեղեկություններ՝ լինելու ինքնազբաղ կամ գտնելու վարձատրվող աշխատանք, 2) որ ՀՀ-ում կիրարկվեն համարժեք օրենսդրական և քաղաքականությունների շրջանակներ՝ խթանելու կանանց տնտեսական զարգացումը, և 3) որ ՀՀ կառավարությունը և պետական կառույցները մշակեն և իրագործեն գենդերային խնդիրներին արձագանքող ծրագրեր, հանրային ծառայություններ, ռազմավարություններ և պլաններ՝ ուղղված կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը:

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» (ԼԿՏ) ծրագիրը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ազգային, շրջանային(մարզային) և տեղական մակարդակի գործընկեր կազմակերպություններին տրամադրում է խորհրդատվություն՝ բարելավված տեղական կառավարման ուղղված համագործակցային նախաձեռնություններ իրականացնելու: Այն աջակցում է բարելավելու ընդհանուր պայմանները, հասցեագրելու մարզային կառավարման խնդիրները, բարելավելու համայնքային ծառայությունները և համայնքային մակարդակում քաղաքացիների մասնակցությունը: Գերմանիայի միջազգային համագործակցության մոտեցումների համատեքստում, Ծրագրի խնդիրները կազմում են Կովկասյան նախաձեռնության շրջանակի մասը, ուստի, հարավային Կովկասի երկրների միջև մասնագիտական փորձի փոխանակման և համագործակցության բարելավումը նույնպես ծրագրի խնդիրներից են՝ հարավկովկասյան տարածաշրջանային մակարդակում:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Փորձագիտական թիմը շնորհակալ է ՄԱԿ-Կանայք Վրաստանի գրասենյակին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրին, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությանը (ԳՄՀԸ/GIZ) և Շվեյցարական զարգացման և համագործակցության գործակալությանը (ՇՀՀԳ) սույն առաջադրանքի կատարման ընթացքում տրամադրված ուղղորդման և Հայաստանում գենդերային զգայուն բյուջետավարման մեթոդների կիրառելիության և արդյունավետ իրականացման վերաբերյալ իրենց մոտեցումներով կիսվելու համար: ՄԱԿ-Կանայք-ի, ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի և այլ ՄԱԿ կառույցների և գործընկերների տրամադրած գիտելիքները և նյութերը ամուր հենք են ապահովել սույն ձեռնարկի համար (տես «օգտագործված գրականություն» բաժինը):

Թիմը նաև շնորհակալ է բոլոր այն անհատներին, որոնք հատկացրել են իրենց ժամանակը՝ ֆոկուս խմբերի և ձեռնարկի վավերացման աշխատարանի մասնակցության համար: Պետական և տեղական կառավարման մարմինների, միջազգային կառույցների և դոնորների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլ փորձագետների՝ գենդերային հավասարության, մարդու իրավունքների և տնտեսական զարգացման մասին նկատառումները և դիտարկումները մեծապես օգնել են սույն ձեռնարկը մշակելիս:



ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ներդնել գենդերազգայուն բյուջետավարման գործընթացը, որն ալևս պահանջված է

Հայաստանի Հանրապետությունը հավատարիմ մնալով միջազգային հարթակներում ստանձնած պարտավորությունների կատարմանը, ազգային և տեղական մակարդակներում իրականացնում է ուղղորդված ռազմավարություն՝ նպատակների իրականացման և ծառացած խնդիրների լուծման համար:

Եթե ազգային մակարդակում միայն 2018թ.-ից պետական բյուջեն կազմվեց ծրագրային ձևաչափով, ապա պետք է փաստեմ, որ համայնքներում կարևորելով ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսային հնարավորությունների չափելիությունը, արդեն որերորդ տարին է, թվային բյուջեից զատ, իրականացվում է ծրագրային բյուջետավարում:

Ուրախալին նա է, որ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգն իր օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ձևակերպումներով և հնարավորություններով այնքան ճկուն է, որ կարող է կյանքի կոչել ցանկացած նախաձեռնություն, որն ուղղված է համայնքի բարօրությանն ու նրա բնակիչների իրավունքների ու շահերի պաշտպանությանը:

Նման ձեռնարկումներից է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանն ու համաչափ ծախսային ֆոնի վրա հավասար արդյունք ստանալու հնարավորությանն ուղղված բյուջետավարումը, որն ի սկզբանե ուղղված է համայնքի զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ողջունում է ՄԱԶԾ-ի և ԳՄՀԸ-ի այս նախաձեռնությունը, որը հիմք կարող է դառնալ նշված բյուջետավարման գործընթացն սկսելու համար:

Այս բյուջետավարման ձեռնարկը բյուջետավարման իրականացման մտադրությունների մատչելի համախումբ է, որտեղ ներկայացված քայլերով կարելի է հասնել ցանկալի արդյունքի:

Ուրախ եմ, որ այս ձեռնարկի միջոցով մենք թիրախավորում ենք այն բացը, որն առկա է մեր իրականության մեջ և հնարավորություն ենք տալիս տարբեր հարթակներում ներդնել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանն ուղղված բյուջետավարման գործընթացը, որն ալևս պահանջված է:

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար՝

Սուրեն Պապիկյան

Գեղերային հավասարության ապահովմանն ընդառաջ

Հայաստանի նոր կառավարությունը տարբեր առիթներով հայտարարել է, որ մտադիր է խրախուսել երկրում կանանց քաղաքական մասնակցությունը և որոշումների կայացման գործընթացում նրանց ներգրավվածության ավելացումը՝ ոչ միայն ժողովրդավարության, այլև՝ երկրում կայուն զարգացման հասնելու համար: Գեղերային հավասարության ապահովումը կարևոր խնդիր է, քանի որ անհավասարությունն ու խտրականությունը, ռեսուրսների և հնարավորությունների անհամաչափ հասանելիությունը հասարակության առաջընթացի լուրջ խոչընդոտներ են: Եվ, քանի որ մեր հասարակության առաջնային խնդիրներից է կայուն սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումը, առանց գեղերային բաղադրիչի ներառման այն չի կարող լիարժեք լինել:

Հայաստանը շարունակում է լուրջ քայլեր ձեռնարկել գեղերային հավասարության ապահովման և կանանց նկատմամբ բռնության վերացման ուղղությամբ: Հայաստանը վավերացրել է գեղերային հարցերին առնչվող միջազգային հիմնական գործիքները: Որպես ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի անդամ՝ Հայաստանը ստանձնել է որոշակի պարտավորություններ՝ համապատասխանեցնելու ազգային օրենսդրությունը՝ միջազգային դրույթների հետ:

2019 թ.-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել է «Հայաստանում գեղերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը», որն արժևորում է գեղերային քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների ու հնարավորությունների իրացման նպաստավոր պայմանների ստեղծումը: Մենք կարևորում ենք ռազմավարական ծրագրով առաջարկվող այն միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի բոլոր ոլորտներում գեղերային բաղադրիչի ներառմանը, գեղերային հավասարության հասնելու ազգային մեխանիզմի ստեղծմանը և այլն:

Կառավարության քաղաքականությունն ու ձեռնարկվող բարեփոխումները համահունչ են ՄԱԿ-ի Կայուն զարգացման 2030թ. օրակարգին և նպաստում են Կայուն զարգացման նպատակների իրագործմանը, մասնավորապես՝ 5-րդ նպատակի, որը սահմանում է «Հասնել գեղերային հավասարության և հզորացնել բոլոր կանանց և աղջիկներին»:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար՝

Չարուհի Բաթոյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 6
- ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 7
- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8
- ՄԱՍ 1. ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 9
 - ՆԱԽԱԲԱՆ 11
 - ԻՆՉ Է ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՆ 13
 - ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14
 - ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ... 15
 - ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ 22
 - ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱՎԱՐԳՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 23
 - ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ. ՄԵԹՈՂՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ 25
 - ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 37
 - ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՆԵՐԱՑԻ ԴԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ 40
- ՄԱՍ 2. ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՀՐԱՀԱՆՁՆԵՐ 41
 - ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 43
 - ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԱՏԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 45
 - ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՆԵՐԱՑՆԵՐԻ ԴԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՈՒ ԿՈՂՄԵՐԸ 45
 - ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՑԻԿԼԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 47
 - ԳԶԲ-Ի ՊԼԱՆԱԿՈՐՄԱՆ, ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՆԵՐԱՑԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 48
 - ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՂԱԴԻՉԻ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾՆԵՐԱՑԻ ՔԱՅԼԵՐՈՒՄ 50
 - ԳԶԲ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 52
 - ԳԶԲ ՑՈՒՑԻՉՆԵՐ 53
 - ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՓՈՐՁԸ 54
 - ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ 57
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՆԵՐԱՑԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂՂԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 61
- ԿԵՐՋԱԲԱՆ 62
- ԾԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ 63
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 67
 - ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԴԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 69
 - ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱԿԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 71
 - ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՊԵԿԻՆՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԴԻՄՆԱՆ ԿՐԱ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱԿԻՃԱԿԻ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԵՐԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ 78
 - ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ 80
 - ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ ՀՈՂԱԾՆԵՐԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ՊԱՀԱՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ 81
 - ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾՆԵՐԱՑՆ ԿՐԱՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ 84
 - ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 86
 - ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՀԱՄԱՅՆՔԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱՎԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ 88
 - ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅԼ ՕՐԻՆԱԿՆԵՐ 103
 - ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» 105

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՅԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՊՅ	Անկախ պետությունների համագործակցություն
ԲՉՄՅ/ICPD	Բնակչության և զարգացման միջազգային համաժողով
ԳԱԻ/GII	Գենդերային անհավասարության ինդեքս
ԳԶԲ	Գենդերազգայուն բյուջետավարում
ԳԶՑ/GDI	Գենդերային զարգացման ցուցանիշ
ԳՄՅԸ/ GIZ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
ԵԱՅԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ՉԼՄ-ներ	Չանգվածային լրատվական միջոցներ
ԾԲ	Ծրագրային բյուջե
ԿԶՆ-ներ	Կայուն զարգացման նպատակներ
ԿՆԽԿԿ/ CEDAW	ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
ԿՏՅԲ	Կատարողականի վրա հիմնված բյուջե
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՅ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԿԿ	Հայաստանի վիճակագրական կոմիտե
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ-ի ԱԽ	ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ
ՄԶՀ	Մարդկային զարգացման համաթիվ
ՄԻԱԿ/ՁԻԱՀ	Մարդու իմունային անբավարարության վիրուս/ Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ՅՈՒՆԻՖԵՄ	Կանանց հարցերով ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամ
ՊԳԾ	Պեկինյան Գործողությունների ծրագիր
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա/ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռնարկը նպատակ ունի զարգացնել գենդերազգայուն բյուջետավարման (ԳԶԲ) վերաբերյալ ընկալում և կարողությունների ընդլայնում՝ որպես գենդերային հավասարության խթանման, ինչպես նաև բյուջետային քաղաքականության արդյունավետության և թափանցիկության ապահովման գործիք:

Ակնկալվում է, որ այս ձեռնարկը պետական և տեղական մակարդակում կզարգացնի հանրային ծառայողների անհրաժեշտ հմտությունները՝ պլանավորման և բյուջետավարման ընթացքում գենդերային ուղղորդման գործընթացներին մասնակցելու համար:

Ձեռնարկը տարբեր շահագրգիռ կողմերի, ներառյալ ազգային և տեղական մակարդակներում որոշումներ կայացնողներին և պրակտիկ գործիչներին հնարավորություն է տալիս.



- Ըմբռնել գենդերազգայուն բյուջետավարման էությունը և անհրաժեշտությունը,
- Ըմբռնել գենդերազգայուն բյուջե մշակելու անհրաժեշտությունը,
- Շահկապել գենդերային պատասխանատու քաղաքականությունը համապատասխան բյուջետային միջոցների հետ,
- Իրականացնել բյուջեն այնպես որ հավասարապես շահեն կանայք և տղամարդիկ, աղջիկները և տղաները,
- Մշտադիրտարկել գենդերային տեսանկյունից ծախսերի կատարման և եկամուտների հավաքագրման գործընթացները:

Բ/ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ


Ձեռնարկը բաղկացած է 3 մասից:

Առաջինին մասում ներկայացվում է համապարփակ ակնարկ գենդերային հավասարության, գենդերային հավասարությանն ուղղված միջազգային ու ազգային փաստաթղթերի, ինչպես նաև գենդերազգայուն բյուջետավարման հիմնական հասկացությունների և սկզբունքների վերաբերյալ: Առաջին մասը տրամադրում է տեղեկատվություն նաև ազգային և տեղական մակարդակներում գենդերազգայուն բյուջետավարման իրականացման մեթոդների և գործիքների մասին:

Երկրորդ մասում ներկայացվում են տեղական մակարդակում գենդերազգայուն բյուջետավարման քայլերը, որոնք շահկապված են բյուջետային գործընթացների կազմակերպման, այդ թվում ծրագրային բյուջեի և տարեկան աշխատանքային պլանի կազմման գործընթացների հետ: Այս հատվածում ներկայացված են նաև ձևաթղթեր, իրավական ակտերի օրինակներ, որոնցով ապահովվում է գործընթացին մասնակից անձնաց, մասնագետների մեթոդական աջակցությունը:

Երրորդ մասում ներկայացված են Հավելվածները: Այս մասում գետեղված կյուբերը, փաստաթղթերը լրացնում են 1-ին և 2-րդ մասերում ներկայացված ԳԶԲ հիմնավորումներին և նկարագրություններին: Այս հատվածում ներկայացված են Հայաստանում գենդերային իրավիճակի նկարագրությունը, հիմնական տերմինների բառարան և ռեսուրսների մատյանը, տեղական և միջազգային տիրույթում օգտագործվող, փորձարկված գործիքակազմերը, վերլուծությունների, ցուցիչների օրինակները, տեղական մակարդակում ԳԶԲ իրականացնելու համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի նախագծերը, քաղվածքներ օրենքներից և այլն:

ՄԱՍ 1



ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ
ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

Գենդերային հավասարությունը դիտարկվում է որպես մարդու հիմնական իրավունք, որպես հիմնարար արժեք և ներկայիս քաղաքակրթության հիմնական սկզբունք, որպես սոցիալական արդարության կարևոր պահանջ, ինչպես նաև նպատակ, որին պետք է ձգտեն հասնել ժողովրդավարական երկրները հանրային կյանքի բոլոր ոլորտներում:

1945 թվականին համաշխարհային առաջնորդների կողմից ընդունված ՄԱԿ-ի Կանոնադրության հիմնական սկզբունքը «կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն են», իսկ կանանց մարդու իրավունքների պաշտպանությունն ու խթանումը բոլոր պետությունների պարտականությունն է:

Այնուամենայնիվ, ամբողջ աշխարհում միլիոնավոր կանայք շարունակում են հանդիպել խտրականության:



- Օրենքներն ու քաղաքականությունները կանանց զրկում են հող, ունեցվածք և բնակարան ունենալու հավասար իրավունքներից:
- Տնտեսական և սոցիալական խտրականությունը կանանց ավելի քիչ հնարավորություններ են ընձեռում դարձնելով նրանց թրաֆիքինգի սկատմամբ խոցելի:
- Աշխարհում գենդերային բռնությունը ենթարկվում են կանանց առնվազն 30%-ը:
- Կանայք մերժվում են իրենց սեռական և վերարտադրողական առողջության իրավունքը:
- Կանանց իրավապաշտպանները գերեվարվում են իրենց համայնքների կողմից և դիտվում որպես կրոնի, պատվի կամ մշակույթի սպառնալիք:
- Անտեսվում է կանանց վճռական դերը անվտանգության և խաղաղության կայացման մեջ, ինչպես նաև այն հատուկ ռիսկերը, որոնց նրանք բախվում են կոնֆլիկտային իրավիճակներում:
- Ավելին, կանանց որոշ խմբեր սեռի հիմքով խտրականությունից զատ, տուժում են հարակից խտրական գործոններից, ինչպիսիք են նրանց տարիքը, էթնիկ ծագումը, հաշմանդամությունը կամ սոցիալ-տնտեսական կարգավիճակը:

Կանանց մարդու իրավունքների արդյունավետ ապահովումը նախ և առաջ պահանջում է համակողմանի պատկերացում սոցիալական կառույցների և ուժային հարաբերությունների մասին, որոնք ընդգրկում են ոչ միայն օրենքներն ու քաղաքականությունը, այլև տնտեսությունը, սոցիալական դինամիկան և ընտանեկան և համայնքային կյանքը:

Գենդերային ուղղորդումը բոլոր ոլորտներում և մակարդակներում ցանկացած պլանային գործողությունների, ներառյալ օրենսդրության, քաղաքականության կամ ծրագրերի, կանանց և տղամարդկանց համար արդյունքների և հետևանքների գնահատման գործընթաց է: Այն ռազմավարություն է՝ ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մտահոգություններն ու փորձառությունները քաղաքական, տնտեսական և սոցիալական բոլոր ոլորտներում ձևավորելու, կյանքի կոչելու, մոնիտորինգի և գնահատման անբաժանելի մաս դարձնելու համար, որպեսզի կանայք և տղամարդիկ հավասարապես օգտվեն արդյունքից և չստեղծվի անհավասարություն: Վերջնական նպատակը գենդերային հավասարության հասնելն է:¹

¹ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդ

Ընդունելով Պեկինի գործողությունների ծրագիրը, կառավարությունները պարտավորություն են ստանձնել ներառելու գենդերային ուղղորդման ռազմավարությունը քաղաքականության և պլանավորման գործընթացներում: Գործողությունների ծրագրում գենդերային ուղղորդման պահանջը ձևակերպված է հետևյալ կերպ.

«...Կառավարությունները և այլ դերակատարներ պետք է նպաստեն, որ բոլոր քաղաքականությունները և ծրագրերը լինեն գենդերային առումով ակտիվ և տեսանելի, հետևաբար որոշումներ կայացնելուց առաջ պետք է իրականացվի համապատասխան վերլուծություն՝ կանանց և տղամարդկանց վրա ազդեցության մասին»:

Ուղղորդման պահանջը ենթադրում է պարտավորություններ տարբեր մակարդակներում: Կառավարությունների առաջին և ամենաուղղակի պարտավորությունն է՝ իրականացնել այս մոտեցումը. երկրորդ, զարգացման համագործակցության համատեքստում, քաղաքացիական հասարակության կառույցները և կազմակերպությունները պետք է հաշվի առնեն կառավարության այս հանձնառությունը ծրագրերում և տեխնիկական աջակցության գործողություններում:

Բոլոր ոլորտներում գենդերային ուղղորդումը շեշտադրում է այն ճանաչումը, որ կանանց և տղամարդկանց հետաքրքրություններն ու կարիքները պետք է հետևողականորեն ներառվեն ծրագրերի մեջ: Հավասարության խնդիրներին ուշադրություն դարձնելը չի կարող սահմանափակվել մի հատվածով, որը կոչվում է «կանանց զարգացում» կամ ուղղված է ոլորտների մեկուսացված կամ լուսանցքային ծրագրերին: Փոխարենը, կազմակերպությունները պետք է գիտակցեն, որ կանայք այն հասարակության մեծ մասն են, որին նրանք ծառայում են: Եթե կազմակերպությունները պատշաճ կերպով ծառայեն ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց, և կատարեն կանանց և տղամարդկանց անհավասարությունները նվազեցնելու պարտավորությունները, ապա գենդերային հեռանկարները կդառնան ծրագրերի և ռազմավարությունների ձևավորման, իրականացման և գնահատման գործընթացի մաս:

1996 թվականին Եվրոպական հանձնաժողովն ընդունեց գենդերային ուղղորդման մոտեցումը համաձայն որի «Գենդերային ուղղորդումը ենթադրում է ոչ թե սահմանափակել ջանքերը կանանց հավասարությանխթանման ուղղությամբ կանանց աջակցության հատուկ միջոցառումների իրականացման գործում, այլ մոբիլիզացնել բոլոր ընդհանուր քաղաքականությունները և միջոցառումները: Սա նշանակում է համակարգված ուսումնասիրել միջոցառումները և քաղաքականությունը, հաշվի առնել բոլոր հնարավոր հետևանքները դրանք սահմանելիս և իրականացնելիս»: (Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընդգրկում համայնքային բոլոր քաղաքականություններում և գործողություններում COM (1996) 67 եզրափակիչ)

Գենդերային ուղղորդումն ու գենդերազգայուն բյուջետավարումը հատկապես կարևոր են Հայաստանի Հանրապետության համար, քանի որ հետսոցիալիստական զարգացումները առաջ են բերել որոշ հնարավորություններ և առավելություններ, ինչպես նաև նկատվել է նաև աղքատության, գործազրկության, սոցիալական բացառման մակարդակների բարձրացում և բևեռացում:

Անհրաժեշտ է նշել, որ չնայած գենդերային հավասարության հասնելու ավելի մեծ առաջընթացին, կանայք շարունակում են մնալ Եվրոպայի և ԱՊՀ բնակչության ամենաաղքատ և մարգինալիզացված հատվածներում: Մարդու ինքնության որոշման հետևյալ չափորոշիչներից տարիք, Էթնիկ ծագում, կրոն, դաս, հաշմանդամություն, և կրթություն, սեռը կարևորագույնն է, որը որոշում է, թե ինչպես է անհատը ընկալվում հասարակության մեջ և ինչ կարող է անհատը ակնկալել ռեսուրսների հասանելիության, հնարավորությունների, ուժի, որոշումների կայացման առումով:

Սոցիալիզմի փլուզումից ավելի քան 25 տարի անց, մեծ տարբերություն կա Եվրոպայի և ԱՊՀ երկրների միջև: Մինչ մի քանի երկրներ Եվրամիության անդամ են և ունեն համեմատաբար ուժեղ տնտեսություններ և կայուն ժողովրդավարական համակարգեր, Հայաստանում իրավիճակն այլ է: Սոցիալական բացառումը վերաբերում է այն կառուցվածքային խոչընդոտներին և ինստիտուցիոնալ պայմանավորվածություններին, որոնք մերժում են որոշ անհատների, ընտանիքների և խմբերի հետ կապված ռեսուրսների մատչելիությունը սեռի, տարիքի և այլնի հիման վրա: Այդ իսկ պատճառով քաղաքականության մշակողների և պրակտիկ գործիչների համար կարևոր է կենտրոնանալ վերափոխման մոտեցման վրա՝ քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում՝ գենդերային անհավասարությունը և սոցիալական բացառումը կանխելու համար:

Հաջորդիվ հակիրճ ներկայացվում են *գենդերային բյուջե* հասկացությունը, Գենդերազգայուն բյուջետավարման սկզբունքները, գենդերային իրավիճակը Հայաստանում, մի շարք հատկանշական փաստաթղթեր, որոնք ընդունվել են ՄԱԿ-ի և Եվրոպայի երեք խոշոր տարածաշրջանային կազմակերպությունների կողմից՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և Եվրամիության (ԵՄ) կողմից, և որոնք կենտրոնանում են գենդերային հավասարության, կանանց հզորացման վրա և վերաբերում են գենդերազգայուն բյուջետավարմանն ու գենդերային ուղղորդմանը:

ԻՆՉ Է ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՆ

«Գենդերազգայուն բյուջե» տերմինը նշանակում է բյուջե, որը հավասարապես և արդարացիորեն հաշվի է առնում կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների շահերը և կարիքները:

Բյուջետային գործընթացներում գենդերային մոտեցումը որոշակի ժամանակահատվածի, հասարակարգի, կառավարման տարբեր համակարգերում կանանց և տղամարդկանց փոխհարաբերությունների առանձնահատկությունների դիտարկումն է, որով ամրագրվում է, որ տղամարդիկ և կանայք պետք է լինեն գործընթացի լիարժեք մասնակիցներ և շահառուներ:

Գենդերազգայուն բյուջետավարումը ծախսերի վերաբաշխման հնարավորություն է ինչպես գենդերային հավասարության ապահովման: Այս գործընթացը հաշվի է առնում կանանց և տղամարդկանց տարբեր կարիքներն ու առաջնահերթությունները, խնդիրներն ու պահանջները, ԳԶԲ-ն սկսվում է տղամարդկանց և կանանց վրա բյուջեի ազդեցության վերլուծությունով, որի արդյունքները այնուհետև ներառվում են բյուջեի մշակման մեջ:

Գենդերազգայուն բյուջեի մասին սխալ պատկերացումներից խուսափելու համար հարկ է նշել, որ գենդերազգայուն բյուջեն կանանց համար առանձին բյուջե չէ: Այն բյուջեի միջոցների բաշխման վերլուծության փորձ է, որտեղ հաշվի են առնվում գենդերային առանձնահատկությունները:

ԳԶԲ նպատակ ունի կառավարել և գնահատել որոշումները և նրանցից բխող հետևանքները կանանց և տղամարդկանց համար:

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բյուջետավարումը Հայաստանում եղել է ծախսային և հիմնված չի եղել արդյունքների ստացման վրա: Այն քիչ տեղեկություններ է տրամադրել այն մասին, թե ի՞նչ ծառայություններ են մատուցվել և ի՞նչ արդյունքներ պետք է ձեռք բերվեն: Ավելի արդյունավետ հանրային միջոցների կառավարման ապահովման համար երկրում ներդրվեց ծրագրային բյուջետավարումը որպես քաղաքական բարեփոխում՝ խնդիր ունենալով կապելու բյուջեն որոշակի քաղաքական ծրագրերի և արդյունքների հետ: Այս մոտեցմամբ էլ ծրագրային բյուջեն հնարավորություն է ստեղծում համակարգված ձևով փոխկապակցել սեռով պայմանավորված ծախսերը և դրանց ծրագրային արդյունքները:

2018 թվականից Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ազգային մակարդակում, անցում է կատարել ծրագրային բյուջետավարման, այն դեպքում, երբ 2016 թվականից միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ նաև Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության, աջակցությամբ տեղական ինքնակառավարման մակարդակում բոլոր խոշորացած համայնքները մշակում են իրենց ծրագրային բյուջեները:

Ծրագրային և գենդերազգայուն բյուջեների կենտրոնում ծրագիրն է իր ակնկալվող արդյունքներով: Այդ իսկ պատճառով շատ ավելի արդյունավետ է գենդերային մոտեցումները ծրագրային բյուջեի հիմքի վրա տեղայնացնելը: Այլ կերպ ասած ԳԶԲ կառուցել ԾԲ-ի հիմքի վրա: 2 դեպքում էլ արդյունքները համեմատվում են հատկացված և ծախսված միջոցների հետ:

Ինչպես ծրագրային, այնպես էլ գենդերազգայուն բյուջետավարման նպատակն է ընդլայնել տեղեկատվության և գիտելիքների բազան և ստացված արդյունքներն ինտեգրել համայնքի կողմից իրականացվող քաղաքականությունների և ծրագրերի մեջ: Հետևաբար, արդյունավետ ԳԶԲ իրականացնելու նախապայմանը ծրագրային բյուջետավարման առկայությունն է:

2019 թվականի ծրագրային բյուջե մշակած որոշ միավորված համայնքներ ինտեգրել են գենդերային մոտեցումներ նաև ծրագրերի և միջոցառումների մեջ:

Ծրագրային բյուջետավարման (ԾԲ) համակարգին անցումը հնարավորություն կտա ունենալ տվյալներ կանանց և տղամարդկանց ուղղված ծախսերի վերաբերյալ, ինչպես նաև գենդերային ցուցիչներ բյուջեի կատարման մշտադիտարկում իրականացնելու համար: Այս կերպ կձևավորվի հիմնավորված քաղաքականությունների մշակման ավելի ամբողջական տվյալների բազա, որը կնպաստի ծրագրային բյուջետավարման գործընթացի ներդրմանը՝ օգնելով ավելի լավ համադրել քաղաքականություններով ամրագրված նպատակներն ու արդյունքները կատարվող բյուջետային հատկացումների հետ:

Անցումը ԾԲ համակարգին հնարավորություն կտա բյուջեի մշտադիտարկման ու հաշվետվությունների կազմման գործընթացներին զուգահեռ նաև իրականացնել գենդերազգայուն բյուջետավարում: Այս ամենը պետք է դիտարկել որպես բարեփոխումների մի փաթեթ, որը կառավարությանը հնարավորություն կտա ստանալ բյուջեի իրականացման վերաբերյալ ստույգ տվյալներ, ինչն էլ կապահովի բյուջետային միջոցների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության ավելի բարձր մակարդակ:

ԾԲ – հիմքով ԳԶԲ -ի կազմման համար պահանջվում է բյուջեի ծրագրերի նախագծման և պլանավորման առաջին իսկ պահից հաշվի առնել գենդերային հավասարությանն առնչվող խնդիրները:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Գենդերազգայուն բյուջետավարման համատեքստում շատ կարևոր են ստորև ներկայացրած փաստաթղթերը, քանի որ դրանք ոչ միայն հիմք են ծառայում գենդերային հավասարության և կանանց զորացմանն աջակցելու համար, այլև քաջալերում են գենդերային ուղղորդումը և ցույց են տալիս, թե ինչպես կարելի է ինտեգրել գենդերային բաղադրիչը կամ ուժեղացնել գենդերային հեռանկարը բոլոր քաղաքականություններում, ռազմավարություններում, ծրագրերում, ինչպես նաև ազգային և տեղական այլ փաստաթղթերում:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված և վավերացված միջազգային իրավական փաստաթղթերը ներառում են իրավական պարտավորություն և հիմք՝ գենդերազգայուն բյուջետավարման համար: Ավելին, չնայած այն բանի, որ ՀՀ օրենսդրությունը ուղղակիորեն չի կոչում գենդերազգայուն բյուջետավարումը, երկրի իրավական և ռազմավարական շրջանակը պարունակում է բավարար տարրեր, որոնք իրավական հիմք այս ուղղությամբ աշխատելու համար:

ՄԱԿ-Ի ՓԱՍՏԱԹՂԹԵՐ



- **Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիա (1952)** - պնդում է կանանց դեռ յուրեք հավասարությունը

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (1979 թ., ԿՆԽՎԿ) նախատեսում է համապարփակ շրջանակ գենդերային հավասարության, բոլոր իրավունքների վրա հիմնված գործողությունները առաջնորդելու համար, այդ թվում՝ ՄԱԶԾ-ի համար: Այս փաստաթղթով գենդերային անհավասարությունը ներկայացվում է, որպես կանանց նկատմամբ խտրականության հետևանք: ԿՆԽՎԿ-ն կոչ է անում արդյունքների հավասարություն ունենալ, քան պարզապես հնարավորությունների հավասարություն: Այսպիսով, բավարար չէ, որ գործի դրվեն խտրականության դեմ ուղղված օրենքները. Պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու, որ կանայք իրականում վայելեն հավասարությունը իրենց առօրյա կյանքում: ԿՆԽՎԿ-ն սահմանում է խտրականությունը և այն քայլերի շրջանակը, որոնք պետությունները պետք է ձեռնարկեն դրա վերացման համար, հաստատում է կանանց իրավունքները հատուկ ուղորտներում և առաջարկում դրույթներ վավերացման, մոնիտորինգի, զեկույցների պատրաստման և այլ գործընթացների վերաբերյալ:

- **Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագիրը (1993 թ.)** մարդու իրավունքների առաջին միջազգային գործիքն է, որը բացառապես և բացահայտորեն անդրադառնում է կանանց նկատմամբ բռնության խնդրին: Այն հաստատում է, որ երևույթը խախտում է, խանգարում կամ վերացնում է կանանց մարդու իրավունքները և նրանց հիմնարար ազատությունների իրականացումը: Հռչակագիրը սահմանում է գենդերային բռնության

- սահմանում՝ անվանելով այն «գենդերային բռնության ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել կանանց, ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասների կամ տառապանքների, կամ՝ կանանց նկատմամբ տառապանքների, ներառյալ նման գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, լինի դա հասարակական կամ մասնավոր կյանքում:
- Կահիրեում **Բնակչության և զարգացման միջազգային համաժողովը** (1994թ., ԲՉՄՅ/ICPD) կարևոր իրադարձություն էր բնակչության և զարգացման, ինչպես նաև կանանց իրավունքների պատմության մեջ: ԲՉՄՅ-ի պատվիրակները համաձայնության եկան, որ կանանց հավասարությունն ու հզորացումը գլոբալ զերակայություն է: Այս խնդրին ներկայացվեց ոչ միայն մարդու համընդհանուր իրավունքների տեսանկյունից, այլև որպես հիմնական քայլ աղքատության վերացման և բնակչության աճի կայունացման ուղղությամբ: Կնոջ վերարտադրողական առողջությանը և իրավունքներին հասանելիության կարողությունը նրա հզորացման հիմքն է: Այն կարևոր է նաև կայուն զարգացման համար:
- **Պեկինյան Գործողությունների ծրագիրը** (1995թ.) «կանանց հզորացման օրակարգ» է, որը ստորագրվել է բոլոր կառավարությունների կողմից, ինչը դիտարկվում է որպես «հավասարության, զարգացման և խաղաղության համար անհրաժեշտ և հիմնարար նախադրյալ»: Պլատֆորմը նախատեսում է կանանց հզորացման ծրագիր, որը բացառապես պարզ է, նպատակային և գործուն: Փաստաթուղթը ներառում է 12 կարևորագույն ոլորտներում առկա խնդիրների և հնարավորությունների գենդերային վերլուծություն, ինչպես նաև հստակ և հատուկ չափանիշներ գործողությունների համար, որոնք պետք է իրականացվեն կառավարությունների, ՄԱԿ-ի համակարգի և քաղաքացիական հասարակության կողմից, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, մասնավոր հատվածը: Այս ոլորտներից մի քանիսը հստակեցնում են ՄԱԾԾ-ի ռազմավարական ծրագրի արդյունքների յուրաքանչյուրի ներուժը՝ նպաստելու կանանց հզորացմանը: Բացի այդ, պլատֆորմը նախատեսում է գենդերային ոլորտի հիմնական գլոբալ առաջին պարտավորությունը, որպես այն մեթոդաբանությունը, որով իրականացվելու է կանանց հզորացմանը: Այն նշում է, որ առաջարկվող գործողությունների իրականացման ընթացքում «պետք է խթանվի գենդերային հեռանկարը ներառելու ակտիվ և տեսանելի քաղաքականությունը բոլոր քաղաքականություններում և ծրագրերում, որպեսզի որոշում կայացնելուց առաջ իրականացվի վերլուծություն՝ համապատասխանաբար կանանց և տղամարդկանց ազդեցության վերաբերյալ»: Գենդերային ուղղորդումը երկակի է: Այն պետք է աջակցի կանանց հզորացմանը՝ ընդլայնելու նրանց կարողությունները, հնարավորությունները և ընտրությունները. պահանջել իրենց իրավունքները և անցնել տղամարդկանց հետ լիակատար էական հավասարության: Այն նաև պետք է աջակցի ազգային կարողություններին՝ կանանց հետաքրքրություններին և մտահոգություններին դրական արձագանքելու համար:

- **Հագարամյակի զարգացման նպատակները (2000 թ., ՀՁՆ-ներ)**, ըստ էության, համախմբեցին նախորդ պայմանագրերը, ներառյալ կանանց իրավունքների, կանանց հզորացման և գենդերային հավասարության հարցերը, զարգացման համայնքի համար հիմնական նպատակների, թիրախների և հենանիշների մի շարք: Հագարամյակի հռչակագիրը, որից նրանք կազմվել են, որդեգրեց հստակ դիրքորոշում, որն այն ժամանակ քննարկվել է բազմաթիվ փաստաթղթերում, որ գենդերային հավասարությունն ինքնին իրավունք է և զարգացման խթան: ՀՁՆ-ներն արտացոլում էին այն հատուկ նպատակի միջոցով (ՀՁՆ 3), չնայած գենդերային հավասարության և կանանց հզորացման խթանումը որպես այլ նպատակների իրականացման պայման լավ արտացոլված չէր:
- **Կայուն զարգացման նպատակներ (2015թ., ԿՁՆ-ներ)**
«Վերափոխելով մեր աշխարհը. 2030 թվականը կայուն զարգացման օրակարգ» վերնագրով փաստաթուղթը ներկայացնում է սովից, հիվանդությունից և ցանկությունից գերծ աշխարհի վերափոխման տեսլական, առանց վախի և բռնություն, ունիվերսալ գրագիտություն ունեցող աշխարհ, բոլոր մակարդակներում որակյալ կրթության հավասար, ունիվերսալ հասանելիություն ունեցող աշխարհ, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում և ապահովված գենդերային հավասարություն. **Նպատակ 5. Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին** (ինչպես նաև ԿՁՆ 5.գ.1 - Երկրների համամասնությունը, որոնք կիրառում են գենդերային հավասարությանը և կանանց զորացմանը հետևելու և հանրային հատկացումներ կատարելու համակարգեր):

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ



- Եվրոպայի խորհուրդն իր հռչակագրերում բազմիցս հայտարարել է, որ կանանց և տղամարդկանց հավասարությունը ոչ միայն մարդու իրավունքների սկզբունք է, այլև ժողովրդավարության անհրաժեշտ պայման (sine qua non սկզբունք), բազմակարծություն ապահովող ժողովրդավարության հիմնարար չափանիշ և սոցիալական արդարության հրամայական:
- › Այնուհետև այն ամրագրում է, որ «գենդերային հավասարությունը նշանակում է ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց հավասար տեսանելիություն, հզորացում, պատասխանատվություն և մասնակցություն հասարակական և մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում» և պահանջում է համակարգված ջանքեր՝ սեքսիզմի և գենդերային կարծրատիպերի դեմ պայքարելու համար.
- › «Հռչակագիր կանանց և տղամարդկանց հավասարության մասին» (Նախարարների կոմիտե, 1988 թ. նոյեմբերի 16).
- › «Հռչակագիր տղամարդկանց և կանանց հավասարության՝ որպես ժողովրդավարության գլխավոր չափանիշի մասին» (Եվրոպայի Նախարարների 4-րդ համաժողով կանանց և տղամարդկանց

- ՝ հավասարության վերաբերյալ, Ստամբուլ, 1997 թ. նոյեմբերի 13-14) գենդերային հավասարություն. Հիմնարար խնդիր փոփոխվող հասարակություններում. Հռչակագիր և գործողությունների ծրագիր (ընդունվել է Կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ Եվրոպայի նախարարների 5-րդ համաժողովում (Սկոպիե, 2003 թ. հունվարի 22-23).
- ՝ Հռչակագիր. «Գենդերային հավասարությունն իրականություն դարձնելը» (Նախարարների կոմիտեի 119-րդ նստաշրջան, Մադրիդ, 2009 թ. մայիսի 12):
- ՝ ԵԽԽՎ բանաձևեր.
- ՝ ԵԽ Նախարարների կոմիտեի եզրակացություններ.
- ՝ Քանի որ կանանց նկատմամբ բռնությունը կանանց նկատմամբ խտրականություն է և գենդերային հավասարության հիմնական խոչընդոտներից մեկը, Եվրոպայի խորհուրդն ընդունել է Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիան (2011 թ.).
- ՝ ԵԱՀԿ մանդատը ներառում է աջակցություն գենդերային հավասարության խթանմանը. Ստամբուլի գազաթափողովի հռչակագիր, գենդերային հավասարության խթանման ԵԱՀԿ գործողությունների ծրագիր.
- ՝ Կանանց և տղամարդկանց հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքի վերաբերյալ Հռոմի պայմանագրի ընդունմանը հաջորդած տարիներին Եվրոպական միությունը ստեղծել է օրենսդրական հիմք՝ գենդերային հավասարության սկզբունքը լիարժեքորեն իրականացնելու համար:

Օ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՆ

Տեղական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարության եվրոպական խարտիան, որն ընդունվել է Եվրոպական քաղաքապետարանների և շրջանների խորհրդի կողմից՝ «ձեռնարկելու կոնկրետ գործողություններ՝ ի նպաստ կանանց և տղամարդկանց հավասարության»,

- Փարիզի տեղական և տարածքային կառավարությունների զլոբալ օրակարգը տեղական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարության համար, ինչպես նաև՝
- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան՝ ապահովելու գործառույթների թափանցիկություն և հրապարակայնություն տեղական մակարդակում կանանց քաղաքական մասնակցությունը մեծացնելու նպատակով,
- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրություն տեղական ինքնակառավարման

մարմինների գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ, որը պահանջում է, որ մասնակից պետություններն ապահովեն «միջոցներ՝ բավարարելու այն կատեգորիաների անձանց կարիքները, որոնք մասնակցության հարցում բախվել են որոշակի խոչընդոտների» (Հոդված 1.2.ii.c) և Արևելյան գործընկերության շրջանակը՝ կանանց քաղաքական գործունեության մեջ ներգրավելու միջոցառումներով:

ԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ



- Սեռերի հավասարության սկզբունքը ձևակերպված է **ՀՀ Սահմանադրության մեջ**՝ որպես սեռի հիմքով խտրականության արգելք: 2015 թ. դեկտեմբերին կատարված փոփոխությունները ներառում են կարևոր հոդվածներ և դրույթներ, ինչպիսիք են.

- Ընդհանուր հավասարություն օրենքի առջև (հոդված 28),
- Խտրականության արգելք (հոդված 29), և
- Կանանց ու տղամարդկանց իրավունքների հավասարություն (հոդված 30):

Այնուամենայնիվ, խտրականության de jure արգելքը չի նշանակում, որ խտրականությունը de facto բացակայում է: Հիմնական խնդիրը դրսևորվում է որպես Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներից օգտվելու հնարավորությունների բացակայություն:

- **ՀՀ Գեներային քաղաքականության հայեցակարգ (2010 թ.):** ՀՀ Գեներային քաղաքականության հայեցակարգը արտացոլում է գեներային հավասարության իրականացման վերջին միջազգային մոտեցումները՝ հիմնված հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների սկզբունքի վրա և հիմնավորում է գեներային ուղղորդման ներառումը օրենսդրական պրակտիկայում և հասարակական կյանքի ու պետական քաղաքականության ընդհանուր համատեքստում:

Գեներային քաղաքականության հայեցակարգը կոչված է նպաստելու հասարակական- քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտների և կառավարման բոլոր մակարդակների քաղաքականության մեջ գեներային չափման՝ որպես հասարակության կայուն, ժողովրդավարական զարգացման և ժողովրդավարական, բաց, սոցիալապես արդար քաղաքացիական հասարակության ու իրավական պետության կայացման ապահովման միջոցի ներառմանը:

Գեներային քաղաքականության հայեցակարգի հիմնական նպատակներն են.

- գեներային հավասարության ձեռքբերում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ հանուն հասարակության կայուն

զարգացման և ժողովրդավարական վերափոխումների ապահովման,

- որոշումների ընդունման բոլոր մակարդակներում կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածության ապահովում,
- սեռի հատկանիշով խտրականության բոլոր ձևերի հաղթահարում,
- աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և տնտեսական ռեսուրսների հավասար մատչելիության ստեղծում,
- հասարակության մեջ ժողովրդավարական քաղաքական մշակույթի և հանդուրժողական գենդերային երկխոսության ձևավորում:

- **«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (2013 թ.)**
Օրենքը կարգավորում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը քաղաքականության, պետական կառավարման, աշխատանքի և զբաղվածության, ձեռնարկատիրության, առողջապահության, կրթության և այլ ոլորտներում:
Այն ներմուծում է «գենդերային խտրականություն» հասկացությունը, արգելում է սեռի հիմքով խտրական վերաբերմունքը, օրենսդրության մեջ մտցնում ուղղակի և անուղղակի խտրականության հասկացությունները, նպաստում է գենդերային հավասարության մշակույթի զարգացմանը և գենդերային կարծրատիպերի վերացմանը, որոնք բխում են խտրական պրակտիկայից, պնդում է գենդերային հավասարության ազգային մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունը և այլն:
- **Կանանց իրավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 1998-2000 թթ.** Ազգային ծրագիր.
Անկախացումից հետո ընդունված կանանց հիմնահարցերի վերաբերյալ գործողությունների առաջին ազգային ծրագիրն է:
- **Կանանց իրավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ.** ազգային ծրագիր
- **Կանանց իրավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2008- 2012 թթ.** ազգային ծրագիր
- **ՀՀ Գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների 2011-2015 թթ.** ծրագիր
- **Գենդերային բռնության դեմ պայքարի գործողությունների 2011-2015 թթ.** ազգային ծրագիր
- **Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թվականների ծրագիր**

Այս ժամանակահատվածի համար սա միակ ազգային փաստաթուղթն էր, որում ներառված Աշխատանքի և սոցիալական քաղաքականության մասին գլուխը պարունակում էր կանանց կողմից ընտանեկան և աշխատանքային պարտականությունները համատեղելու պայմանների ստեղծման հատուկ դրույթներ, ինչպես նաև՝ «2018-2021 թվականների ընթացքում սահմանել ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրվող համալիր ծառայությունների չափանիշները և ընդլայնել այդ ծառայությունների ցանցը» դրույթը:

○ **Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշում**

ՀՀ կառավարությունը սեպտեմբերի 19-ին կայացած նիստում որոշում է ընդունել «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»: Այդ մասին հայտնում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ ներկայացնելով ընդունված ծրագրի գերակայությունները: Ռազմավարությունը մշակվել է ի կատարումն Կառավարության միջոցառումների ծրագրի, և ապահովում է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները:

Նախագծով սահմանվում են գենդերային քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, որոնց նպատակը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծումն է՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները:

Ռազմավարության շրջանակում կարևորվել են 5 գերակա ուղղություններ.

- Կանանց առաջինադասման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար մասնակցություն կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում:
- Սոցիալ-տնտեսական ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնում:
- Կանանց և տղամարդկանց լիարժեք ու արդյունավետ մասնակցության և հավասար հնարավորությունների ընդլայնում կրթության ու գիտության ոլորտում:
- Առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընդլայնում:
- Գենդերային խտրականության կանխարգելում:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

- 1 Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (ԿՆԽՎԿ, 1979 թ.)**

ԿՆԽՎԿ-ի ներքո կառավարությունների ստանձնած պարտավորությունները ներառում են կանանց հասարակական կյանքին մասնակցությանը խոչընդոտների վերացումը և կապված են բյուջեի եկամուտների, ծախսերի ինչպես նաև բյուջեի շուրջ որոշումների կայացման գործընթացների հետ:
- 2 Պեկինյան գործողությունների ծրագիր (1995 թ.)**

Անդրադառնում է «գենդերային հեռանկարի ինտեգրմանը քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ բյուջետային որոշումների կայացման մեջ, ինչպես նաև կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովման հատուկ ծրագրերի պատշաճ ֆինանսավորմանը» (ՊԳԾ Հավելված II, գլուխ VI, պարբ. 345):
- 3 Ադիս Աբեբայի Չարգացման ֆինանսավորման երրորդ միջազգային համաժողովի գործողությունների օրակարգը (ՄԱԿ, 2015 թ.)**

Այս փաստաթուղթը ազամ լինելով ֆինանսական համաժողովի արդյունք ընդգծում է գենդերային ուղղորդման և ազգային վերահսկման մեխանիզմների անհրաժեշտությունը «Մենք վերահաստատում ենք, որ գենդերային հավասարության հասնելը, բոլոր կանանց և աղջիկներին հզորացնելը և նրանց մարդու իրավունքների լիարժեք իրացումը անհրաժեշտ են կայուն, ներառական և արդար տնտեսական աճի և կայուն զարգացման համար: Մենք կրկին պնդում ենք գենդերային ուղղորդման անհրաժեշտությունը, ներառյալ նպատակային գործողությունները և ներդրումները բոլոր ֆինանսական, տնտեսական, բնապահպանական և սոցիալական քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացներում»: (A / RES / 69/313, պարբ. 6)

«Մենք կուժեղացնենք ազգային վերահսկման մեխանիզմները, ինչպիսիք են բարձրագույն աուդիտորական հաստատությունները, ինչպես նաև անկախ վերահսկողության հաստատությունները, ըստ անհրաժեշտության: Մենք կբարձրացնենք թափանցիկությունը և հավասար մասնակցությունը բյուջետավարման գործընթացին և կնպաստենք գենդերազգային բյուջետավարմանն ու վերահսկմանը: Մենք կստեղծենք պետական գնումների թափանցիկ շրջանակներ՝ որպես կայուն զարգացումն ամրապնդելու ռազմավարական գործիք»: (A / RES / 69/313, պարբ. 30)
- 4 «2030 թվականի կայուն զարգացման օրակարգ» (2015 թ.)**

Պարտավորեցնում է կառավարություններին՝ ապահովել «ներդրումների զգալի աճ՝ գենդերային բացը փակելու և ուժեղացնելու գենդերային հավասարության և կանանց հզորացման ինստիտուտների աջակցությունը գլոբալ, տարածաշրջանային և ազգային մակարդակներում» (A / RES / 70/1, կետ 20)
- 5 Տեղական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարության Եվրոպական խարտիա (Ինսբրուկ, 2006 թ.)**

«Գենդերային հեռանկարի ինտեգրումը տեղական և տարածքային կառավարման բոլոր գործողություններին անհրաժեշտ է կանանց և տղամարդկանց հավասարության զարգացման համար: Գենդերային առանձնահատկությունները պետք է հաշվի առնել տեղական բնակչության առօրյա կյանքի վրա ազդող քաղաքա-

կանության, մեթոդների և գործիքների մշակման գործում, օրինակ՝ «գենդերային ուղղորդման» և «գենդերային բյուջետավարման» միջոցով: Այդ նպատակով, տեղական կյանքի կանանց փորձը, ներառյալ նրանց ապրելու և աշխատանքային պայմանները, պետք է վերլուծել և հաշվի առնել»: (Մաս I, Սկզբունք 5)

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԳԶԲ-ն ներառում է բոլոր այն պլանավորումները, ծրագրավորումները և բյուջետավորումը, որոնք նպաստում են գենդերային հավասարության խթանմանը և կանանց իրավունքների իրականացմանը: ԳԶԲ-ն այն մեխանիզմն է, որով կառավարությունները, օրենսդիրների, քաղաքացիական հասարակության խմբերի, դոնորների և զարգացման այլ գործակալությունների հետ համագործակցելով, կարող են գենդերային վերլուծությունը ներառել ֆինկալ քաղաքականությունների և բյուջեների մեջ: ԳԶԲ-ն կանանց համար առանձին բյուջե չէ, այլ փորձ տարանջատելու ծախսերն ու եկամուտները ըստ կանանց և տղամարդկանց վրա դրանց ունեցած տարբեր ազդեցությունների:

ԳԶԲ-ի համակարգված ինտեգրումը պլանավորման և բյուջետավորման գործընթացներում նշանակում է.



- գենդերազգային ռազմավարական նպատակների ներդրում քաղաքականությունների և բյուջեների մեջ,
- բյուջետային ծրագրերի գենդերային վերլուծության համար պահանջների սահմանում,
- գենդերային ցուցանիշների ներառումը բյուջետային հայտերում և
- գենդերային հավասարության վրա բյուջետային միջոցների ազդեցության մասին հաշվետվությունների տրամադրում:

Այսպիսով, մենք պետք է ողջունենք այնպիսի միջավայրի ստեղծումը, որտեղ կանայք և տղամարդիկ կունենան հավասար հնարավորություններ և հավասարապես կօգտվեն պետական միջոցներից և ծառայություններից:

Գենդերազգային բյուջետավարումը ճանաչում է, որ բյուջեները չեզոք չեն:

Քաղաքականությունները և դրանց ֆինանսավորումը և անհավասար ազդեցությունն ունեն կանանց և տղամարդկանց, ինչպես նաև կանանց և տղամարդկանց տարբեր խմբերի (երիտասարդ, ծեր, քաղաքային, գյուղական և այլն) վրա:

Կանայք և տղամարդիկ ունեն տարբեր դերեր և պատասխանատվություններ նաև տնտեսության մեջ, հետևաբար նրանց հատկացված բյուջեները ևս տարբեր են:

Սա ամենևին չի նշանակում առանձին բյուջեներ կանանց կամ տղամարդկանց համար և բոլորովին պարտադիր չէ, որ այն նպատակաուղղված լինի ավելացնելու կանանց վրա

ծախսված գումարները: Բայց կարող է ներառել ծախսերի ավելացում հատուկ ոլորտներում, որոնք օգուտ են բերում կանանց և աղջիկներին և նվազեցնում անհավասարությունը, օրինակ՝ կրթության և զբաղվածության ոլորտներում:

Գենդերազգայուն բյուջետավարումը (ԳԶԲ) բյուջետային գործընթացում գենդերային ուղղորդման կիրառումն է:² Դա նշանակում է բյուջեի գենդերային գնահատում՝ ներառելով գենդերային հեռանկարը բյուջետային գործընթացի բոլոր մակարդակներում, և եկամուտների ու ծախսերի վերադասավորում գենդերային հավասարության խթանման նպատակով: (Եվրոպայի խորհուրդ, 2009)

Գենդերազգայուն բյուջեն ապահովում է, որ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անհատների կարիքներն ու հետաքրքրությունները հասցեագրվեն:

Գենդերազգայուն բյուջետավարումը ռազմավարություն է գենդերային հավասարության և գենդերային ուղղորդման նպատակին հասնելու համար: ԳԶԲ-ն հետևողական է եկամուտների հավաքագրմանը և ուշադիր պետական գումարների ծախսմանը: ԳԶԲ-ի սկզբունքներն են թափանցիկությունը, արդյունավետությունը և հաշվետվողականությունը:

Գենդերազգայուն բյուջետավարումը սոցիալական վերափոխման և անհավասարության վերացման հզոր գործիք է: Այն ունի փուլեր՝ նախ բյուջեի գենդերային տարբերակված ազդեցությունների վերլուծություն, այնուհետև բյուջետային որոշումների կայացումն և կանանց և տղամարդկանց տարբերակվող պահանջներին համապատասխան առաջնահերթությունների որոշում և վերջում իրականացում և ազդեցության մշտադիտարկում:



Ինչու՞ է ԳԶԲ-ն կարևոր

Գենդերազգայուն բյուջետավարումը օգնում է կառավարություններին.

- Իրականացնել իրենց միջազգային պարտավորությունները:
- Բյուջեները դարձնել ավելի ուժեղ գործիք գենդերային հավասարության վերաբերյալ քաղաքականության իրականացման և հասարակության մեջ խտրականության վերացման համար:
- Բարձրացնել պլանավորողների և քաղաքականություն մշակողների իրազեկվածությունն ու գիտակցությունը այն մասին, թե ինչպես են բյուջեները և քաղաքականությունները տարբերակված ձևով ազդում կանանց և տղամարդկանց վրա:
- Խթանել ավելի մեծ պատասխանատվություն պետական ռեսուրսների օգտագործման համար:
- Արդյունավետ օգտագործել պետական ռեսուրսները. Գենդերային անհավասարությունը կարող է հանգեցնել տնտեսական և մարդկային զարգացման մեծ կորուստների:
- Ապահովել թափանցիկությունը՝ բյուջեն բոլորի համար ավելի հասկանալի դարձնելով և խրախուսելով հասարակության ավելի մեծ մասնակցությունը:

² Աղբյուր. Վերամշակված է Ասիայում և Խաղաղ օվկիանոսում գենդերազգայուն բյուջետավարում. հիմնական հասկացությունները եւ լավ պրակտիկաները, գրքից ՄԱԿ-ը 2018 թ.

ԳԶԲ ներդրած երկրներում առկա փորձը տարբեր է: Պետք է արձանագրենք, որ գոյություն ունի **գենդերային բյուջետավարման համակարգերի երեք դասակարգում**.

1 **Գենդերաիրազեկ ռեսուրսների բաշխում**, ինչի միջոցով քաղաքականության և (կամ) միջոցների հատկացումները մասին որոշումները հաշվի են առնում որոշումների ազդեցությունը գենդերային հավասարության վրա:

2 **Գենդերային առումով գնահատված բյուջեները**, որտեղ բյուջեի ազդեցությունը, որպես ամբողջություն, ենթակա է նաև գենդերային վերլուծության:

3 **Կարիքների վրա հիմնված գենդերային բյուջե**, որտեղ բյուջեի վերաբերյալ որոշումները հիմնավորված են գենդերային կարիքների նախնական գնահատմանը: Սա հնարավորություն է տալիս պատկերացում ունենալ գենդերային անհավասարությունների մասին և կարևորում է քաղականության այն հատկերը, որտեղ գենդերային անհավասարությունը ամենախորն է:

Կատեգորիաները աստիճանաբար փոփոխվում են, քանի որ գենդերային գնահատված բյուջե ունեցողներն ընդհանուր առմամբ իրականացնում են գենդերային **ինֆորմացված ռեսուրսների բաշխում**, իսկ կարիքները գենդերային բյուջե մշակող երկրները նույնպես ընդհանուր առմամբ ունեն գենդերային գնահատմամբ բյուջեներ:

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ. ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գոյություն ունեն գենդերազգայուն բյուջետավարման մի քանի փուլեր.

1 : EX ANTE ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՆԱՎԱՐՈՒՄ

- ▷ **Ex ante գենդերային ազդեցության գնահատում**. Առանձին բյուջետային միջոցառումների գնահատում նախքան նրանց ներառումը բյուջեի մեջ, հատկապես գենդերային հավասարության վրա նրանց ազդեցության տեսակետից:
- ▷ **Գենդերային բյուջեի ելակետային վերլուծություն**. Պարբերաբար իրականացվող վերլուծություն՝ գնահատելու, թե ինչպես են կառավարության ծախսերը և եկամուտների առկա հատկացումները նպաստում (կամ խոչընդոտում) գենդերային հավասարությանը:
- ▷ **Կարիքների գենդերային գնահատում**. Որակական գնահատում, որը ներառում է շահագրգիռ կողմերի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների տեսակետները ու կարծիքները այն բանի վերաբերյալ, թե ինչ չափով են կառավարության քաղաքականությունները և ծրագրերը համապատասխանում գենդերային հավասարության կարիքներին:

2 : ԸՆԹԱՑԻԿ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄ

- › **Գենդերային ասպեկտները կատարողականի համատեքստում.** Պահանջ է ներկայացվում, որ բյուջեի իրականացման խնդիրները կապված լինեն գենդերային զգայուն քաղաքականությունների հետ:
- › **Գենդերային ասպեկտները պաշարների բաշխման հարցում.** Պահանջ է ներկայացվում, որ ընդհանուր բյուջետային ռեսուրսներից նվազագույն չափաբաժին հատկացված լինի գենդերային զգայուն քաղաքականությունների իրականացման համար:
- › **Գենդերային բյուջեի ազդեցության ոլորտների վերլուծություն.** Տարեկան բյուջեն պաշտոնապես գնահատվում է բյուջեի համար պատասխանատու մարմնի կողմից՝ չափելու բյուջեի ընդհանուր ներգործությունը գենդերային հավասարության խթանման գործընթացին:

3 : EX POST ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄ

- › **Ex post գենդերային ազդեցության գնահատում.** Առանձին բյուջետային միջոցառումների գնահատումը նրանց ներդրումից/կատարումից հետո, հատկապես գենդերային հավասարության վրա նրանց ազդեցության տեսակետից:
- › **Բյուջեի գենդերային աուդիտ.** Անկախ, օբյեկտիվ վերլուծություն, որն իրականացնում է բյուջեի համար պատասխանատու մարմնից տարբեր իրավասու մարմինը՝ բացահայտելու, թե որքան արդյունավետ է խթանվել գենդերային հավասարությունը և/կամ ինչ չափով է այն ապահովված եղել **տարեկան բյուջեով** նախատեսված քաղաքականություններում:
- › **Ծախսերի վերանայման գենդերային ասպեկտները.** Արդեն իսկ կատարված ծախսերի վերլուծությունը ազգային մակարդակում, որտեղ գենդերը սովորաբար դիտարկվում է որպես վերլուծության հստակ հարթություն:



Գենդերազգայուն բյուջետավարմանը նպաստող միջավայրը. Անհրաժեշտ է ապահովել





ԳՁԲ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՐ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ԳՁԲ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՊԼԱՆԱԿՈՐՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱԿԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ



ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԵՎ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՉ

> ԳԵՆԴԵՐԱՉԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵ. ՀԻՆԳ ՔԱՅԼՈՎ ՄՈՏԵՑՈՒՄ³



Քայլ 1

Կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների իրավիճակի վերլուծություն

Նպատակ.

Տրամադրել որոշակի ոլորտում կանանց և տղամարդկանց համեմատական իրավիճակը ցույց տվող ապացույցներ՝ հիմնվելով սեռի սկզբունքով տարանջատված տվյալների վրա:

- **Ինչու՞ է սա կարևոր.**
 - Բացահայտել և ավելի լավ արձագանքել հետաքրքրող ոլորտում տղամարդկանց և կանանց տարբեր կարիքներին, հետաքրքրություններին և առաջնահերթություններին:
 - Հաշվի առնել, թե ինչպես է սեռի հիմքով խտրականությունը հատվում խտրականության մյուս հիմքերի հետ՝ ռասա, էթնիկ պատկանելիություն, տարիք, գյուղական/քաղաքային բնակություն և այլն:
- **Ո՞րն է Քայլ 1-ի արդյունքը.**
 - Բացահայտել որոշակի ոլորտում սեռով տարանջատված տվյալների առկայության բացերը,
 - Մշակել սեռով տարանջատված տվյալների հիման վրա իրավիճակի վերլուծության հաշվետվություն՝ կոնկրետ ոլորտների գենդերային բացերը և անհավասարությունները բացահայտելու համար
- **Այս Քայլի ավարտին Դուք կունենաք՝**
իրավիճակի վերլուծության զեկույց

³ Աղբյուրը. «Գենդերագայուն բյուջետավարում. Բյուջետային ծրագրերի վերլուծությունը գենդերային տեսանկյունից», «ՄԱԿ-ԿԱՆԱՅԸ», 2017 թ.



Քայլ 2

Քննհատել գենդերային զգայուն քաղաքականությունների ազդեցությունը

Նպատակ.

Քննհատել, թե արդյոք հնարավոր է որոշակի քաղաքականության կամ ծրագրի միջոցով նպաստել Քայլ 1-ում նկարագրված գենդերային իրավիճակի բարելավմանը:

○ Ինչու՞ է սա կարևոր.

- Առանձնացնել գենդերային բացերը և ինչպես են դրանք կարգավորվում ընդհանուր գենդերային և ոլորտին հատուկ քաղաքականության կողմից,
- Պնդել, թե որ ուղենիշային քաղաքականությունները պետք է դիտարկվեն գենդերային տեսանկյունից և որոշել, թե արդյոք կա հակասություն գենդերային քաղաքականության հետ՝

○ Ո՞րն է Քայլ 2-ի արդյունքը.

- Գենդերային տեսանկյունից ավելի խորը դիտարկելիս, վերլուծությունը կարող է ցույց տալ.
- Այն մարտահրավերներն ու խոչընդոտները, որոնց հանդիպում են կանայք և տղամարդիկ որոշակի քաղաքականությունից/ծրագրից օգտվելիս
- Ինչ աստիճանով է քաղաքականությունը/ծրագիրը արձագանքել Քայլ 1-ում բացահայտված՝ կանանց և տղամարդկանց կարիքներին
- Առաջարկել փոփոխություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքականության/ ծրագրի կողմից վերոնշյալ վերլուծության հիման վրա

○ Այս քայլի ավարտին Դուք կունենաք՝

Քննհատման զեկույց առ այն, թե արդյոք որոշակի քաղաքականություն կամ ծրագիր կարող է հանգեցնել գենդերային անհավասարությունների աճին



Քայլ 3

Բյուջետային հատկացումների գնահատում

Բյուջետային գնահատում, որը ցույց է տալիս, թե արդյոք բյուջետային հատկացումները համապատասխան են հետաքրքրող գենդերային քաղաքականությունն իրականացնելու:

Նպատակ.

Պարզել, թե արդյոք բյուջետային հատկացումները բավարար և համապատասխան են հետաքրքրող գենդերային քաղաքականությունն իրականացնելու համար:

- **Ինչու՞ է սա կարևոր.**
 - Հնրավորություն է տրվում կենտրոնանալ բյուջեի վրա և վերլուծել այն
 - Եթե Զայլ 2-ով բացահայտվել է, որ քաղաքականությունը գենդերային զգայուն չէ, պարզել, թե որքանով են միջոցների հատկացումներն անհամապատասխան
- **Այս քայլի ավարտին Դուք կունենաք՝**
Բյուջետային գնահատում, որը ցույց է տալիս, թե արդյոք բյուջետային հատկացումները համապատասխան են հետաքրքրող գենդերային քաղաքականությունն իրականացնելու համար



Քայլ 4

Ծախսի ու ծառայության մատուցման մոնիթորինգ

Նպատակ.

Վերահսկել ծախսերը՝ բյուջեի գենդերային վերլուծության համար տարբեր տիպի, նախընտրելի է սեռի սկզբունքով տարանջատված տվյալներ ձեռք բերելու միջոցով:

- **Ինչպիսի տվյալներ են անհրաժեշտ.**
 - Պետք է հաշվի առնել երեք տիպի տվյալներ: Ամենայն հավանականությամբ, դրանք տարանջատված չեն լինի սեռի սկզբունքով կամ որևէ այլ կերպ:
 - Բյուջեի գենդերային վերլուծության համար անհրաժեշտ տվյալների տեսակները կարելի է բաժանել երեք կատեգորիաների.
 - Ներդրումները չափում են, թե ինչ է դրվում գործընթացում (օրինակ, վերլուծության ենթակա ծրագրի համար բյուջետավարկած գումարի չափը կամ նախատեսված անձնակազմը)
 - Արդյունքները չափում են վերլուծության ենթակա ծրագրի ուղղակի արտադրանքը (օրինակ, բժշկական ծառայություն ստացող շահառուների քանակը կամ կառուցված բուժհաստատությունների քանակը):
 - Վերջնարդյունքը չափում է վերլուծության ենթակա քաղաքականության կամ ծրագրի արդյունքները (օրինակ, առողջության, կրթության մակարդակի բարելավում և ժամանակի առկայություն):
 - Պահանջ, թե արդյոք առկա են արդյունքի ցուցանիշները: Այն դեպքում, երբ արդյունքի ցուցանիշները բացակայում են, հնարավոր է, որ կառավարությունները կամ արտակառավարական վերլուծողները նույնպես հետաքրքրված լինեն մշակելու գենդերային բյուջեների մի շարք խաչաձև ցուցանիշներ:




Քայլ 5 Վերջնարդյունքների գնահատում

Նպատակ.

Գնահատել քաղաքականությունը կամ ծրագիրը իր վերջնարդյունքների հիման վրա:

- **Ինչու՞ է սա կարևոր.**
Չետաքրքրող քաղաքականության կամ ծրագրի ազդեցությունը ներդրումների և արդյունքների վրա կլինի ավելի արագ, քան վերջնարդյունքների վրա: Սովորաբար շատ դժվար է նաև տվյալ վերջնարդյունքը վերագրել կոնկրետ, կամ որևէ մեկ քաղաքականության/ծրագրի, և հետևաբար, վերջնարդյունքների գնահատումը շատ տեղին է դառնում:
- **Ինչպե՞ս կարելի է սա անել.**
Մեթոդները տարբերվում են երկրից երկիր և ստեղծված են յուրաքանչյուր դեպքի համար: Անհրաժեշտ է ստեղծել գնահատման համակարգ, որը կարձանագրի, թե երբ է կատարվել վերջին գնահատումը, երբ կիրականացվի հաջորդը և որոնք են հաջորդ վերանայման հիմնական չափանիշները:
- **Այս քայլի ավարտին Դուք կունենաք՝**
Քաղաքականության կամ ծրագրի գնահատման զեկույց՝ իր վերջնարդյունքների հիման վրա



> ԲՅՈՒՋԵԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ⁴



- Գենդերազգային բյուջետավարման գործընթացը սկսվում է գենդերային վերլուծությունից, որը բաղկացած է բյուջեների և քաղաքականությունների գենդերային տեսանկյունից համակցված վերլուծությունից:
- Բյուջեի գենդերային վերլուծության նպատակն է բավարար հիմք ստեղծել հետագա գործողությունների համար, որոնք միտված են բարելավելու գենդերային հավասարության հետ կապված իրավիճակը տարբեր սեկտորներում, ծրագրերում կամ քաղաքականություններում:
- Գենդերազգային վերլուծությունը պետք է ապահովել, որևէ քաղաքականության մշակման ժամանակ պատշաճ անդրադարձ արվի տարբեր սոցիալական իրավիճակներում գտնվող կանանց ու տղամարդկանց կարիքներին և շահերին, առաջնահերթություններին և մարտահրավերներին՝ պայմանավորված տարիքով, սոցիալական խմբով, էթնիկական պատկանելիությամբ, բնակավայրով և այլն:
- Գենդերազգային վերլուծության համար կարևոր ելակետ է կյանքի տարբեր բնագավառներում կանանց ու տղամարդկանց զանազան խմբերի և ու իրավիճակի ճիշտ ըմբռնումը:

Գենդերազգային բյուջեի վերլուծության հիմքում ընկած առանցքային հարցն է.

Ի՞նչ ազդեցություն ունեն բյուջետային միջոցառումները և քաղաքականությունները գենդերային հավասարության վրա: Արդյո՞ք նրանք կրճատում են գենդերային անհավասարությունները, խորացնում դրանք, թե թողնում անփոփոխ:

Բյուջեի գենդերային վերլուծության ներքո պետք է իրականացվի գործողությունների հետևյալ հաջորդականությունը.



1) Իրավիճակի վերլուծություն. Այն միտված է որոշակի ծրագրի թիրախ խմբերի վերաբերյալ լավ պատկերացում կազմելուն, նրանց իրավիճակի հնարավոր տարբերությունների, նրանց պրակտիկ և ռազմավարական կարիքների ու առաջնահերթությունների ըմբռնմանը և պարզելուն, թե արդյոք կան անհավասարություններ կանանց և տղամարդկանց (կամ կանանց ու տղամարդկանց ենթախմբերի) միջև, որոնք պետք է լուծվեն հանրային քաղաքականությամբ: **Թիրախ խմբերը** միջամտության ակնկալվող շահառուներն են: Թիրախ խմբերը կարող են լինել անձինք, որոնք պատկանում են որոշակի մասնագիտական կամ տարիքային խմբերին՝ գործազուրկները, անհատ ձեռներեցները, նվազագույն եկամուտից պակաս ստացողները, ուսանողները, ներդրումային ծրագրերի մասնակիցները, գործարարները և այլն: Ինչ վերաբերում է կարիքների վերհանմանը, կարևոր է տարբերակել գենդերային պրակտիկ կարիքները և ռազմավարական շահերը: **Գենդերային պրակտիկ կարիքները** այն կարիքներն են, որոնք կանանց և տղամարդիկ ունենում են՝ ելնելով հասարակության կողմից իրենց վերագրած սոցիալական դերերից: **Գենդերային ռազմավարական շահերը** կախված են կանանց և տղամարդկանց կյանքի սոցիալական, տնտեսական և քաղաքական պայմաններից: Միայն պրակտիկ կարիքները բավարարելուն միտված գործունեությունը չի տա կայուն արդյունքներ այնքան ժամանակ, մինչև որ հաշվի առնվեն ռազմավարական շահերը: Միայն պրակտիկ կարիքները բավարարելուն միտված գործողությունները կարող են նպաստել հասարակությունում կանանց և տղամարդկանց ոչ հավասար կարգավիճակի ամրապնդմանը: Իրենց հերթին, ռազմավարական շահերը չեն կարող բավարարվել առանց հաշվի առնելու պրակտիկ

⁴ Աղբյուր. Վերամշակված է «Գենդերազգային բյուջետավարում. Բյուջետային ծրագրերի վերլուծությունը գենդերային տեսանկյունից», «ՄԱԿ-ԿԱՆԱՅԸ», 2017 թ.

կարիքները: Թիրախ խմբի իրավիճակը վերլուծելու համար կարևոր է դիտարկել տարբեր աղբյուրներից հասանելի հնարավորին շատ տեղեկատվություն. **քանակական տվյալներ և որակական տեղեկատվություն, սեռով տարանջատված տվյալներ վիճակագրական ծառայությունից, հետազոտական գեկույցներից և այլ աղբյուրներից:**

2 **Ելակետային վերլուծություն. Պետական բյուջեից ֆինանսավորվելիք ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:** Այս քայլը կարող է շատ օգտակար լինել հետագա աշխատանքի համար՝ լավ պատկերացում կազմելու և վերլուծությունը դյուրացնելու ու խթանելու առումով:

3 **Ծրագրերի/գործունեության/ծառայությունների գենդերային վերլուծության իրականացում.** Հիմնվելով ծրագրի ընդհանուր նկարագրի, թիրախ խմբի իրավիճակի վերաբերյալ հավաքագրած տեղեկությունների և վերհանված գենդերային հիմնախնդիրների վրա, առաջարկվում է կատարել բյուջեից ֆինանսավորվող ծրագրի վերլուծություն՝ օգտագործելով տարբեր վերլուծական գործիքներ.

- Նախ պետք է գնահատել, թե ի՞նչ չափով են ծրագիրը, նրա խնդիրները և գործողությունները, անդրադառնում գենդերային անհավասարություններին, այնուհետև կանանց ու տղամարդկանց հնարավոր տարբեր կարիքներին և առաջնահերթություններին:
- Շահառուների և հանրային ծառայություններից օգտվողների վերլուծություն. Այս հատվածում վերլուծվում են ծրագրի շահառուները, որոշակի ծառայություններ ստացողների շարքում կանանց ու տղամարդկանց թիվը կամ ծրագրի գործողությունների շահառուները: Այն դեպքում, երբ ծրագիրը չունի անմիջական շահառուներ, քանի որ այն ներդրումային, սուբսիդիաների տրամադրման կամ որոշակի ենթակառուցվածքի կառուցման ծրագիր է, դիտարկվում են անուղղակի շահառուները՝ վերջնական արդյունքի օգտագործողները:
- Հանրային ծառայություններից կին ու տղամարդ օգտվողների բավարարվածության վերլուծություն. Որքանով են շահառուները բավարարված ծրագրերի/գործողությունների/ծառայությունների որակով և քանակով: Շահառուների կարծիքը ստանալու շատ մեթոդներից են հարցաթերթիկները, ֆոկլուս խմբերը և քաղաքացիների կողմից տրված միավորների քարտերը: Մասնակցային մեթոդները կարող են նաև օգնել վերլուծել, թե արդյո՞ք ծրագիրը/գործողությունները/առաջարկվող ծառայությունները բավարարում են կանանց ու տղամարդկանց տարբեր կարիքները և շահերը և թե արդյո՞ք կարիք կա տրամադրելու սեռով տարբերակված ծառայություններ՝ բավարարելու որոշակի կարիքները:
- Հանրային ծրագրերի /գործողությունների/ ծառայությունների իրականացման վերաբերյալ որոշումների կայացման վերլուծություն:
- Գենդերային հավասարության վրա հանրային գործունեության ազդեցությունների վերլուծություն:

4 **Համապատասխան բյուջետային հատկացումների գենդերային վերլուծության իրականացում.** այստեղ կարևոր է նախորդ փուլերում ձեռք բերված տվյալները համակցել հետևյալ վերլուծությունների տվյալների հետ՝

- Բյուջետային եկամտի վերլուծություն,
- Սեռով տարանջատված հանրային ծախսերի դեպքերի/ազդեցության ոլորտների վերլուծություն,

- Բյուջետային հատկացումների համապատասխանության գնահատում, և
- Աշխատակազմի ծախսերի գնահատում:

5) Գենդերային հավասարությունը բարելավելու նպատակով նպատակների և առաջարկների մշակում.

- Առաջարկների իրականացման համար պատասխանատու պաշտոնյաների/ հաստատությունների որոշում

6) Առաջարկների իրականացման ծախսերի հաշվարկում

7) Բյուջեի գենդերային վերլուծության արդյունքների փաստաթղթավորում

> ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԳԵՆԴԵՐԱԳԱՅՈՒՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ⁵

Այլընտրանքային «գործիքների» մի խումբ ևս կարող է օգտագործվել բյուջեների գենդերային վերլուծության համար.



Քաղաքականության գենդերաիրազեկ գնահատում

Այս վերլուծական մոտեցումը ուսումնասիրում է տարբեր և ծրագրեր և քաղաքականություններ վեր հանելու հնարավոր և բացահայտ գենդերային հիմնախնդիրները: Այս վերլուծությամբ հարցականի տակ է դրվում այն ենթադրությունը, որ քաղաքականությունները իրենց ազդեցությամբ «գենդերային տեսակետից չեզոք են» և փոխարենը առաջադրում է հետևյալ հարցը. ի՞նչ եղանակներով են քաղաքականությունները և դրանց իրականացման համար հատկացված միջոցները նվազեցնելու կամ խորացնելու գենդերային անհավասարությունները:



Շահառուների սեռով տարանջատված գնահատումներ

Այս հետազոտական տեխնիկան օգտագործվում է առկա և պոտենցիալ շահառուների շրջանում հարցում իրականացնելու, թե ի՞նչ չափով են կառավարության քաղաքականությունները և ծրագրերը համապատասխանում իրենց առաջնահերթություններին:



Ջանրային ոլորտների ծախսերի վերլուծություն ըստ սեռերի

Այս հետազոտական տեխնիկան սովորաբար համեմատում է տվյալ ծրագրի համար արված ծախսերը տնային տնտեսությունների հարցումների տվյալների հետ՝ բացահայտելու ծախսերի բաշխումը կանանց ու տղամարդկանց, աղջիկների ու տղաների միջև:

⁵ Աղբյուր. Բյուջետավարում կանանց իրավունքների համար. Կառավարական բյուջեների դիտազննումը Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիան համապատասխան, Դայան Էլսոն, 2006, ՅՈՒՆԻՖԵՄ



Հարկերի սեռով տարանջատված վերլուծություն

Այս վերլուծական տեխնիկան ուսումնասիրում է ուղղակի և անուղղակի հարկերը՝ հաշվարկելու, թե որքան հարկեր են վճարվում տարբեր անհատների /կանանց և տղամարդկանց/ կամ տնային տնտեսությունների կողմից:



Ժամանակի օգտագործման վրա բյուջեի ազդեցության սեռով տարանջատված վերլուծություն

Այն դիտարկում է ազգային բյուջեի և տնային տնտեսություններում ժամանակի օգտագործման եղանակի միջև հարաբերությունը: Սա ապահովում է, որ այն ժամանակը, որը կանայք ծախսում են չվճարվող աշխատանքի վրա, հաշվի առնվի քաղաքականության վերլուծության մեջ:



Գենդերազգայուն բյուջեի հաշվետվություն

Սա ենթադրում է բյուջեի հաշվետվությունների կազմման գործընթաց, որը կարող է օգտագործել վերոնշյալ վերլուծական գործիքներից ցանկացածը: Այս գործընթացը պատասխանատու կառույցներից պահանջում է հանձնառության և համակարգման բարձր մակարդակ: Նախարարությունները կամ գերատեսչությունները ստանձնում են իրենց համապատասխան բյուջեների գենդերային ազդեցության գնահատում և ներկայացնում են բյուջեի կատարման հաշվետվություն ըստ գենդերի:

> ԲՅՈՒՋԵԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ և ԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ

Բյուջեի վերլուծության մեկ այլ ձև է ստուգաթերթերի միջոցով միջազգային փաստաթղթերի և պայմանագրերի պահանջներին բավարարելու տեսանկյունից բյուջեի ուսումնասիրումը:

Այս ձևը թույլ է տալիս գնահատել կանանց և տղամարդկանց իրավունքների առումով միջազգային պարտավորությունների կատարման մակարդակը:



Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի Կոնվենցիա (CEDAW)

CEDAW- ն ունի 16 հոդված և 2 երաշխավորություն, և այս տեխնիկայի միջոցով բյուջեն կարող է վերլուծվել CEDAW- ի հոդվածների և երաշխավորություններին համապատասխան:



Օրինակ՝



Բյուջեի որոշ հարցեր

- Կա՞ խտրականության դեմ պայքարի օրենք: Եթե այո, ապա ինչ գումար է տրվում օրենքը կյանքի կոչելու համար: Օրինակ՝ կա՞ օմբուդսմենի համար հատկացված գումար, որի օգնությամբ մարդիկ կարող են խտրականության մեղադրանք առաջադրել:
- Գումար կա՞ այլ մարմինների համար, օրինակ՝ գեներային հանձնաժողովներ, որոնք խթանում են գեներային իրավունքները:
- Կա՞ գումար իրավական օգնության համար՝ մարդկանց օգնելու խտրականության դեպքերով դիմել դատարան:

Ենթաարդյունքների որոշ ցուցիչներ

- Զանի՞ խտրականության դեպք է բերվել օմբուդսմենին, և բողոքներից քանիսն են ներկայացվել կանանց կողմից, իսկ քանիսը՝ տղամարդկանց կողմից:
- Զանի՞ կին և տղամարդ ստացան իրավաբանական օգնություն՝ խտրականության դեպքերը դատարան ներկայացնելու համար: Իսկ ո՞րքան էր կազմում համապատասխանաբար կանանց և տղամարդկանց ստացած օգնության միջին գումարը:
- Ի՞նչ է «առաքվել» գեներային հանձնաժողովի կամ նմանատիպ մարմնի կողմից: Օրինակ՝ քանի՞ հետազոտական ծրագիր է ֆինանսավորել: Զանի՞ գործ է հարուցվել սահմանադրական կամ այլ դատարաններում: Իրազեկության բարձրացման քանի դասընթաց է անցկացվել, և քանի կին և տղամարդ է մասնակցել այդ դասընթացներին:



ՊԵԿԻՆՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ (BPfA) ևս մեկ փաստաթուղթ է, որը կարող է օգտագործվել բյուջեի վերլուծության նպատակներով:⁶ Փաստաթուղթը, որը Հայաստանի կողմից ստորագրվել է 1995 թ. պարունակում է մտահոգությունների 12 ոլորտ.

1. Կանանց վրա ծանրացած աղքատության բեռի պահպանումն ու մեծացումը:
2. Անհավասարությունը և անհամապատասխան հնարավորությունները կրթության և մասնագիտական պատրաստության ոլորտում և դրանց անհավասար մատչելիությունը:
3. Անհավասարությունը և անհամապատասխան հնարավորությունները առողջության պահպանման և հարակից ոլորտներում և համապատասխան ծառայությունների անհավասար մատչելիությունը:
4. Բռնությունը կանանց նկատմամբ:
5. Չինված և ուրիշ կոնֆլիկտների հետևանքները կանանց համար, մասնավորապես նրանց համար, ովքեր ապրում են օտարերկրյա օկուպացիայի պայմաններում:

⁶ Աղբյուր. Ըստ Պեկինյան գործողությունների ծրագրի հողվածների վերլուծություն կատարելու համար ստուգաթերթիկը ներկայացված է Հավելված 3-ում

6. Անհավասարությունը տնտեսական կառույցների և քաղաքականության շրջանակներում, արտադրական գործունեության բոլոր ձևերում և ռեսուրսների մատչելիության խնդրում:
7. Կանանց և տղամարդկանց անհավասարությունը իշխանության բաժանման և բոլոր մակարդակներում դիրեկտիվ որոշումների ընդունման ոլորտում:
8. Բոլոր մակարդակներում կանանց դրության բարելավման աջակցությանը ուղղված մեխանիզմների անկատարությունը:
9. Կանանց մարդու իրավունքների անբավարար հարգանքը և անհամապատասխան խրախուսումը:
10. Կանանց կարծրատիպերի ստեղծումը հաղորդակցության բոլոր համակարգերում և հատկապես զանգվածային լրատվության միջոցներում:
11. Կանայք և շրջակա միջավայրը:
12. Աղջիկների նկատմամբ պահպանվող խտրականությունը և նրանց իրավունքների խախտումը:

Առաջարկվում է նաև ստուգել պետական բյուջեն գենդերային հավասարությանն առնչվող ազգային փաստաթղթերի միջոցով:

Օրինակ 2019 թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարության որոշմամբ ընդունված **«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը»** կարևորել է 5 գերակա ուղղություններ.



- *Կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար մասնակցություն կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում:*
- *Սոցիալ-տնտեսական ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնում:*
- *Կանանց և տղամարդկանց լիարժեք ու արդյունավետ մասնակցության և հավասար հնարավորությունների ընդլայնում կրթության ու գիտության ոլորտում:*
- *Առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընդլայնում:*
- *Գենդերային խտրականության կանխարգելում:*

Գենդերային հավասարությանն ուղղված անկախության շրջանում մշակված նախորդ գործողությունների ազգային ծրագրերը և ռազմավարությունները, և բյուջետային հատկացումների բացակայության պատճառով կամ ամբողջովին ձախողվեցին կամ թերի իրականացվեցին: Արդի իրավիճակում կարևոր է ճիշտ «օգտագործել պահը». վերլուծել իրավիճակը, ստուգել վիճակագրությունը և պահանջել բյուջետային բավարար հատկացումներ՝ այս փաստաթուղթը արդյունավետ դարձնելու համար: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ ռազմավարության 5 գերակայությունները հանդիսանում են նաև միջազգային հիմնական փաստաթղթերի կետեր, խորհուրդ է տրվում օգտագործել CEDAW և BPfA փաստաթղթերի ստուգաթերթիկները այս ծրագրի իրականացմանն անհրաժեշտ հատկացումները ստուգելու համար:

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ


Բյուջետային համակարգը սահմանված և հաստատված է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով, որով կարգավորվում են երկրում բյուջետային գործընթացները: Այս օրենքն ընդունվել է 1997 թ.-ին և ընդարձակ փոփոխության է ենթարկվել հետագայում (տես՝ Հավելված 10):

Պետական ոլորտի բարեփոխումների ընթացքում երկրի բյուջետային համակարգը վերակազմավորվել է, և համայնքային բյուջեները դարձել են Հայաստանի Հանրապետության ֆինանսական և մասնավորապես բյուջետային համակարգի անբաժանելի բաղադրիչները:

Բյուջետային համակարգը կարևոր դեր է խաղում երկրի միասնական ֆինանսական համակարգում:



Հայաստանի բյուջետային համակարգը ներառում է.




Բյուջեի նախագիծը կազմվում է համաձայն ՀՀ կառավարության գործունեության, միջև-ժամկետ ծախսերի ծրագրի, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերի:

Պետական բյուջեն և համայնքների բյուջեն կազմում են Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեն, որի եկամուտներն ու ծախսերը արտացոլում են կազմող բաղադրիչների համախառն մուտքերն ու արտահոսքերը:



Պետական բյուջե



Համայնքների բյուջե



ՀՀ համախմբված բյուջե

ԵՐԿՈՒ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ (ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ) ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԵՆ, և դրանց արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը դրանց փոխհարաբերությունների հստակ կարգավորումն է: «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը սահմանում է բյուջետային հարաբերությունների կարգավորումը որպես իրավասու լիազորությունների սահմաններում պատշաճ կերպով լիազորված կառույցների գործունեություն. Բյուջետային համակարգի կառուցվածքը, դրա կառուցվածքը սահմանելը, բյուջեների միջև եկամուտների բաշխումը, բյուջեների կատարման, հաշվետվությունների ներկայացման և վերահսկման վերաբերյալ բյուջեի գործընթացները, բյուջեի ապահովումը: դասակարգման համակարգը, բյուջեներում փոփոխություններ և (կամ) լրացումներ մտցնել:

Պետության և համայնքների բյուջեների միջև փոխհարաբերությունների կարգավորման կարևոր դերը պատկանում է պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրվող հատկացումները, որոնք դասակարգվում են բաշխման նպատակներով առանձնացված հետևյալ խմբերի.



- Ֆինանսական համահարթեցման դոտացիաներ, որոնք համայնքների բյուջեներին հատկացվել են ֆինանսական հավասարեցման սկզբունքով՝ կրկնվող ծախսերը հոգալու համար: Այս հատկացումները կարող են ծախսվել ցանկացած ուղղությամբ (դրանք հայեցողական են):
- Այլ սուբսիդիաներ, որոնք հատկացվել են համայնքների բյուջեների ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը աջակցելու համար, դրանք կապված չեն համայնքի բյուջեի որևէ ծրագրի հետ:
- Սուբվենցիաներ հատկացվում են համայնքներում նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար:
- Համայնքների բյուջեները կարող են նաև ստանալ բյուջետային վարկեր և փոխառություններ: Բյուջետային վարկերը հատկացվում են համայնքի բյուջեի եկամուտների ժամանակավոր պակասը ծածկելու համար և, այդպիսով, դրանց վարչական բաղադրիչի համապատասխան ծախսերը ֆինանսավորելու համար են: Բյուջետային փոխառությունները այն ռեսուրսներն են, որոնք անհրաժեշտ են համայնքներում ենթակառուցվածքների զարգացման գործում ներդրումներ կատարելու համար, որոնք ներգրավվում են պայմանագրային հիմունքներով կամ համայնքային պարտատոմսերի թողարկումով:

Գենդերազգայուն բյուջետավարման գործընթացը կարող է սկսվել բյուջետային գործընթացի (ցիկլի) ցանկացած փուլում:



Բյուջետային գործընթացի (ցիկլի) չորս հիմնական փուլերն են՝

1

ՁԵՎԱԿԵՐԴՄԱՆ ՓՈՒԼ

- **Սահմանում.** մշակվում է բյուջետային պլան՝ կառավարության քաղաքականությանը և առաջնահերթություններին համապատասխան: **Գենդերազգային բյուջետավարման (ԳԶԲ) հնարավորություն.** այս փուլում տեղի ունեցող երկու ամենաբնորոշ ԳԶԲ միջամտության կետերն են կազմված բյուջեի շրջաբերականը և գենդերային բյուջեի զեկուցագիրը: Շրջաբերականը իրենից ներկայացնում է հրահանգներ կամ ուղեցույցեր նախարարությունների և պրոֆիլային գերատեսչությունների համար, որպեսզի նրանք ներառեն գենդերային ուղղորդումը բյուջետային գործընթացի մեջ: Գենդերային բյուջեի զեկուցագիրը, որը կարող է պարունակել քանաքական և որակական տեղեկություններ, ծառայում է որպես գենդերային հաշվետվողականության փաստաթուղթ ծրագրերի գենդերազգայունության վերաբերյալ զեկուցելու համար: Այս փուլի այլ մեխանիզմներից են գենդերային համակարգողների օգտագործումը, նախաբյուջետային խորհրդակցությունները գենդերային հիմնահարցերի վերաբերյալ, ինչպես նաև մասնակցային բյուջետավարումը:

2

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ

- **Սահմանում.** բյուջեն ներկայացվում է խորհրդարան քննարկման, ուղղումների և հաստատման համար:
- **ԳԶԲ հնարավորություն.** ներառում է բյուջեների վերլուծություն գենդերային տեսանկյունից, գենդերային մտավախությունների բարձրաձայնում Ազգային ժողովում և լրատվամիջոցների վրա ազդեցության գործադրում: Ավելին, գենդերազգային բյուջետավարում նախատեսող կոնկրետ դրույթի ներառումը երկրի սահմանդրական, իրավական և քաղաքականության շրջանակներում բյուջեի գենդերազգայունության ապահովման վճռորոշ գործիք է:

3

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ

- **Սահմանում.** հավանության արժանացած բյուջեն օգտագործվում է համապատասխան քաղաքականությունների և պլանների իրականացման համար, իսկ ծախսերը ու ակնկալվելիք արդյունքները պարբերաբար մշտադիտարկվում են:
- **ԳԶԲ հնարավորություն.** այս փուլում օգտակար է սեռով տարանջատված տվյալների հավաքագրումը՝ դիտազննելու գնումները, ծախսերը, ելքերը և արդյունքները, օրինակ՝ գնումների մշտադիտարկման, պետական ծախսերի հետևման ուսումնասիրության, սոցիալական աուդիտների և քաղաքացիների զեկույցային քարտերի (համայնքային մշտադիտարկում) միջոցով:

4


ԱՌԴԻՏԻՎ/ՎԵՐԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ

- **Սահմանում.** գնահատվում են բյուջեի և քաղաքականության արդյունքները, որպեսզի ապահովվի պետական ռեսուրսների արդյունավետ և հավասար, արդարացի օգտագործումը:
- **ԳԶԲ հնարավորություն.** ներառում է աուդիտը իրականացնողների զգայունացումը գենդերային նկատառումների վերաբերյալ, ինչպես նաև գենդերային աուդիտի կամ գենդերային ցուցիչի ներմուծում: Գենդերային աուդիտները հակված են լինել ավելի կայուն, երբ իրականացվում են որպես միջամտություն կառավարության կանոնավոր աուդիտորական գործընթացում:

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

- **Կառավարություն.** *Ձևակերպման փուլում* բյուջեն նախապատրաստում են պատասխանատու գործադիր մարմինները՝ Ֆինանսների նախարարության ղեկավարությամբ, որը սահմանում է այն շրջանակը, որով մնացած բոլոր նախարարությունները պետք է նախապատրաստեն բյուջեների նախագծեր իրենց գերատեսչությունների համար: Ֆինանսների նախարարությունը պատասխանատու է ընդհանուր բյուջեն դիտարկելու, եկամուտներն ու ծախսերի կողմերը համախմբելու և կառավարության ընդհանուր ծախսերի առավելագույնը սահմանելու համար: Եկամուտների մասով պետք է որոշումներ կայացվեն՝ հարկային դրույքաչափերի կառուցվածքը փոխելու և որևէ պետական ակտիվ վաճառելու մասին: Ծախսային կողմի համար մեծ գումարներ, ընդհանուր առմամբ, արդեն նախապես ստանձնված են կանոնադրական պարտավորությունների կատարման համար, ներառյալ պարտքերի սպասարկման պարտավորությունները: *Իրականացումը* նախարարների, պատասխանատուների և պետական հատվածի բոլոր մյուս աշխատակիցների համատեղ պարտականությունն է: Յուրաքանչյուր մակարդակում բյուջեի վերջնական պատասխանատվությունը կրում է համապատասխան գործադիր մարմինը, Ֆինանսների նախարարությունը՝ ընդհանուր պատասխանատվություն:
- **Համայնքներ.** Մասնակցում են *Նաև բյուջեի ձևավորման* և իրականացման փուլերին՝ իրենց առաջարկությունները տրամադրելով կենտրոնական կառավարություններին և *պատասխանատու են* դրանց կատարման համար:
- **Օրենսդիր.** *Հաստատման և ընդունման փուլում* սովորաբար բյուջեն ներկայացվում է խորհրդարանին քննարկման համար և ընդունվում է *պետական բյուջեի մասին օրենքը*: Բյուջեի մերժումը հաճախ դիտարկվում է որպես կառավարության անվստահության քվե, և որպես այդպիսին կարող է հանգեցնել քաղաքական մեծ փոփոխությունների:
- **Քաղաքացիական հասարակություն.** Մեծ ուշադրություն է դարձվում քաղաքացիական հասարակության մասնակցության վրա («քաղաքացիական ներգրավվածություն») բյուջետային գործընթացներին: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները յուրահատուկ դեր ունեն բյուջեի ձևավորման փուլում՝ նախարարների ուշադրությունը հրավիրելով իրենց ներկայացրած մարդկանց կարիքների վրա, և ընդունման փուլում՝ իրականացնելով լոբբինգային գործունեություն խորհրդարանի անդամների և խմբակցությունների հետ՝ մարդու իրավունքների համար (ներառյալ ԳԶԲ): *Պետական բյուջեի կատարման մոնիտորինգը* քաղաքացիական հասարակության հիմնական «հսկող» գործառույթներից մեկն է, որն անհրաժեշտ է ժողովրդավարացման գործընթացներին և գենդերային հավասարությանը: Կարելի է նաև տեսնել քաղաքացիական հասարակության մասնակցությունը *առևտրային և գնահատմանը*:
- **ԳԶԲ գործընթացի առումով հնարավոր է տեսնել նեև հետևյալ դերակատարների մասնակցությունը/ազդեցությունը.** Կառավարության այն գերատեսչությունները, որոնք պատասխանատու են միջազգային պարտավորությունների կատարման և հաշվետվությունների համար, միջազգային կառույցների հետ համագործակցող ՀԿ-ները, Գենդերային բյուջեի վերլուծաբանները, իրավապաշտպանները և մարդու իրավունքներին վերաբերող այլ կարևորագույն պայմանագրերի կատարմամբ մտահոգված անձինք:

ՄԱՍ 2



ՏԵՂԱԿԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ
ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ
ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ
ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Տեղական և մարզային իշխանությունների դերը գենդերային հավասարության խթանման հարցում հաստատվել է 1998 թվականին ընդունված Տեղական իշխանությունների միջազգային միության «Տեղական իշխանություններում կանանց» վերաբերյալ Համաշխարհային հռչակագրում: Նոր համաշխարհային կազմակերպությունը՝ «Միացյալ քաղաքներ և տեղական իշխանություններ»-ը, հաստատում է կանանց ու տղամարդկանց հավասարությունը որպես իր հիմնական նպատակներից մեկը:

Քաղաքական և վարքագծային փոփոխությունների համատեքստում կարևոր է մտածել այն օգուտների մասին, որոնք գենդերազգայուն բյուջետավարումը կարող են բերել համայնքին և հասարակությանը ընդհանրապես: Տեղական ինքնակառավարման համակարգը շատ բան ունի անելու գաղափարի ընդունման և դրա իրագործման համար: Համայնքային մակարդակում ԳԶԲ-ի ինստիտուցիոնալացման ամբողջ գործընթացը կարող է սկզբնավորվել/նախաձեռնվել համայնքային բյուջեներից:

Հայաստանի Հանրապետությունը 2013 թ. ընդունել է **«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը**: Վերջինս կարևոր իրավական փաստաթուղթ է սեռի հիմքով խտրականության դեմ պայքարի նյութաիրավական բազան ապահովելու տեսանկյունից:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը մշակվել և ընդունվել է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի և ներպետական իրավական ակտերի հիման վրա: Օրենքի մի շարք հոդվածներով տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակվել է որոշակի պարտավորություններ և լիազորություններ:



Հոդված 16. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից

1. Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում միջոցառումներ են ձեռնարկում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ուղղությամբ:

Ղեկավարվելով «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» N667-Լ որոշման Հավելվածի 2-րդ կետով՝ 2019 թվականի սեպտեմբերի 19-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1334-Լ որոշումը: Վերջինս մշակվել է ի կատարումն 2019 թվականի մայիսի 16-ի Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N650-L որոշմամբ հաստատված N1 Հավելվածի 9.1-ին կետի:

Ռազմավարության մեջ, ի թիվս այլ գործողությունների, գերակա է և հստակ ամրագրված է գենդերային զգայուն բյուջեի գործիքակազմի մշակումը և ներդրումը:



Ռազմավարության ներդրման առաջընթացի և ակնկալվող արդյունքի գնահատման հիմնական մոնիտորինգային ցուցանիշներն ըստ գերակայությունների.

գ. գենդերային զգայուն բյուջետավորման չափորոշիչները ներդրված են և իրականացվում են պետական կառավարման բոլոր մակարդակներում՝ ազգային և համայնքային, իրականացվում է դրանց մոնիտորինգը

Ռազմավարությամբ սահմանվում է գենդերային քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, որոնք ուղղված են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը՝ հաշվի առնելով նաև Հայաստանի ստանդնաձմ միջազգային պարտավորությունները:

ՀՀ կառավարությունը 2018-2019 թվականներից ձեռնամուխ է եղել գենդերային հավասարության ապահովման մի շարք գործուն մեխանիզմների վերագործարկմանը և/կամ ներդրմանը, որոնցից մեկն էլ գենդերային զգայուն (գենդերազգայուն) բյուջետավարման (ԳԶԲ) գործիքակազմի մշակումն ու ներդրումն է:

Բյուջետային գործընթացներում գենդերային բաղադրիչի ներմուծումը պայմանավորված չէ միայն միջազգային հարթակներում ունեցած պարտավորությունների կատարմամբ: Գենդերազգայուն բյուջետավարման կիրառելիությունը նպաստում է՝



- Գենդերային հավասարության և կանանց դերի բարձրացմանը,
- Հաշվետու և թափանցիկ գործելակերպին,
- Բարեխիղճ և ժողովրդավարական կառավարմանը:

Միջազգային փորձի և արդյունքների վերլուծությամբ հստակ կարելի է ամրագրել, որ գենդերազգայուն բյուջետավարումը բյուջետային գործընթացում գենդերային բաղադրիչի ներդրման կիրառության օրինակ է: Այսինքն՝ բյուջեները գնահատվում են գենդերային բաղադրիչի արտահայտմամբ՝ բյուջետային գործընթացի բոլոր մակարդակներում, նաև ապահովելով ծախսային մասի գենդերային հավասարությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքներում արդեն 2015 թվականից ներդրվել է բյուջեի ծրագրային ձևաչափը, անհրաժեշտություն է դարձել ծրագրերի և միջոցառումների արդյունքների գնահատման ընթացքում կիրառելի դարձնել վերոնշյալ մոտեցումները: Տեղական մակարդակում գենդերազգայուն բյուջետավարման հրահանգների այս ուղեցույցը նպատակ ունի որոշակի հմտություններ և գիտելիքներ փոխանցել տեղական ինքնակառավարան մարմիններին՝ բյուջեում գենդերային ուղղվածությունն ամրագրելու, ինչպես նաև գոյություն ունեցող պրակտիկ փորձի հիման վրա գործընթացներ սկսելու համայնքի

Ֆինանսական փաստաթղթի կազմման ժամանակ ծախսերի գենդերազգայնությունը ապահովելու համար:

Առաջնորդվելով տեղական և միջազգային իրավական ակտերով ամրագրված դրույթներով ու պարտավորություններով, անհրաժեշտություն է դարձել գենդերային բաղադրիչը ներդնել նաև համայնքների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրերում, բյուջետավարման և պլանավորման գործընթացներում, ինչպես նաև գենդերային բյուջետավարման աստիճանական կիրառումն ապահովել բյուջետային ցիկլի տարբեր փուլերում:

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՄ ԲՅՈՒՋԱՏԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Տվյալ ֆինանսական տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է նախորդ տարվա հուլիս ամսին և ավարտվում բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատմամբ: Համայնքի ղեկավարը՝ աշխատակազմի աջակցությամբ նախագծում է տեղական բյուջեն՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում սահմանված տարեկան խնդիրների հիման վրա: Ցավոք, տեղական բյուջեի գործընթացը միշտ չէ, որ համապատասխանում է տվյալ ժամանակացույցին՝ համայնքներին տրվող դոտացիաների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների ուշացումների պատճառով:

Համայնքային բյուջեի պլանավորումը սկսում է համայնքի ղեկավարի որոշումով և ավարտվում համայնքի ավագանու կողմից բյուջեի հաստատմամբ: Այս փուլի կարևոր խնդիրներն են ժամանակացույցի պատրաստումը, աշխատակազմի բաժինների միջև պատասխանատվությունների բաշխումը, մեթոդաբանական նյութերի նախապատրաստումը, բյուջետային եկամուտների և ծախսերի պլանավորումն ու բաշխումը, ժողովների և քննարկումների կազմակերպումը, հանրային լուրմերը և այլն:

Պաշտոնական ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում դեկտեմբերի 31-ին: Որպես կանոն, համայնքային բյուջեները կազմվում են մեկ տարով:

Օրենսդրությունը հնարավորություն է տալիս ծրագրային բյուջեի կազմման գործընթաց իրականացնել նաև համայնքային մակարդակում:

ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԸ


Համայնքի ղեկավարը կազմում է բյուջեի նախագիծը: Համայնքի ղեկավարը հանձնում է համայնքային տարեկան բյուջեի նախագիծը ավագանուն քննարկման համար՝ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքի հիման վրա համայնքներին

տրամադրվող սուբսիդիաների վերաբերյալ նախնական տվյալների հրապարակումից հետո երկու ամսվա ժամկետում: Մինչև տարեկան բյուջեի նախագիծը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:

Համայնքային ավագանին. Համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն ներկայացնում է համայնքի բյուջեի նախագիծը, պատասխանում է ավագանու անդամների հարցերին: Համայնքի ավագանու անդամները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են ավագանու նիստում: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները: Համայնքի ղեկավարը քննարկումներից հետո կարող է վերցնել մինչև մեկ շաբաթ ժամանակ՝ ներկայացված նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար կամ պահանջել հաստատելու բյուջեն⁷:

Համայնքի բնակիչների, ՀԿ-ների և համայնքային կազմակերպությունների մասնակցությունը բյուջետային գործընթացում կարգավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կիրառելի ձևերը ներկայացված են Հավելված 4-ում:



⁷ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 32

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՑԻԿԸ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Գենդերազգային բյուջետավարման իրականացումը տեղական մակարդակում հնարավոր է իրականացնել հետևյալ կերպ⁸.



1 ԶԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒԼ

- **Սահմանում.** մշակվում է բյուջետային օրացույցը համայնքի ղեկավարի կողմից՝ համայնքի զարգացման ծրագրով և տարեկան աշխատանքային պլանով նախատեսվող ծրագրերի իրականացման առաջնահերթություններին համապատասխան:
- **ԳԶԲ հնարավորություն.** ԳԶԲ ունենալու համար համայնքային բյուջեն պետք է հիմնված լինի գենդերային վերլուծության վրա, պարունակի սեռով տարանջատված տվյալներ ու մոտեցումներ և արտացոլի կանանց ու տղամարդկանց, աղջիկների ու տղաների կարիքները և շահերը:

2 ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՓՈՒԼ

- **Սահմանում.** Բյուջեն ներկայացվում է ավագանուն քննարկման, լրամշակման և հաստատման համար:
- **ԳԶԲ հնարավորություն.** սրանք ենթադրում են տեղական մակարդակում աշխատանք ավագանու և բնակչության հետ, ինչպես նաև աշխատանք տեղական լրատվամիջոցների հետ:

3 ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼ

- **Սահմանում.** հաստատված բյուջեն օգտագործվում է իրականացնելու նախատեսված ծրագրերն ու միջոցառումները իսկ ծախսերը և ակնկալվելիք արդյունքները պարբերաբար մշտադիտարկվում են:
- **ԳԶԲ հնարավորություն.** այս փուլում օգտակար է սեռով տարանջատված տվյալների հավաքագրումը՝ մշտադիտարկելու գնումները, ծախսերը, ելքերը և արդյունքները, օրինակ՝ գնումների մշտադիտարկման, հանրային ծախսերին հետևող ուսումնասիրության, սոցիալական աուդիտների և քաղաքացիների զեկույցային քարտերի (համայնքային մշտադիտարկում) միջոցով:

4 ԱՈՒԴԻՏԻ/ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼ

- **Սահմանում.** բյուջեն և ծրագրային արդյունքները գնահատվում են՝ ապահովելու հանրային ռեսուրսների արդյունավետ, հավասար և արդարացի օգտագործումը:
- **ԳԶԲ հնարավորություն.** Այս փուլում ենթադրվում են գենդերային զգայունության բարձրացում աուդիտի պաշտոնյաների շրջանում, ինչպես նաև գենդերային աուդիտի կամ գենդերային ցուցիչի ներկայացում: Գենդերային աուդիտները հակված են լինել ավելի կայուն, երբ նրանք իրականացվում են որպես կառավարության կանոնավոր աուդիտորական գործընթացի մաս:

⁸ Աղբյուրը. Շարի, Ռ. (2003), *Բյուջետավարման հավասարության և արդարության համար. գենդերային բյուջետային նախաձեռնություններ կատարողականության վրա հիմնված բյուջետավարման շրջանակներում*

ԳԶԲ-Ի ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՑ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Տեղական մակարդակում գենդերազգայուն բյուջետավորում իրականացնելու համար պետք է սկսել գենդերային վերլուծությունից:

Եթե համայնքային մակարդակում ծրագրի գենդերային վերլուծություն կատարելու համար անհրաժեշտ տվյալներ չկան, խորհուրդ է տրվում միջոցներ ձեռնարկել տվյալների հավաքագրման և մշակման ընթացակարգերի կատարելագործման ուղղությամբ, ինչպես նաև նախաձեռնել վիճակագրական և/կամ այլ հաշվետվությունների նոր ձևերի մշակում կամ եղանակների տեղայնացում: Մասնավորապես՝ ուսումնասիրել կանանց և տղամարդկանց իրականացրած գործառույթները, որոշել կարիքները տարբեր սոցիալական պայմաններում, հետաքրքրությունները, գերակայությունները և խնդիրները: Տվյալների հավաքումը հնարավոր է իրականացնել օգտագործելով հարցաթերթեր, ֆոկլոս խմբային հետազոտություններ, փորձագիտական գնահատականներ և այլն:

Նման մեթոդներով տեղեկատվություն հավաքելու համար անհրաժեշտ է ապահովել երկու սեռերի ներկայացուցիչների հավասար մասնակցությունը:

Բյուջեի գենդերային վերլուծությունը համայնքային մակարդակում նաև բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի վերլուծությունն է պարզելու՝ թե ինչպես են այդ ծրագրերը լուծում տարբեր սեռերի և սոցիալական խմբերի կարիքները: Նման վերլուծություններն ուղղված են հետագա գործունեության համար լավ ապացույցների հիմքերի ստեղծմանը տարբեր ոլորտներում, ծրագրերի կամ քաղաքականության մեջ գենդերային հավասարության իրավիճակի բարելավման համար:

Բյուջետային ծրագրերում գենդերային վերլուծություն իրականացնելն հնարավորություն է տալիս՝



- հասկանալ առկա (ան-)հավասարությունը
- հասկանալ և քարտեզագրել տեղական մակարդակի շահագրգիռ կողմերին,
- նշել այն բացերը, որոնք կարող են լրացվել ծրագրի շնորհիվ,
- սահմանել և դասակարգել գենդերազգայուն ծախսերը,
- վերլուծել գենդերով պայմանավորված համայնքային ծախսերը և հաշվել ցուցիչները:

Վերոնշյալից կարելի է ամրագրել, որ



- ԳԶԲ-ի կազմման հիմնական բաղադրիչը բազմակողմանի վերլուծությունն է,
- ԳԶԲ-ի վերլուծության մեջ բավարար չէ դիտարկել միայն կանանց և տղամարդկանց, այլ շատ կարևոր է համոզվել, որ տարբեր սոցիալական իրավիճակներում կանանց և տղամարդկանց կարիքներն ու հետաքրքրությունները, գերակայությունները և մարտահրավերները, տարիքը, դասը, էթնիկ պատկանելությունը, գտնվելու վայրը և այլն, պատշաճ կերպով արտացոլված են համայնքային ռազմավարական ծրագրերի մեջ,
- բյուջետային միջոցառումները և ծրագրերը գենդերային հավասարության վրա ունեն տարբեր ազդեցություններ՝ նվազեցնում են գենդերային անհավասարությունները, այն մեծացնում են, կամ թողնում են անփոփոխ:

ԳԶԲ ոլորտային և ծրագրային վերլուծության հիմնական քայլերը հետևյալն են՝



- **Իրավիճակի վերլուծություն** - ոլորտում գենդերային հիմնախնդիրների բացահայտում,
- **Տեղեկատվության հավաքում** այն ծրագրերի մասին, որոնք պետք է վերլուծվեն,
- **Գործունեության գենդերային վերլուծության** իրականացում,
- **Բյուջետային միջոցների հատկացումների** գենդերային վերլուծության իրականացում,
- Գենդերային հավասարության բարելավման համար **նպատակների և առաջարկությունների ներկայացում**:

Գենդերային վերլուծությունը ենթադրում է ծրագրի, այդ թվում նպատակի, խնդիրների, միջոցների օգտագործման ոլորտների ուսումնասիրություն:

Ուսումնասիրվում են նաև բյուջեի կատարողականի ցուցիչները, որոնք սահմանված են բյուջեի տարբեր ոլորտների համար՝ պարզելու, արդյոք կան գենդերային բաղադրիչներ այդ ցուցիչներում: Իսկ բյուջեի ոլորտները կարող են լինել բյուջետային ծրագրի շրջանակներում մատուցված ծառայությունները, հանրային ծառայություններ ստացողները, մատակարարները, տրամադրված միջոցների քանակը և դրանց բաշխումը բյուջետային ծրագրի շրջանակներում և այլն:

Գենդերային բյուջեի վերլուծության արդյունքում աշխատանքային խմբի կողմից ձևավորվում են առաջարկություններ բյուջետային ծրագրերի բարելավման ուղղությամբ, որոնք էլ հետագայում հաշվի են առնվում համայնքային բյուջեն կազմելիս, այնպես որ այն ավելի լավ արձագանքի տարբեր սեռերի և տարբեր սոցիալական խմբերի կարիքներին: Առաջարկությունները կարող են ներառել փոփոխություններ ինչպես որոշակի գործողություններում, այնպես էլ ամբողջական ծրագրերում, նոր ծրագրերի նախաձեռնում և անգամ համայնքային բյուջեների միջոցների վերաբաշխում:


Ի լրումն նախորդ գլխում առաջարկված մեթոդաբանության և գործիքների, տեղական մակարդակում գենդերային բյուջետավարման նպատակների համար հնարավոր է ստուգել/ ուղղորդել բյուջեները՝ հիմնվելով տեղական մակարդակում գենդերային բյուջետավարման նպատակների համար «Տեղական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարության եվրոպական խարտիայի» հոդվածների իրականացման պահանջների օրինակներով, որոնք բերված են Հավելված 5-ում:





Ի գիտություն


Հարցադրումներ ԳԶԲ գործընթացը պլանավորելուց առաջ.


- *Ինչպե՞ս են ընդունվում որոշումները,*
- *Ի՞նչ եզրահանգումներ են կայացվում,*
- *Ովքե՞ր են այդ որոշումները կայացնողները,*
- *Ովքե՞ր են ազդում այդ որոշումների վրա,*
- *Ովքե՞ր են դուրս մտում այդ գործընթացից:*


 Այսպիսով, համայնքային մակարդակում գենդերազգայուն բյուջետավարումը ենթադրում է

- 

Գենդերային վերլուծություն > Հասկանալ առկա (ան-)հավասարությունը և շեղ այն բացերը, որոնք կարող են լրացվել ծրագրի շնորհիվ
- 

Կատարողականի խնդիրների սահմանում > Բարելավել կատարողականը գենդերային խնդիրների առումով
- 


Կատարողականի ցուցանիշների սահմանում > Գենդերային հավասարության ուղղությամբ առաջընթացը դարձնել չափելի
- 

Միջոցառումների սահմանում > Գենդերային հավասարության կատարողականի խնդիրներին հասնելու համար անհրաժեշտ միջոցառումներ
- 


Բյուջետային հատկացումներ > Միջոցառումները բարեհաջող կերպով իրագործելու համար ապահովել բյուջետային հատկացման առկայությունը

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՔԱՅԼԵՐՈՒՄ

ՀՀ բյուջետային համակարգում տեղական ինքնակառավարման մարմիններին ի թիվս այլ լիազորությունների, իրավունք է վերապահված նաև՝

- 
 - ինքնուրույն իրականացնել բյուջետային գործընթացը,
 - ինքնուրույն որոշել բյուջեի ծախսման ուղղությունները,
 - ապահովել բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը,
 - ապահովել բյուջեների հրապարակայնությունը,
 - ապահովել բյուջետային միջոցների հասցեականությունը և նպատակայնությունը:

Ելնելով վերոգրյալից բյուջետային գործընթաց իրականացնելիս անհրաժեշտ է բոլոր քայլերում հստակեցնել ԳԶԲ-ի պահանջները և բաղադրիչները: Համայնքների ԳԶԲ գործընթաց իրականացնելու համար առաջարկվում են հետևյալ քայլերը.

- 
 - Ընդունել համայնքի ղեկավարի որոշում՝ բյուջետային գործընթաց սկսելու մասին, որում հստակեցվում է տվյալ տարվա ֆինանսական փաստաթղթի գենդերային ուղղվածությունը (տես՝ Հավելված 6):

- Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձում ներառել տվյալ տարվա բյուջեի ծրագրերի և միջոցառումների ցուցիչներում գենդերային բաղադրիչի ապահովման անհրաժեշտությունը (տես՝ Հավելված 7):
- Համայնքի ղեկավարի և/կամ ավագանու որոշմամբ ստեղծված գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովի/աշխատանքային խմբի/խորհրդակցական մարմնի հետ աշխատանքային պլանի/գործողությունների ծրագրի/ծրագրերի և միջոցառումների քննարկում, իրավիճակի վերլուծություն, ըստ ոլորտների կարիքների վերհանում, ֆինանսական միջոցների տրամադրման ձևաչափերի քննարկում: Բյուջետային ծրագրերում, նախաձեռնություններում հստակեցնել հետևյալ հարցերը՝
 1. Որո՞նք են սահմանված/որոշված քայլերը:
 2. Ո՞վ/ովքե՞ր են մասնակցում յուրաքանչյուր քայլին:
 3. Ո՞վ ունի վերջնական արդյունքները սահմանելու իրավունք:
 4. Որո՞նք են գենդերային հավասարության մոտեցումները բյուջեում ներառելու հնարավորությունները:
 5. Սահմանել գերակա ուղղությունները:
- Գենդերային ուղղվածությամբ միջոցառումների, ծրագրերի ֆինանսավորման պլանավորում ըստ ոլորտների,
- Գենդերազգայուն ծախսային հայտերի, ծրագրերի և դրանց հիմնավորումների կազմում և ներկայացում համայնքի ղեկավարին:
- Ներկայացված հայտերի, ծրագրերի առաջնահերթությունների որոշում՝ համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի Հավելված 2-ի (տես՝ Հավելված 4):
- Ծրագրային բյուջեի նախագծի նախնական տարբերակի կազմում:
- Ծրագրային բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնում, ավագանու մշտական հանձնաժողովում և այլն:
- Հաջորդ քայլերը ըստ համայնքի 20__թ.-ի ծրագրային բյուջեի կազմման և հաստատման աշխատանքների կազմակերպման ժամանակացույցի:



ԳՉԲ պարզ քայլ առ քայլ մոտեցում

- Պարզել գենդերային հիմնախնդիրները՝ իրավիճակի վերլուծություն արդյունքում:
- Հավաքել տվյալներ, տեղեկատվություն և տեղեկություններ ելակետային վիճակի մասին:
- Իրականացնել միջոցառումների գենդերային վերլուծություն:
- Իրականացնել համապատասխան բյուջետային հատկացումների գենդերային վերլուծություն:
- Բյուջեների, ծրագրերի և ենթածրագրերի մեջ սահմանել գենդերային հավասարության բարելավմանն ուղղված խնդիրներ և առաջարկություններ:
- Պարզել գենդերային տեսանկյունից առկա հիմնական խնդիրները և մտահոգությունները:

ԳՉԲ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Համայնքի բյուջետային գործընթացի ավարտական փուլում գենդերազգայուն ծրագրերը պետք է ենթարկվեն մոնիթորինգի և/կամ գնահատման, օգտագործելով պլանավորման ժամանակ օգտագործված ցուցիչները:

Ծրագրային բյուջեի հիմքի վրա մշակած ԳՉԲ-ն ունի առավելություն օգտվելու Ծրագրային բյուջեի, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան աշխատանքային պլանի արդեն իսկ մշակված մոնիթորինգի և գնահատման համակարգից (ՄԳ⁹):

ՄԳ պետք է լինի SMARTG, այսինքն.

—● S	որոշակի
—● M	չափելի
—● A	ստույգ
—● R	արժանահավատ
—● T	ժամանակին
—● G	գենդերազգայուն



Ի՞նչ է պետք վերլուծել

- Օգտագործողներ, շահառուներ և ծախսերի մակարդակ
- Ծառայություններից օգտվողներ / դրամական փոխանցումների շահառուներ
- Կապիտալ ծախսեր/ներդրումներ. ի շահ ո՞ւմ, ո՞ւմ համար, հասանելի՞:
- Ծառայություններից/ենթակառուցվածքից օգտվելու խոչընդոտները (չօգտվողները):
- Ծառայությունների, ենթակառուցվածքի որակը ...
- Օգտագործողների բավարարվածությունը
- Մասնակցությունը հետևյալի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին.
- Ծրագրեր, ծառայություններ, ներդրումներ
- Հասանելիության չափանիշներ, ընտրության գործընթաց
- Միջոցառումների ազդեցությունը կանանց/տղամարդկանց վրա (արդյունքները)
- Չբաղվածություն (ֆորմալ, ոչ ֆորմալ), եկամուտներ,
- Կրթության աստիճան, առողջական վիճակ ...
- Չվճարվող աշխատանքի ծավալը և բաշխվածությունը

Գենդերազգայուն բյուջետավարման նպատակներից ելնելով մոնիթորինգի կամ գնահատման ժամանակ կարևոր է՝



- Հասկանալ գենդերային տարբերությունները և անհավասարությունները
- Ծրագրերն արտացոլու՞մ են արդյոք այդ տարբերությունները և անդրադառնու՞մ են այդ անհավասարություններին
- Ծրագրերը և բյուջետային հատկացումները բարելավու՞մ են գենդերային հավասարությունը:

⁹ Տեղական ինքնակառավարման համակարգ. Մեթոդական ուղեցույցներ և ձեռնարկներ, <http://www.mtad.am/hy/methodological-guides/>

ԳԶԲ ՑՈՒՑԻՉՆԵՐ

ԳԶԲ-ի մոնիտորինգն ու գնահատումը հիմնված է քանակական և որակական ցուցիչների արժեքների վրա, ինչը հնարավորություն է տալիս ժամանակի ընթացքում չափելի դարձնել պլանավորված գեոդերային ծրագրերը:

Ցուցիչն իրենից ներկայացնում է քանակական և/կամ որակական բնույթի գնահատման գործիք: Այն կարող է լինել թիվ, փաստ, կարծիք կամ դատողություն, որը ցույց է տալիս յուրահատուկ կարգավիճակ և ամրագրում է ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները այդ կարգավիճակում:¹⁰



«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ԶԶ օրենք

- **գեոդերային չափորոշիչներ (գեոդերային զգայուն ինդիկատորներ)**՝ ցուցիչներ կամ չափիչներ, որոնց քանակական և որակական ցուցիչները կիրառում են որոշակի ժամանակահատվածում հասարակությունում գեոդերային նշանակություն ունեցող փոփոխությունները հանրագումարի բերելու համար.

ԳԶԲ ցուցիչների ընտրությունը պետք է կատարվի անմիջական շահառուների մասնակցությամբ և պետք է համապատասխանի նրանց կարիքներին: Այսինքն **ցուցիչները պետք է բաժանվեն ըստ սեռի, տարիքի, սոցիալական խմբի, պետք է լինեն հավաքագրելի, հասկանալի, պարզ ձևակերպված**: Ցուցիչները պետք է սահմանվեն ըստ քանակական և/կամ որակական բնութագրիչների:

> Զանակական ցուցիչներ

Քանակական ցուցիչները չափորոշում են իրականացվող միջոցառման քանակը կամ ծավալը և կարող են արտահայտվել ինչպես բացարձակ թվերով, այնպես էլ հարաբերական ցուցիչներով: Միջոցառման քանակական ցուցիչները որոշակիորեն արտահայտում են ծրագրի սահմանված նպատակին հասնելու աստիճանը, սակայն չեն արտացոլում կատարվող աշխատանքների որակական արդյունքները:

> Որակական ցուցիչներ

Որակական ցուցիչներն արտացոլում են ոչ թե իրականացվող միջոցառման քանակը կամ ծավալը, այլ միջոցառման իրականացման որակական արդյունքները՝ հետևանքները, ազդեցությունը, առաջընթացը կամ ձեռքբերումները: Որակական ցուցիչները կարող են գնահատել միջոցառման իրականացման ազդեցությունը շահառուի տեսանկյունից՝ հիմնվելով հիմնականում հենց շահառուի կարծիքի վրա: Որակական ցուցիչները կարող են արտացոլել նաև միջոցառման իրականացման արդյունքների համապատասխանությունը որոշակի ստանդարտներին կամ չափանիշներին՝ սահմանված օրենսդրական ակտերով, նորմերով կամ այլ փաստաթղթերով:

> Ժամկետայնության ցուցիչներ

Ժամկետայնության ցուցիչները բնութագրում են միջոցառման իրականացման ժամկետները կամ հաճախականությունը: Դրանք հաճախ դիտարկվում են որպես մի-

¹⁰ «Գեոդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ» մեթոդական ձեռնարկ, հաստատված՝ ԶԶ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 19.10.2012թ. թիվ 93-Ա/1 հրամանով

չոցառման իրականացման արդյունքների քանակի կամ որակի տեսանկյուններից, քանի որ միջոցառման իրականացման ժամկետայնության գործոնն անմիջականորեն ազդում է միջոցառման իրականացման արդյունքների քանակի կամ որակի վրա:

Կախված միջոցառման տեսակից՝ յուրաքանչյուր միջոցառման համար կարող են սահմանվել քանակական և (կամ) որակական և (կամ) ժամկետայնության ցուցիչներ:

Գենդերային զգայուն ցուցիչների կիրառումը հնարավորություն է տալիս խուսափել կեղծ վերլուծություններից և կյանքի կոչել շատ կարևոր հանգամանք՝ սեռային տարբերակմամբ տվյալների հավաքագրում ու մշակում, որոնք խթանում են գենդերազգայուն ցուցիչների ներդրմանը և գենդերային ծրագրերի իրականացմանը:

Գենդերազգայուն ցուցիչները ոչ թե վերջնական նպատակ են, այլ չափող գործիք: (տես՝ Հավելվածներ 8,9):

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Աշտարակ և Աբովյան համայնքներում գենդերազգայուն բյուջետավարման գործընթացների ներդրման անհրաժեշտությունն առաջացել է հանրային լուսմների ժամանակ: Առաջարկվել է իրականացնել ԳԶԲ-ն և այն ներառվել է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձի մեջ որպես 2019 թվականի իրականացվող ուղղություն:

Գործընթացի կարևորությունն ու ներդրման անհրաժեշտությունը քննարկվել է նաև համայնքի ղեկավարին կից «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման» խորհրդակցական մարմնի նիստում:

Դիլիջան համայնքում համայնքապետը ավագանու քննարկմանն է ներկայացրել համայնքի 2019թ. ծրագրային բյուջետավարման գործընթացում գենդերազգայուն մոտեցումներ ներառելու մասին հարցը, առաջարկելով՝



1. 2019թ. ծրագրային բյուջեի գենդերազգայուն բյուջետավարման գործընթացի ներդրման համար մշակել համայնքում իրականացվելիք միջոցառումների պլան:
2. Բյուջետային հատկացումների, ծրագրային նպատակների, միջոցառումների և ցուցիչների մեջ հաշվի առնել գենդերային բաղադրիչը:
3. Հավասար պայմաններ և հավասար հնարավորություններ ստեղծել կանանց և տղամարդկանց անհատական ներուժի ինքնադրսևորման համար:
4. Ապահովել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երկու սեռերի հավասար մասնակցություն՝ համայնքի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը աջակցելու համար:

Դիլիջան համայնքը 2019թ.-ի ծրագրային բյուջեով ունեցել է գեղեցիկագայուն 3 ծրագիր: Դրանք են՝



Ծրագիր 1

Հովք և Խաչարձան բնակավայրերում, որտեղ չկան մանկապարտեզներ, հիմնել մոբայլ մանկապարտեզներ:

Ծրագիր 2

Հիմք ընդունելով կանանց և տղամարդկանց անհավասար ներգրավվածությունը բիզնեսում, հյուրանոցային, սրճարանային և առևտրային բիզնեսները զարգացնելու նպատակով իրականացնել դրամաշնորհային ծրագրեր, որոնք կնպաստի տուրիզմի զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը համայնքում:

Ծրագիր 3

Աջակցություն ՀԿ-ներին Կանանց կարողությունների զարգացմանն ու գեղեցիկագայուն հավասարության հաստատմանն ուղղված ծրագրերի իրականացման գործում:

Աբովյան համայնքում 2019 թվականին «Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն» ՀՈԱԿ-ի ծախսերը պլանավորվեցին գեղեցիկագայուն բաղադրիչի կիրառմամբ: Սահմանվեցին ծրագրի նպատակներ և դրանք չափելու ցուցիչներ: Ուսումնասիրվեց, թե ինչպես կարելի է օգագործել նախատեսված բյուջեն՝ գեղեցիկագայուն հավասարությանը նպաստելու նպատակով, ինչպես նաև թե ինչպես կազդեն կայացրած որոշումները աջակցության կենտրոն հաճախող աղջիկների և տղաների կյանքի վրա: Որոշվեց, բացի մշակութային միջոցառումներից, իրականացնել նաև սպորտային միջոցառումներ տղաների և աղջիկների համար՝ հավասար հետաքրքրություններ ստեղծելու համար: Զանի որ կենտրոնը աշխատում է խնդիրներ ունեցող ընտանիքի երեխաների հետ, միջոցառումների պլանավորման և իրականացման փուլում ընդգրկվեցին նաև կենտրոն հաճախող երեխաների մայրերը, որով փորձ արվեց փոխել նրանց պատկերացումները իրենց երեխաների կարևորության մասին:

Զերմուկ համայնքի ծրագրային բյուջեով իրականացվել են 3 գեղեցիկագայուն ծրագրեր՝



1. *Մարզադպրոցի կապիտալ հիմնանորոգման սուբվենցիոն ծրագիր: Ծրագրի 45 տոկոսը համաֆինանսավորվել է պետական բյուջեի կողմից և 55 տոկոսը համայնքի բյուջեի միջոցների հաշվին:*

Մարզադպրոցի կողմից մատուցվող ծառայություններից օգտվում էին բացառապես արական սեռի ներկայացուցիչներ, վերանորոգումից հետո նախատեսվում է ստեղծել հավասար պայմաններ իգական սեռի ներկայացուցիչների համար: Մասնավորապես, կանանց համար նախատեսված հանդերձարան, սանհանգույց՝ լոգարանով, յոգայի սրահ, բուժական մերսման սրահ, ֆիտնեսի կարդիո և ուժային պարապմունքների սրահ: Միաժամանակ կապահովվի մինչև 100 հոգու միաժամանակ մարզվելու հնարավորություն /այժմ 50/: Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն 12-15 ժամանակավոր, և 4 հիմնական աշխատատեղեր:



2. Համայնքի բնակավայրերում մանկապարտեզների հիմնանորոգումներ՝ նոր խմբերի դասասենյակների, ձմեռային ամիսների համար երեխաների խաղասենյակի հիմնանորոգում ու կահավորում:

- *Կեչուտ բնակավայրի մանկապարտեզում նոր խմբի ավելացում, գործող խմբերի դասասենյակների հիմնանորոգում*
- *Ջերմուկ բնակավայրում գործող մանկապարտեզում ձմեռային ամիսների համար խաղասենյակի կառուցում:*

Ծրագրի իրագործման արդյունքում համայնքի տարածքում կապահովվի նախադպրոցական ներառական կրթության մատուցումը և կբարձրանա մատուցվող նախադպրոցական կրթության որակը: Միաժամանակ կապահովվի ևս 25 երեխաների համար նախադպրոցական կրթության հնարավորություն: Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն 28-30 ժամանակավոր, և 2-3 հիմնական աշխատատեղեր: Ծրագրի իրականացման արդյունքում ստեղծված 4 հիմնական աշխատատեղերը ստեղծված բոլորը իգական սեռի ներկայացուցիչների համար վճարվելու են Ջերմուկի համայնքապետարանի կողմից /1 դաստիարակ, 1 դաստիարակի օգնական, 1 հոգեբան և 1 հավաքարար/:



3. *Ջերմուկ համայնքի Հերիեր գյուղական բնակավայրի արտաքին լուսավորության ցանցի կառուցում:*

Նախկինում չունենալով արտաքին լուսավորության ցանց Հերիերի բնակիչները՝ հատկապես կանայք ու երեխաները, երեկոյան և գիշերային ժամերին կամ դժվարանում էին կամ էլ ընդհանրապես չէին կարողանում տեղաշարժվել: Լուսավորության ցանցի կառուցումով երեկոյան և գիշերային ժամերին հավասար տեղաշարժման հնարավորություն է ընձեռնվել ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց ու երեխաներին:



Խորհուրդներ

- *Հանդիպումներ անցկացնել այնպիսի ժամերի և այնպիսի վայրերում, որպեսզի հեշտացվի կանանց մասնակցությունը,*
- *Իրականացնել կանանց և տղամարդկանց ներկայացվածության և մասնակցության մշտադիտարկում,*
- *Գործընթացում ապահովել գեներային հավասարակշռությունը,*
- *Մշտադիտարկել, թե ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի մարդիկ վստահաբար բարձրաձայնեն իրենց ասելիքը:*

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Ավստրիայում գենդերային բյուջետավարման գործիքը հանդիսանում է ոչ թե լրացուցիչ գործիք, այլ մշակված քաղաքականություն: Սկզբնական շրջանում համայնքները կատարել են սեռին վերաբերող տվյալների հավաքագրում և այն ինտեգրել գործող բյուջեի մեջ:

Ավստրիական համայնքներում գենդերային բյուջետավարման շարունակական և արդյունավետ լինելը գնահատում են հետևյալ արդյունքների վրա՝



- Ի՞նչ փոփոխություններ են նշմարվում,
- Որքանո՞վ են կարողացել հասնել ցանկալի/թիրախային նպատակներին,
- Որտե՞ր են առկա շեղումներ և որոն՞ք են դրանց պաճառները,
- Ի՞նչ է դա նշանակում հաջորդ փուլի բովանդակային պլանավորման համար (պակասող տվյալներ, կոնկրետացում, նոր միջոցառումների մշակում):

Ավստրիայում գենդերային բյուջետավարումը իրականացվում է երեք փուլով՝ կազմում, կատարում, ստուգում/գնահատում:

Բյուջեն **կազմելու** ընթացքում բոլոր մոտեցումները կարևորորվում են կանանց և տղամարդկանց հավասար պայմանների ապահովման համար: Այս փուլում ծրագրերն ու միջոցառումները դասակարգվում են ըստ իրենց կարևորության: Հաջողված գենդերային բյուջետավարման համար առանցքային դեր է կատարում հավասար պայմանների ապահովման նպատակների և դրան առնչվող ցուցիչների ձևակերպումը, առանց որի հնարավոր չէ նկարագրել կամ ստուգել հավասար պայմանների ապահովման ազդեցությունը: Հավասար պայմանների ապահովման իրագործելի և կոնկրետ նպատակների խելամիտ ձևակերպման համար պետք է նախապես ըստ սեռի բավարար չափով տվյալներ վերլուծվեն:

Բյուջեի **կատարման** ընթացքում վերլուծվում են տղամարդկանց և կանանց որոշակի խմբերի միջև բյուջեի ծախսերի բաշխման ազդեցությունների վերաբերյալ բյուջեի փաստացի վիճակը: Բյուջեի կատարման ընթացքում հավաքված ազդեցության վերլուծությունները գնահատվում են **ստուգման** գործընթացի ժամանակ (թիրախային և փաստացի տվյալների համեմատություն) և այս ամենը հնարավոր է միայն առկա ցուցիչների հիման վրա: Բյուջեի **գնահատման** գործընթացից ելնելով սահմանվում են գործողության առաջարկներ և ցանկալի փոփոխություններ պլանավորման հաջորդ ժամանակահատվածի համար, որով և փակվում է բյուջետային գործընթացը:

Ավստրիայի *Գրադս* համայնքում ԳԶԲ-ն սկսել են ազդեցության գնահատմամբ: ԳԶԲ-ն ֆինանսական միջոցների արդար բաշխումն է, ստեղծելով թափանցիկ բյուջե բոլորի համար: ԳԶԲ-ով մասնավոր հատվածի համար սահմանվել են արտոնություններ՝ իրավահավասար պայմաններ ստեղծելու համար:

Գերմանիայի փորձի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ բյուջետավարման գործընթացում գենդերային բաղադրիչը ավելի առանցքային դեր է խաղում հանրային մասնակցության խթանման և մասնակցային բյուջեի իրականացման ընթացքում: Ուսումնասիրության արդյունքում ընդհանրացվել է հետևյալը.



- Տեղական մակարդում մարդկային և ֆինանսական ռեսուրսները գնահատվում են ըստ դրանց գենդերային ուղղվածության: Ունեն հստակ մեխանիզմ և հատուկ աշխատող, ով պատասխանատու է ծրագրերի արդյունավետ իրականացման համար, զբաղվում է ծրագրերի հետ կապված ընդհանուր աշխատանքի համակարգմամբ՝ հայտերի կազմում, հայտարարությունների տարածում, առաջարկների հավաքագրում, կարիքի ճիշտ գնահատում ու ներկայացված ծրագրային հայտերի առաջնահերթությունների որոշելու գործընթացի կազմակերպում: Ծրագրերի իրականացման գործընթացում առաջնահերթությունը տրվում է գենդերային ուղղվածություն ունեցող ծրագրերին:
- Տղամարդկանց և կանանց կարիքներից ելնելով մասնակցային բյուջետավարման գործընթացում հստակեցվում են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մատուցվող ծառայություններն ու հանրային միջոցների հատկացումները՝ ելնելով այն գաղափարից, որ գենդերազգայուն բյուջետավարումն սկսվում է տղամարդկանց և կանանց վրա բյուջեի ազդեցության վերլուծությամբ, որի արդյունքները այնուհետև ներառվում են բյուջեի մշակման մեջ: Ըստ այդմ ուղղակիորեն հաշվի են առնվում գենդերային հիմնախնդիրները, օրինակ՝
 - Խնամատարության չվճարվող աշխատանքի մեջ ապահովել գենդերային հավասարությունը,
 - Բարելավել կանանց և տղամարդկանց հավասարությունը սպորտաձևերում,
 - Ձգտել մշակել հանրային տարածքների (օրինակ՝ պուրակների կամ բնակարանային ֆոնդի) նախագծման գենդերազգայուն մոդել,
 - Բարելավել կանանց և տղամարդկանց առողջությունը՝ խթանելով գենդերային բժշկությունը և գիտելիքի տարածումը:



- Յուրաքանչյուր համայնք ինքն է հստակեցնում, թե տարվա կտրվածքով բյուջեի քանի տոկոսից կարող է մասնաբաժին հանել գենդերազգայուն ուղղվածություն ունեցող ծրագրերի համար:
- Գործում է համագործակցության բավական զարգացած ցանց տեղական դերակատարների միջև՝ քաղաքացիական հասարակություն, գործարար միջավայր, ինչն իր հերթին նպաստում է գենդերային հիմնախնդիրների և առաջնահերթությունների օպտիմալ գնահատմանը՝ հաշվի առնելով բնակչության իրազեկման մակարդակը, համայնքային բյուջեի հնարավորությունները, հանրության հետաքրքրվածության մակարդակը՝ իրազեկման արշավ սկսելու համար:
- Օլյայն և օֆլայն հարթակների միջոցով գենդերազգայուն բյուջեի կարևորության և արդյունավետության մասին տեղեկատվություն է տարածվում հանրությանը իրազեկելու նպատակով: Կազմակերպվում է հանրային քարոզարարչավ, հրատարակվում են տեղեկատվական նյութեր, ծրագրերի իրականացումից հետո նաև՝ հաջողակ պատմությունների մասին տեղեկատվական թերթիկներ՝ մոտիվացնող լոգունգներով:

Բեռլինում գործում է «Երիտասարդների խորհրդարան», որն իրենից ներկայացնում է 8-15 տարեկան 150 երեխաներից կազմված խորհուրդ, որը կարևոր դեր է խաղում բյուջետավարման գործընթացում՝ նպաստում է դրա մասնակցային գործառույթի կենսագործմանն ու համայնքի բնակիչների տարբեր շերտերի կարիքների և գենդերային տարրի ավելի հստակ վերհանմանը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱՅԱՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է ձեռնարկել հետևյալ գործողությունները՝ Հայաստանում ԳԶԲ կարգը հաստատելու ուղղությամբ.



- Խրախուսել, որ ԳԶԲ գործընթացը դառնա սովորական / օրենքով սահմանված գործընթաց.
- Աջակցել մեթոդաբանությունների և այլ նորմատիվ փաստաթղթերի ու փոփոխությունների մշակմանը՝ ապահովելու, որ գենդերազգայուն բյուջետավարումը լիարժեքորեն ներգծված լինի Հայաստանի բյուջետավարման գործընթացում.
- Աջակցել մեթոդաբանության և օրենսդրական այլ փաստաթղթերի ստեղծմանը և/ կամ փոփոխությանը՝ ապահովելու ԳԶԲ-ի ինստիտուցիոնալացումը Հայաստանի բյուջետավարման գործընթացներում.
- Աջակցել նախարարությունների, պետական և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներից կազմված ինստիտուցիոնալ, ֆինանսների նախարարությանը կից աշխատանքային խմբի ստեղծմանը և վերապատրաստմանը.
- Իրականացնել բոլոր շահագրգիռ կողմերի (ֆինանսների նախարարություն, գծային նախարարություններ և գործակալություններ, ՀՀ Ազգային ժողով, լրատվամիջոցներ և ՀԿ-ների անդամներ) կարողությունների զարգացում:
- Աջակցել նախարարություններին և համայնքներին՝ պետական և համայնքի բյուջեներով ֆինանսավորվող ծրագրերի գենդերային վերլուծության անցկացման գործում:
- Նպաստել և աջակցել ընտրված կառույցներին՝ իրենց իրավասությունների ներքո գործող իրավական դաշտը և կանոնակարգերը գնահատելու և ԳԶԲ-ի իրականացման ոլորտային գործողությունները պլանավորելու գործում.
- Աջակցել ազգային մակարդակի հետազոտություններին և տվյալների հավաքմանը՝ իրավիճակի վերաբերյալ հուսալի տեղեկատվություն ապահովելու համար.
- Աջակցել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը՝ բյուջետային նպատակներով ըստ սեռերի բաժանվող տվյալների հավաքագրման և ներկայացման գործում.
- Իրականացնել Բյուջեի կատարման մոնիտորինգը գենդերային հավասարության տեսանկյունից.
- Գնահատել Պետական բյուջեն՝ չափելու ներգործությունը բոլոր տարիքների և խմբերի կանանց և տղամարդկանց վրա:

Առաջարկվում է նաև ձեռնարկել հետևյալ գործողությունները՝ ուղղված տեղական մակարդակում գենդերազգայուն բյուջետավարման իրականացմանը.

- Խրախուսել պետական և տեղական իշխանությունների կողմից ԳԶԲ-ի իրականացումը,
- Օժանդակել տեղական մակարդակում ԳԶԲ-ի իրականացման համար մեթոդաբանական ուղեցույցների տարածմանը,

- Հիմնել տարբեր շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խումբ, խթանել և կազմակերպել ուսուցում,
- Կազմակերպել համայնքների աշխատակազմերի ուսուցում և տրամադրել տեխնիկական աջակցություն գեոդերազգայուն պլանավորման և բյուջետավարման վերաբերյալ,
- Աջակցել պետական և տեղական իշխանություններին, տեղական մակարդակում նախքան բյուջեի կազմումը գեոդերային վերլուծություններ կատարելու հարցում,
- Աջակցել համայնքներին ծրագրերի ու բյուջեների գեոդերային վերլուծությունների իրականացման գործում, այդ թվում՝ գեոդերային վիճակագրության հավաքագրման հարցում,
- Խթանել համայնքների միջև ԳԶԲ փորձառությունների և լավագույն գործելակերպերի փոխանակումը,
- Աջակցել տարբեր շահագրգիռ կողմերի գեոդերային հավասարության տեսանկյունից բյուջեի կատարման մշտադիտարկում իրականացնելու համար,
- Աջակցել ոչ պետական /համայնքահեն մշտադիտարկման և վերահսկողական աշխատանքների իրականացմանը և զեկույցների պատրաստմանը:

ՎԵՐՋՆԱԲԱՆ

Որպես վերջաբան արձանագրենք մի քանի դրույթներ, որոնք մեր իրականության մեջ գեոդերազգայուն բյուջետավարման գործընթացներում առաջացրել են թյուրըմբռնումներ: Այսպիսով՝


- ☑ ԳԶԲ-ները տղամարդկանց և կանանց համար նախատեսված առանձին բյուջե չեն, այլ՝ ծախսված պետական և համայնքային միջոցների ավելի թափանցիկ և արդյունավետ բաշխման և օգտագործման գործիք՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անհատի կարիքներն ու հետաքրքրությունները:
- ☑ Երկրները, որոնք կիրառել են գեոդերային բյուջետավարումը, բարելավել են իրենց քաղաքացիների տնտեսական և սոցիալական պայմանները, հատկապես կանանց, և արդյունքում հասել են ավելի լավ տնտեսական աճի՝ ավելացնելով թափանցիկությունն ու արդյունավետությունը պետական միջոցների օգտագործման հանդեպ (Ռուսաստան, Մալայզիա, Վրաստան, Շրի Լանկա, Հարավային Աֆրիկա, Մոլդովա, Ուկրաինա, Տանզանիա, Մարոկկոն և այլն):
- ☑ Շատ երկրներում գեոդերային բյուջետավարումը օգտագործվում է որպես տղամարդկանց և կանանց շահերի վրա ազդելու գործիք, գործազրկության և աղքատության կրճատման, ինչպես նաև բնակչության բարեկեցության բարձրացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ



- Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (1952)
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (1979 թ., ԿՆԽՎԿ)
- Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագիր (1993 թ.)
- Կահիրեում Բնակչության և զարգացման միջազգային համաժողով (1994թ., ԲՉՄՅ/ICPD)
- Պեկինյան Գործողությունների ծրագիր (1995թ.)
- Հազարամյակի զարգացման նպատակներ (2000 թ., ՀՉՆ-ներ)
- Կայուն զարգացման նպատակներ (2015թ., ԿՉՆ-ներ)
- Ադիս Աբեբայի Չարգացման ֆինանսավորման երրորդ միջազգային համաժողովի գործողությունների օրակարգը (ՄԱԿ, 2015 թ.)
- ԵԽ «Հռչակագիր կանանց և տղամարդկանց հավասարության մասին» (Նախարարների կոմիտե, 1988 թ. նոյեմբերի 16).
- ԵԽ «Հռչակագիր տղամարդկանց և կանանց հավասարության՝ որպես ժողովրդավարության գլխավոր չափանիշի մասին» (Եվրոպայի Նախարարների 4-րդ համաժողով կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ, Ստամբուլ, 1997 թ. նոյեմբերի 13-14)
- ԵԽ Գեներային հավասարություն. Հիմնարար խնդիր փոփոխվող հասարակություններում. Հռչակագիր և գործողությունների ծրագիր (ընդունվել է Կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ Եվրոպայի Նախարարների 5-րդ համաժողովում (Սկոպիե, 2003 թ. հունվարի 22-23)
- ԵԽ Հռչակագիր. «Գեներային հավասարությունն իրականություն դարձնելը» (Նախարարների կոմիտեի 119-րդ նստաշրջան, Մադրիդ, 2009 թ. մայիսի 12)
- ԵԽԽՎ բանաձևեր
- ԵԽ Նախարարների կոմիտեի եզրակացություններ
- Կանանց և տղամարդկանց հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքի վերաբերյալ Հռոմի պայմանագիր
- Տեղական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարության եվրոպական խարտիա (Ինսբրուկ, 2006 թ.)
- Փարիզի տեղական և տարածքային կառավարությունների գլոբալ օրակարգ տեղական կյանքում կանանց և տղամարդկանց հավասարության համար,
- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրություն
- ՀՀ Սահմանադրության
- ՀՀ օրենքը ՀՀ բյուջետային համակարգի մասին





- «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը ր միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», 19 սեպտեմբերի 2019 թվականի N 1334-L ՀՀ կառավարության որոշում
- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-57-Ն, Ընդունված 20.05. 2013 թ.
- «Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման», Oxygen/ ՊրոՄեդիա-Գենդեր ՀԿ, Երևան, 2018 թ.
- ԱՀԿ, գենդերային ուղղորդումը առողջապահության ոլորտի ղեկավարների համար. Գործնական մոտեցում, 2011 թ.
- Ասիայում և Խաղաղ օվկիանոսում գենդերազգայուն բյուջետավարում. հիմնական հասկացությունները և լավ պրակտիկաները, ՄԱԿ-ը 2018 թ.
- Կանանց իրավունքների բյուջետավորում. Կառավարության բյուջեների մոնիտորինգ CEDAW- ին համապատասխանության համար, Դայան Էլսոն, 2006 թ., UNIFEM
- Գենդերային բյուջետավարումը ՏՀԶԿ երկրներում, ՏՀԶԿ հանդես բյուջետավարման վերաբերյալ, հ. 2016/3, ՏՀԶԿ, 2017
- Բուլղերի, Դեբի, Դայան Էլսոն, Գայ Յյուվիտ և Թանի Մուխոփադիյա (2002), Գենդերային բյուջեները ցենտեր են կազմում. Հասկանանք Գենդերազգայուն բյուջեները, Լոնդոն. Համագործակցության քարտուղարություն
- «Գենդերազգայուն բյուջետավարում. Բյուջետային ծրագրերի վերլուծությունը գենդերային տեսանկյունից», «ՄԱԿ-ԿԱՆԱՅԵ», 2017 թ.
- Շարփ, Ռ. (2003), Բյուջետավորում հավասարության և արդարության համար. Գենդերային բյուջետային նախաձեռնություններ կատարողականության վրա հիմնված բյուջեի շրջանակներում
- Բյուջե՝ գենդերային և մարդու իրավունքների միջազգային պարտավորությունների կատարման համար, UNIFEM 2004
- Կ. Ռեյք: Ներկայացնելով մարդկային գործոնը Տնտեսությունում. Բյուջեի գենդերավորում \ \ Գենդերային օրակարգ. Ասիա-Եվրոպա երկխոսություն, կանանց և տղամարդկանց համար նոր տեսլականներ և հեռանկարներ: Չիբա, Ճապոնիա, 2001
- «Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ» մեթոդական ձեռնարկ, հաստատված՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 19.10.2012թ. թիվ 93-Ա/1 հրամանով
- «Համայնքի բյուջեի և ներդրումային հանրային ծրագրերի այլընտրանքները ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի և Գորիս խոշորացված համայնքներում- Զննարկումների արդյունքների վերլուծություն», Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2018
- «Գենդերազգայուն բյուջետավարում(ԳԶԲ) -Հայեցակարգի նախագիծ» GIZ, 2019
- «Շտեմարան-Համայնքի արդյունքահեն բյուջեի միջոցառումների արդյունքային չափորոշիչների (ոչ ֆինանսական ցուցիչների)»-GIZ, Երևան 2016
- Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգ



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ



- **Գեները** վերաբերում է կանանց և տղամարդկանց սոցիալապես կառուցված հատկանիշներին, ինչպիսիք են նորմերը, դերերը և կանանց և տղամարդկանց խմբերի միջև և նրանց միջև փոխհարաբերությունները: Թեև մարդկանց մեծամասնությունը ծնվում է տղամարդ կամ կին, նրանց սովորեցվում են համապատասխան նորմեր և վարքագիծ, ներառյալ, թե ինչպես նրանք պետք է շփվեն նույն կամ հակառակ սեռի հետ տնային տնտեսություններում, համայնքներում և աշխատատեղերում: Երբ անհատները կամ խմբերը չեն համապատասխանում սահմանված գեներային նորմերին, նրանք հաճախ բախվում են խտրական վերաբերմունքի կամ սոցիալական բացառմանը, որոնք բացասաբար են անդրադառնում առողջության վրա: (ԱՅԿ, գեներային ուղղորդումը առողջապահության ոլորտի ղեկավարների համար. Գործնական մոտեցում, 2011 թ.)
 - **Գեներային հավասարությունը** վերաբերում է կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններին՝ սոցիալական, տնտեսական և քաղաքական ռեսուրսների, այդ թվում՝ օրենքով նախատեսված պաշտպանության, կառավարման և վերահսկման համար: Այն նաև հայտնի է որպես հնարավորությունների հավասարություն կամ իրական հավասարություն:
 - **Գեներային արդարություն:** Ավելին, քան հնարավորությունների իրական հավասարությունը, գեներային արդարությունը վերաբերում է կանանց և տղամարդկանց տարբեր կարիքներին, նախասիրություններին և հետաքրքրություններին: Սա նշանակում է, որ հնարավորությունների հավասարությունն ապահովելու համար անհրաժեշտ է տարբեր մոտեցում: Դա հաճախ անվանում են էական հավասարություն (կամ արդյունքների հավասարություն) և այն պահանջում է հաշվի առնել կանանց և տղամարդկանց կյանքի իրողությունները: (ԱՅԿ, 2011 թ.)
-
- **Գեներային նորմերը** վերաբերում են կանանց և տղամարդկանց, տղաների և աղջիկների հավատալիքներին, որոնք նրանք ստանում են սոցիալականացման գործընթացում: Նրանք ժամանակի ընթացքում փոխվում են և տարբերվում են տարբեր մշակույթների և պոպուլյացիաների մեջ: Գեներային նորմերը, եթե ամրապնդվեն, հանգեցնում են անհավասարության. Ա) մեկ կամ մյուս խմբի կամ սեռի նկատմամբ վատ վերաբերմունքի, բ) ուժի և հնարավորությունների տեսակետից տարբերությունների:
 - **Գեներային դերերը** վերաբերում են նրան, թե տվյալ հասարակությունում ինչ գործելակերպ են ակնկալում կանանցից և տղամարդկանցից (տնային տնտեսությունում, համայնքում և աշխատավայրում):

- **Գեղերային հարաբերությունները** վերաբերում են կանանց և տղամարդկանց միջև սոցիալական հարաբերություններին, որոնք հիմնված են գեղերային նորմերի և դերերի վրա: Գեղերային հարաբերությունները հաճախ ստեղծում են ենթակայություններ, կարող են հանգեցնել անհավասար ուժային հարաբերությունների և հնարավորությունների պակասի: (ԱՅԿ, 2011թ.)

-
- **Գործնական գեղերային կարիքները** ծագում են այն իրական պայմաններից, որ կանայք և տղամարդիկ ունենում են հասարակության մեջ նրանց տրված գեղերային դերերի պատճառով: Դրանք հաճախ կապված են կանանց մայր լինելու, տնային տնտեսությունների և հիմնական կարիքների համար պատասխանատու լինելու, ինչը կանանց մոտ առաջացնում է մտահոգություն կենսապայմանների և աշխատանքային պայմանների անբավարարության, ինչպիսիք են՝ սնունդ, ջուր, ապաստարան, եկամուտ, առողջապահություն և զբաղվածություն:
 - **Ռազմավարական գեղերային կարիքները** հասարակության մեջ տղամարդկանց նկատմամբ կանանց ենթակայական դիրքի հաղթահարման համար անհրաժեշտ պահանջներն են և վերաբերում են կանանց հզորացմանը: Դրանք տարբերվում են ըստ այն սոցիալական, տնտեսական և քաղաքական առանձնահատկությունների, որոնցում ձևակերպված են: (ԱՄԿ, 2000 թ.)

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում գենդերային իրավիճակը բնութագրվում է, մի կողմից, դե յուրե բարենպաստ օրենսդրական դաշտով՝ այն է ՀՀ Սահմանադրությամբ քաղաքացիների հավասար իրավունքների ապահովման ամրագրում, Կառավարության կողմից գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների ծրագրի ընդունում և 2013 թվականին «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունում, մյուս կողմից՝ դե ֆակտո պետության կողմից հայտարարված գենդերային հավասարության նպատակների իրագործմանը կոչված մեխանիզմների բացակայություն:

Չնայած գենդերային հավասարությանն ուղղված ՀՀ նախաձեռնություններին և իրավական ակտերով նախատեսված պարտավորություններին, իրավիճակը դեռևս մնում է նույնը, հատկապես՝ իրական հավասարության տեսանկյունից, ինչը ներառում է ոչ միայն հավասար իրավունքներ, այլև հնարավորությունների և արդյունքների հավասարություն: Հետտորաբանության և իրականության միջև եղած այս անջրպետն ամենացայտուն կերպով դրսևորվում է առավել սուր խնդիրների դեպքում, ինչպիսիք են կանանց քաղաքական և տնտեսական որոշումների կայացման գործընթացին մասնակցության անբավարար լինելը, աղքատության ֆեմինիզացման և ցածր վարձատրվող աշխատանքներում և գործազուրկների թվում կանանց բարձր տեսակարար կշիռը, որոնք էլ ավելի են խաթարում հասարակության մեջ կանանց կարգավիճակը:

Հայաստանում գենդերային իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի սոցիալական և պետական համակարգը դեռևս չի կարելի անվանել գենդերազգայուն: Չնայած կանանց բարձր կրթական ներուժին, նրանք իրականում բացառված են կառավարման և զարգացման գործընթացներից: Նման իրավիճակը բնութագրվում է որպես մարդկային ռեսուրսների անարդյունավետ օգտագործում և որպես ժողովրդավարության պակասուրդ, որն անմիջական ազդեցություն է ունենում երկրի զարգացման գործընթացների և նրա մրցունակության վրա:

Գենդերային անհավասարակշռության և երկրի մրցունակության միջև փոխկապակցվածությունն արտացոլվում է **Գենդերային ճեղքվածքի ցուցանիշով**: Գենդերային ճեղքվածքի ցուցանիշի համաձայն, առավել խնդրահարույց են տնտեսության, քաղաքականության և առողջապահության ոլորտները: Առողջապահության ոլորտում, որտեղ հաշվի են առնվում կյանքի տևողության և ծննդյան պահին սեռերի հարաբերակցության միջև եղած տարբերությունները, Հայաստանն աշխարհում զբաղեցնում է 97-րդ հորիզոնականը՝ հղիության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատման պրակտիկայի և քաղաքական հզորացման ցածր ցուցանիշի (ինչը պայմանավորված է որոշումների կայացման մակարդակում սեռերի ներկայացվածության տարբերությամբ) պատճառով:

Ինչ վերաբերում է տնտեսական ոլորտում գենդերային անհավասարակշռության ցուցանիշներին (տղամարդկանց և կանանց զբաղվածության մակարդակը, տղամարդկանց և կանանց վարձատրությունը հավասար աշխատանքի դիմաց, տղամարդկանց և կանանց մասնաբաժինը մասնագետների և տեխնիկական անձնակազմի մեջ), Հայաստանը զբաղեցնում է 42-րդ տեղը:

Գենդերային ճեղքվածքի գլոբալ գեկույց	Գենդերային ճեղքվածքի ցուցանիշ	Հայաստանը 97-րդ տեղում է 144 երկրների շարքում
«Social Watch» գեկույց, 2017 թ.	Գենդերային արդարության ցուցանիշ	Հայաստանը 61-րդ տեղում է 168 երկրների շարքում
Համաշխարհային տնտեսական ֆորում, 2017թ.	Մարդկային կապիտալի ցուցանիշ	Հայաստանը 42-րդ տեղում է 130 երկրների շարքում

Հայաստանի մարդկային զարգացման 2017 թվականի համաթիվը կազմել է 0.755: Այնուամենայնիվ, երբ արժեքը նվազեցվում է անհավասարության հետևանքով, ՄՉՀ-ն ընկնում է մինչև 0.680, կորուստը 10.0 տոկոսով՝ ՄՉՀ-ի չափման ցուցանիշների բաշխման անհավասարությունների հետևանքով: Աղբյուրները և Վրաստանը անհավասարության պատճառով կորուստներ են արձանագրել, համապատասխանաբար, 10.0%-ի և 12.6%-ի չափով: Բարձր ՄՉՀ ունեցող երկրների դեպքում անհավասարության պատճառով միջին կորուստը 16.0 տոկոս է, իսկ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի համար՝ 11.7 տոկոս:

Հայաստանի համար մարդկային անհավասարության գործակիցը հավասար է 9.8 տոկոսի:



Մարդկային զարգացման համաթիվը (ՄՉՀ/HDI)

ամփոփ միջոց է՝ գնահատելու երկարաժամկետ առաջընթացը մարդկային զարգացման երեք հիմնական հարթություններում.

Երկար և առողջ կյանք, գիտելիքի հասանելիություն և պատշաճ կենսամակարդակ:

2017 թվականին Հայաստանի համար այն գնահատվում էր **0.755**,

ինչը երկիրը դնում էր մարդկային զարգացման բարձր կատեգորիայում, և Հայաստանը

189 երկիրների և տարածքների շարքում զբաղեցնում էր **83-րդ հորիզոնականը:**

Գենդերային զարգացման ցուցանիշը (ԳԶՑ/GDI) հիմնված է ըստ սեռի տարաբաժանված մարդկային զարգացման համաթվի վրա, որը սահմանվում է որպես կանանց և տղամարդկանց ՄՉՀ-ների հարաբերակցություն:

ԳԶՑ-ն չափում է գենդերային անհավասարությունները մարդու զարգացման երեք հիմնական հարթություններում.

- **առողջություն** (չափվում է ծննդյան պահին կանանց և տղամարդկանց կյանքի տևողությամբ),
- **կրթություն** (չափվում է երեխաների ուսման ակնկալվող տարիներով), և
- **տնտեսական ռեսուրսների տիրապետում** (չափվում է կանանց և տղամարդկանց մեկ շնչի հաշվով համախառն ներքին եկամտի չափով):



ԳԶՑ-ն հաշվարկվում է 164 երկրների համար:
2017 թվականին
կանանց ՄՉՀ-ի արժեքը 0.740 էր, իսկ
տղամարդկանց ՄՉՀ-ի արժեքը՝ 0.764, արդյունքում
ԳԶՑ արժեքը կազմել է 0.969

Միևնույն ժամանակ, Հայաստանի աշխատաշուկայում իրավիճակը բնութագրվում է աշխատաշուկայի ուղղահայաց (կարիերայի հնարավորությունների անհավասար հասանելիություն) և հորիզոնական (աշխատատեղերում և զբաղվածության ոլորտներում) սեգրեգացիայով, ինչը հանգեցնում է վարձատրության զգալի տարբերությունների: 2017 թվականի տվյալներով՝ կանանց միջին վարձատրությունը կազմում էր տղամարդկանց վարձատրության մոտ 65%-ը, և այդ ցուցանիշը ամենաբարձրն է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ու ԱՊՀ երկրների շարքում: Վարձատրության գենդերային տարբերությունը միշտ չէ, որ նվազում է կանանց կրթության մակարդակի բարձրացմամբ, քանի որ գոյություն ունեն նաև կանանց կարիերայի աճի խոչընդոտներ: Այսպիսով, ուղղահայաց սեգրեգացիան մտնում է նույնիսկ այն ոլորտներում, որտեղ կանանց զբաղվածությունն ավանդաբար գերակշռում է, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, մշակույթը, սոցիալական ապահովությունը և գյուղատնտեսությունը: Կանանց աջակցության պետական միջոցները ընտանեկան պարտականությունները կարիերայի հետ համատեղելու հարցում բավարար չեն:

Գենդերային անհավասարության ինդեքսը (ԳԱԻ/GII)

արտացոլում է գենդերային անհավասարությունները երեք հարթություններում.

Վերարտադրողական

առողջությունը չափվում է մայրական մահացության և դեռահասների ծնելիության մակարդակով:

Հզորացումը չափվում է կանանց կողմից զբաղեցված խորհրդարանական տեղերի մասնաբաժնով և միջին ու բարձրագույն կրթության հասանելիությամբ յուրաքանչյուր սեռի համար:

Տնտեսական ակտիվությունը

չափվում է աշխատաշուկային կանանց և տղամարդկանց մասնակցության մակարդակներով:

ԳԱԻ-ն կարելի է մեկնաբանել որպես մարդկային զարգացման կորուստ՝ ԳԱԻ երեք հարթություններում կանանց և տղամարդկանց ձեռքբերումների միջև անհավասարության պատճառով:

Հայաստանի ԳԱԻ արժեքը կազմում է 0.262՝

դասակարգելով այն

160 երկրներից 55-րդը:

Հայաստանում խորհրդարանական տեղերի 24 տոկոսը զբաղեցնում են կանայք, իսկ մեծահասակ կանանց 96.9 տոկոսը հասել է կրթության առնվազն երկրորդական մակարդակի՝ համեմատած իրենց արական գործընկերների 97.6 տոկոսի հետ: Յուրաքանչյուր 100,000 կենդանի ծնունդի հաշվով 25 կին մահանում է հղիության հետ կապված պատճառներով, իսկ դեռահասների ծնելիության մակարդակը կազմում է 23.2 ծնունդ՝ 15-19 տարեկան 1000 կանանց հաշվով: Կանայք կազմում են գործազուրկ բնակչության 48%-ը, իսկ տղամարդիկ՝ 52%-ը:

Կանանց մասնաբաժինը աշխատանքային ռեսուրսներում ավելի մեծ է, քան տղամարդկանցը: Այնուամենայնիվ, կանանց միայն 55.8%-ն է տնտեսապես ակտիվ, իսկ տղամարդկանց՝ 70.7%-ը: Կանայք կազմում են զբաղված բնակչության 48%-ը, իսկ տղամարդիկ՝ 52%-ը: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազուրկների 71.3%-ը կանայք են, մինչդեռ աշխատանքային միգրացիան զգալի տեղ է գրավում տղամարդկանց զբաղվածության կառուցվածքում: (ՀՀ ՎԿ 2018)

Կառավարությունը մասնավոր հատվածի, հատկապես փոքր և միջին բիզնեսի ընդլայնված զարգացումը համարում է զբաղվածության և սոցիալական խնդիրների լուծման արդյունավետ միջոց: Ըստ Հայաստանի գործատուների հանրապետական միության, փոքր, միջին և խոշոր ձեռնարկատերերի շրջանում կանայք կազմում են ոչ ավելի, քան 10%: Միկրոբիզնեսում կանանց թիվն ավելի մեծ է և կազմում է 20-25%:

Այն խոչընդոտները, որոնք պետք է հաղթահարեն կանայք՝ նախքան բիզնես մուտք գործելը, ներառում են անորոշության և ռիսկի զգացողություն, գործարար կապերի բացակայություն, կանանց դերի և տնտեսության ու մասնավորապես բիզնեսի մեջ կրանց մասնակցության վերաբերյալ արմատացած և շարունակական դարձած կարծրատիպերը: Օբյեկտիվ պատճառները ներառում են միջոցների սահմանափակ լինելը, վարկեր ստանալու դժվարությունները, գրավադրման համար դրամական միջոցների և գույքի բացակայությունը, ծանր տոկոսադրույքները, անբարենպաստ բիզնես միջավայրը և պաշտոնատար անձանց ոչ պաշտոնական վճարումները՝ բիզնեսը հեշտացնելու նպատակով:

Երկրի կառավարման համակարգը նույնպես բնութագրվում է որոշումների կայացման մակարդակում կանանց ցածր ներկայացվածությամբ: 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո ՀՀ Ազգային ժողովում խորհրդարանականների 24%-ը կազմում են կանայք: Կառավարման գործադիր մարմնում նախարարի քաղաքական պաշտոնում կա ընդամենը 1 կին (12-ից) և 12 կին (26%)՝ փոխնախարարի քաղաքական (բայց ոչ՝ որոշում կայացնող) պաշտոնում: Մարզպետների շրջանում կին չկա, և մարզպետների 15 տեղակալներից միայն 2-ն են կին (տվյալները 2019 թվականի սեպտեմբերի դրությամբ են): Ժողովրդավարության անցման ողջ ընթացքում կանայք երբեք չեն առաջադրվել ՀՀ նախագահի պաշտոնում և երբեք չեն զբաղեցրել ՀՀ վարչապետի կամ Ազգային ժողովի նախագահի պաշտոնները:

Այսպիսով, **կառավարման բուրգը**, որը հիմնականում տղամարդակենտրոն է և չի արտացոլում սոցիալական ուժերում գոյություն ունեցող գենդերային հավասարակշռությունը, քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների անհավասարությունը և որոշ լրատվամիջոցների կողմից պահպանվող և նույնիսկ կառուցվող գենդերային դերերի բաժանումը խոչընդոտում են հասարակության ժողովրդավարացման գործընթացներին և, ի թիվս այլ հարցերի, առաջացնում են խտրական միջավայր և իրավիճակ:

Կանանց ներուժի ոչ բավարար օգտագործում և աշխատաշուկայում կանանց նկատմամբ խտրականություն¹¹

- Կանանց զբաղվածության սահմանափակումների և նրանց նկատմամբ աշխատանքի շուկայում գոյություն ունեցող խտրականության հետևանքով Հայաստանը համախառն ներքին արդյունքի տարեկան ցուցանիշում առնվազն 50-60 մլն դոլար է կորցնում: («Հայաստանում կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», ՄԱԲՀ, 2016 թվական)
- Տնտեսապես ակտիվ է (զբաղված է կամ փնտրում է աշխատանք) կանանց 54.3%-ը, իսկ տղամարդկանց՝ 72.6%-ը:
- Տնտեսապես ոչ ակտիվ կանանց 90%-ը տնային տնտեսուհիներ են, ընդ որում, այդ կանանց 40 տոկոսը բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունի:

¹¹ **Աղբյուրը.** Վերամշակված է «Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման», Oxygen/ՊրոՄեդիա-Գենդեր ՀԿ, Երևան, 2018 թ.

- Գործատուների և ինքնազբաղվածների մեծամասնությունը տղամարդիկ են:
- Կանանց միջին վարձատրությունը 34%-ով ցածր է տղամարդկանց վարձատրությունից, իսկ եկամտի բացը նույնիսկ ավելի խորն է և հասնում է 40%-ի, չնայած այն հանգամանքին, որ մասնագիտական կամ բարձրագույն կրթությամբ աշխատուժում կանայք կազմում են 58%, իսկ տղամարդիկ՝ 45%:

Հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ խտրականություն և ոչ լիարժեք սոցիալական ներառում

- Հայաստանում հաշվառված է հաշմանդամություն ունեցող 205,166 մարդ, այդ թվում՝ 99,888 կին (ՀՀ ԱՍՀՆ, 2018 թվական): Ի տարբերություն հաշմանդամություն ունեցող տղամարդկանց, կանայք կրկնակի խոցելի են. հաշմանդամություն ունեցող կանայք ավելի շատ են ենթարկվում խտրականության, ինչպես նաև հոգեբանական, ֆիզիկական և սեռական բռնության:
- Համաձայն ՅՈՒՆԻՍԵֆ-ի հայաստանյան գրասենյակի տվյալների, հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր 6 երեխայից մեկը կամ 16%-ն ապրում կամ սովորում է մանկատանը կամ հատուկ տիպի գիշերօթիկ դպրոցում: Ավելին, հաշմանդամություն ունեցող աղջիկներին համեմատաբար ավելի հաճախ են հանձնում մանկատուն, քան տղաներին, և նրանց ավելի քիչ են այցելում:
- Հասարակությունից մեկուսացվելու աղջիկների ռիսկն ավելի մեծ է: Հաշմանդամություն ունեցող տղաների 5%-ը և աղջիկների 7%-ը երբեք դուրս չի գալիս տնից կամ դուրս է գալիս միայն բժշկին այցելելու նպատակով:
- Հաշմանդամություն ունեցող 5 երեխաներից 1-ը կամ 18%-ը, այդ թվում՝ տղաների 17%-ը և աղջիկների 21%-ը, դպրոց չի հաճախում: Հենաշարժական և/կամ մտավոր խնդիրներ ունեցող երեխաների խմբում այս ցուցանիշը կազմում է 26-27%: Դպրոց չհաճախելու լրացուցիչ խոչընդոտ են նաև կարծրատիպային բնույթի պատճառները: Առավել խոցելի են այդ առումով հաշմանդամություն ունեցող աղջիկները:
- Ծայրահեղ աղքատության ռիսկը ավելի մեծ է մեկ կամ մի քանի հաշմանդամություն ունեցող երեխաներով տնային տնտեսություններում. նրանց 43.9%-ն աղքատ է, իսկ 6.7%-ը ծայրահեղ աղքատության մեջ է:

Ժողովրդագրական անկում, ծնելիության նվազում և արտագաղթ

- 2017-ին մեկ կնոջ հաշվով ծնելիության մակարդակը 1.645 է, ինչը ցածր է փոխարինման պտղաբերության մակարդակից (2150 միավոր):
- Աղքատության ռիսկը ավելի մեծ է մեծ թվով երեխաներ ունեցող ընտանիքներում. երեք և ավելի մինչև 18 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսությունների 45.8%-ն աղքատության մեջ է, համեմատած բոլոր երեխաների շրջանում արձանագրված 34% միջին մակարդակի հետ, իսկ բազմազավակ ընտանիքների երեխաների 5.3%-ն ապրում է ծայրահեղ աղքատության մեջ՝ համեմատած 3.3% միջին ցուցանիշի հետ:
- Երեխաների ընդհանուր թվի մեկ քառորդը (25.3%) ապրում է կանանց գլխավորած տնային տնտեսություններում, և նրանց 42.3%-ն ապրում է աղքատության մեջ, մինչդեռ տղամարդկանց գլխավորած տնային տնտեսությունների համար նույն ցուցանիշը կազմում է 31.5%:
- 2015 թվականին մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների 23.4%-ն ստանում է ընտանեկան նպաստ: Պետական բյուջեից ֆինանսավորվող «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրերի ինքնուրույն գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ծայրահեղ աղքատության մեջ գտնվողների գրեթե կեսը ներառված չի եղել ընտանեկան նպաստի համակարգում, իսկ սոցիալական ապահովության

նպաստառուների գրեթե 44%-ն աղքատ չեն եղել:

- Առողջապահական հիմնարկի համալրվածությունը անհրաժեշտ մասնագետներով
- Մատուցվող ծառայությունների դիմաց գանձված վճարների գումարի հարաբերակցությունն ծառայությունների մատուցման ընդհանուր ծախսերի նկատմամբ

Ժամկետայնության ցուցանիշներ

- Առողջապահական հիմնարկի կողմից ծառայությունների մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում
- Առողջապահական հիմնարկի կողմից ծառայությունների մատուցման ամիսների թիվը տարվա ընթացքում

Բաժին (Ոլորտ) 8. Հանգիստ, մշակույթ և կրոն

8.1. Մարզական ծառայություններ

Քանակական ցուցանիշներ

- Մարզադպրոցների թիվը
- Ոլորտի աշխատողների ընդհանուր թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մարզիչների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մարզաձևերի թիվը
- Գործող խմբակների թիվը
- Մարզադպրոց հաճախող երեխաների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մարզադպրոց հաճախող երեխաների թիվը, որոնք ներկայացնում են սոցիալական տարբեր խմբեր (կարիքավոր ընտանիքներ, հաշմանդամներ, փախստականներ, այլազգիներ և այլն) թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մեկ երեխայի համար մարզական ծառայության դիմաց գանձվող ծնողական վճարի չափը
- Ձեռք բերված մարզական գույքի միավորների թիվը
- Ձեռք բերված մարզական սարքավորումների թիվը
- Տարվա ընթացքում մրցաշարերին մասնակցած մարզիկների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Տարվա ընթացքում կազմակերպված մարզական մրցաշարերի թիվը
- Տարվա ընթացքում հանրապետական և միջազգային մրցաշարերին համայնքից մասնակցած մարզիկների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __

Որակական ցուցանիշներ

- Մարզադպրոցի ծանրաբեռնվածության հարաբերակցությունը նրա հզորությանը՝ Զամայնքում մարզադպրոց հաճախած երեխաների տեսակարար կշիռը դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ

- Մեկ երեխայի հաշվով մարզական ծառայության մատուցման ծախսերի գումարը
- Մատուցվող մարզական ծառայությունների համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին
- Ծնողների կարծիքը մատուցված մարզական ծառայությունների վերաբերյալ
- Ծնողների կարծիքը կազմակերպված մարզական մրցաշարերի վերաբերյալ
- Մեկ մարզաաձևի գծով ուսումը շարունակողների թիվը
- Տարվա ընթացքում հանրապետական և միջազգային մրցաշարերում համայնքի երեխաների հաջողությունները (գրաված տեղերը, շահած մեդալները, գավաթները, պատվոգրերը և այլն)
- Մարզական մատուցված ծառայության դիմաց գանձվող ծնողական վճարների գումարի հարաբերակցությունը ծառայության մատուցման ընդհանուր ծախսերի նկատմամբ
- Ծնողական վճարներից ազատման արտոնությունների առկայությունը
- Մեկ մարզիչի հաշվով մարզադպրոց հաճախող երեխաների թիվը
- Մարզադպրոցի գույքի և սարքավորումների վիճակը
- Մարզադպրոցի շենքի վիճակը
- Սոցիալական տարբեր խմբեր (կարիքավոր ընտանիքներ, հաշմանդամներ, փախստականներ, այլազգիներ և այլն) ներկայացնող բոլոր երեխաների կազմում մարզադպրոց հաճախած երեխաների տեսակարար կշիռը
- Մարզադպրոցի համալրվածությունը անհրաժեշտ մարզիչներով
- Տարվա ընթացքում կազմակերպված մարզական մրցաշարերին երեխաների մասնակցության արդյունքները
- Համայնքի ապահովվածությունը մարզադաշտերով և խաղահրապարակներով
- Համայնքի մարզադաշտերի և խաղահրապարակների վիճակը

Ժամկետայնության ցուցանիշներ

- Մարզադպրոցում մեկ դասաժամի տևողությունը
- Մարզադպրոցի կողմից ծառայությունների մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում
- Հարկադիր պարապուրդի օրերի թիվը տարվա ընթացքում
- Մարզադպրոցի կողմից ծառայությունների մատուցման ամիսների թիվը տարվա ընթացքում
- Մարզադպրոց երեխաների հաճախումների թիվը շաբաթվա կտրվածքով
- Մարզադպրոցի մարզիչների վերատրաստման հաճախականությունը
- Տարվա ընթացքում կազմակերպված մարզական մրցաշարերի թիվը

8.2. Մշակութային ծառայություններ, թանգարաններ

Քանակական ցուցանիշներ

- Մշակութային կազմակերպությունների թիվը
- Ոլորտի աշխատողների ընդհանուր թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մանկավարժների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Վարչական աշխատողների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մշակութային բաժինների թիվը
- Խմբակների թիվը
- Հաճախող երեխաների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Հաճախող երեխաների թիվը, որոնք ներկայացնում են սոցիալական տարբեր խմբեր (կարիքավոր ընտանիքներ, հաշմանդամներ, փախստականներ, այլազգիներ և այլն) թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մեկ երեխայի համար մշակութային ծառայությունների մատուցման դիմաց գանձվող ծնողական վճարների չափերը
- Ձեռք բերված գույքի, սարքավորումների թիվը
- Տարվա ընթացքում կազմակերպված մշակութային միջոցառումների թիվը
- Տարվա ընթացքում կազմակերպված միջոցառումների թիվը՝ նվիրված տոնական օրերին
- Տարվա ընթացքում կազմակերպված միջոցառումների թիվը՝ նվիրված հիշատակի օրերին

- Տարվա ընթացքում կազմակերպված անվճար ներկայացումների թիվը
- Արձակուրդների ընթացքում կազմակերպված միջոցառումների թիվը
- Տարվա ընթացքում կազմակերպված հաշվետու համերգների թիվը
- Տարվա ընթացքում կազմակերպված փառատոնների թիվը
- Տարվա ընթացքում ներկայացված նոր բեմադրությունների թիվը
- Տարվա ընթացքում թանգարան այցելուների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Պահպանվող թանգարանային ցուցանմուշների թիվը

Որակական ցուցանիշներ

- Մշակութային հիմնարկի, թանգարանի ծանրաբեռնվածության հարաբերակցությունը նրա հզորությանը
- Համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռն ընդհանուր դպրոցահասակների երեխաների թվի մեջ
- Մեկ երեխայի հաշվով մշակութային հիմնարկի պահպանման ծախսերի գումարը և համապատասխանությունը նորմատիվներին
- Մեկ երեխայի համար գանձվող ծնողական վճարի հարաբերակցությունը ընդհանուր ծախսերի նկատմամբ
- Ծնողական վճարներից ազատման արտոնությունների առկայությունը
- Մատուցվող ծառայությունների համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին
- Բնակիչների կարծիքը մատուցվող մշակութային ծառայությունների վերաբերյալ
- Մշակութային հիմնարկի, թանգարանի գույքի և սարքավորումների վիճակը
- Մշակութային հիմնարկի, թանգարանի շենքի վիճակը
- Սոցիալական տարբեր խմբեր (կարիքավոր ընտանիքներ, հաշմանդամներ, փախստականներ, այլազգիներ և այլն) ներկայացնող բոլոր երեխաների կազմում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռը
- Մշակութային հիմնարկների համալրվածությունը անհրաժեշտ մանկավարժներով
- Մեկ մասնագիտության գծով ուսումը շարունակողների թիվը
- Մեկ մանկավարժի հաշվով երեխաների թիվը
- Հանրապետական, միջազգային փառատոններին, ցուցահանդեսներին երեխաների մասնակցության արդյունքները
- Բնակչության շրջանում մշակույթի նկատմամբ հետաքրքրվածության բարձրացում(%-ով)
- Մեկ միջոցառման ժամանակ դահլիճի միջին բեռնվածությունը (%)

Ժամկետայնության ցուցանիշներ

- Մշակութային հիմնարկում մեկ դասաժամի տևողությունը
- Երեխաների հաճախումների թիվը շաբաթվա կտրվածքով
- Մշակութային հիմնարկի, թանգարանի կողմից ծառայության մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում
- Մշակութային հիմնարկի, թանգարանի կողմից ծառայության մատուցման ամիսների թիվը տարվա ընթացքում
- Հարկադիր պարապուրդի օրերի թիվը տարվա ընթացքում
- Տարվա ընթացքում կազմակերպված մշակութային միջոցառումների հաճախականությունը (ամսական, եռամսյակային կամ տարեկան կտրվածքով)
- Մանկավարժների վերապատրաստման հաճախականությունը

8.3. Գրադարանային ծառայություններ

Քանակական ցուցանիշներ

- Գրադարանների թիվը
- Աշխատողների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Գրադարանավարների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Գրքային ֆոնդի ծավալը (կտոր գիրք)

- Տարվա ընթացքում ձեռքբերված գրքերի թիվը
- Գրադարաններից օգտվողների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Տարվա ընթացքում կազմակերպված՝ գրողների, հանրաճանաչ մարդկանց հետ հանդիպումների թիվը
- Տարվա ընթացքում կազմակերպված՝ գրքերի շնորհանդեսների թիվը
- Ձեռք բերված գույքի միավորների թիվը

Որակական ցուցանիշներ

- Գրադարանի ծանրաբեռնվածության հարաբերակցությունը նրա հզորությանը
- Մատուցվող ծառայության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին
- Բնակիչների կարծիքը մատուցվող ծառայությունների վերաբերյալ
- Գրադարանի գույքի վիճակը
- Գրադարանի շենքի վիճակը
- Գրքային ֆոնդի վիճակը
- Գրքային ֆոնդի համալրման տոկոսը
- Գրադարանի հագեցվածությունը համակարգիչներով
- Գրադարանի համալրվածությունը անհրաժեշտ աշխատողներով

Ժամկետայնության ցուցանիշներ

- Գրադարանային ծառայությունների մատուցման ամիսների թիվը տարվա ընթացքում
- Գրադարանային ծառայությունների մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում
- Հարկադիր պարապուրդի օրերի թիվը տարվա ընթացքում
- Գրադարանի աշխատողների վերպատրաստման հաճախականությունը
- Գրքային ֆոնդի համալրման հաճախականությունը

Բաժին (Ոլորտ) 9. Կրթություն

9.1. Նախադպրոցական կրթություն

Քանակական ցուցանիշներ

- Մտեր-մանկապարտեզների կամ նախակրթարանների թիվը
- Աշխատողների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Դայակների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Դաստիարակների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մանկապարտեզի խմբերի թիվը
- Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մեկ խմբի երեխաների միջին թիվը
- Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը, որոնք ներկայացնում են սոցիալական տարբեր խմբեր (կարիքավոր ընտանիքներ, հաշմանդամներ, փախստականներ, այլազգիներ և այլն թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Օրվա ընթացքում սննդի տրամադրման թիվը
- Մեկ երեխայի համար գանձվող ծնողական վճարի չափը
- Մանկապարտեզի համար ձեռքբերված փափուկ կամ կոշտ գույքի միավորների թիվը (սպիտակեղեն, սպասք, սեղան, աթոռ, պահարան, խաղալիքներ և այլն)
- Տարվա ընթացքում կազմակերպված հաշվետու հանդեսների թիվը
- Մանկապարտեզում վճարովի ծառայությունների տեսակները, խմբերի, երեխաների թվերը

Որակական ցուցանիշներ

- Երեխաների տարեկան միջին հաճախելիությունը
- Երեխաների հիվանդանալու միջին տարեկան ցուցանիշը
- Մեկ երեխայի հաշվով մանկապարտեզի պահպանման ծախսերի գումարը և համապատասխանությունը նորմատիվներին

- Մեկ երեխայի հաշվով սննդի օրական ծախսերը
- Մանկապարտեզի ծանրաբեռնվածության հարաբերակցությունը նրա հզորությանը
- Երեխաներին տրամադրվող սննդի որակը և կալորիականությունը
- Մատուցվող ծառայության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին
- Ծնողների կարծիքը մատուցվող ծառայությունների վերաբերյալ
- Ծնողների կարծիքը կազմակերպված հաշվետու հանդեսների վերաբերյալ
- Մեկ երեխայի համար գանձվող ծնողական վճարի հարաբերակցությունն ընդհանուր ծախսերին
- Ծնողական վճարներից ազատման արտոնությունների առկայությունը
- Մանկապարտեզի գույքի վիճակը
- Մանկապարտեզի շենքի վիճակը
- Մանկապարտեզում ջեռուցման համակարգի առկայությունը
- Մանկապարտեզի սանիտարահիգիենիկ պայմանների համապատասխանությունը նորմատիվ պահանջներին
- Սոցիալական տարբեր խմբեր (կարիքավոր ընտանիքներ, հաշմանդամներ, փախստականներ, այլազգիներ և այլն) ներկայացնող երեխաների կազմում մանկապարտեզ հաճախողների տեսակարար կշիռը
- Մանկապարտեզի համալրվածությունը անհրաժեշտ դաստիարակներով
- Անձնական խնամքի և անվտանգության պահպանման ունակությունների առկայությունը երեխաների մոտ (ինքնուրույն լվացվելը, հագնվելը, սպասքից օգտվելը, շրջապատում առկա վտանգավոր առարկաների նկատմամբ զգուշության պահպանումը և այլն)
- Երեխաների սոցիալականացումը և զգացմունքային զարգացումը (ինքնաճանաչումը, հասակակիցների հետ շփումը, զգացմունքների արտահայտման կարողությունը, մտավոր և ստեղծագործական կարողությունների զարգացումը և այլն)
- Մատուցվող ծառայության մատչելիությունը (արդյոք բոլոր ցանկացողները հնարավորություն ունեն օգտվելու ծառայությունից)
- Մատուցվող ծառայության հասանելիությունը (արդյոք բոլոր շահառուներին մոտ է մանկապարտեզը)

Ժամկետայնության ցուցանիշներ

- Երեխաների սպասարկման օրական ժամաքանակը
- Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում
- Հարկադիր պարապուրդի օրերի թիվը տարվա ընթացքում
- Մանկապարտեզի ջեռուցման օրերի թիվը
- Դաստիարակների վերապատրաստման հաճախականությունը
- Տարվա ընթացքում հաշվետու հանդեսների կազմակերպման հաճախականությունը

9.2. Արտադպրոցական դաստիարակություն

Քանակական ցուցանիշներ

- Արտադպրոցական դաստիարակության հիմնարկների թիվը
- Աշխատողների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մանկավարժների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Բաժինների թիվը
- Խմբակների թիվը
- Հաճախող երեխաների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Հաճախող երեխաների թիվը, որոնք ներկայացնում են սոցիալական տարբեր խմբեր (կարիքավոր ընտանիքներ, հաշմանդամներ, փախստականներ, այլազգիներ և այլն) թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Մեկ երեխայի համար գանձվող ծնողական վճարների չափերը
- Ձեռքբերված գույքի միավորների, սարքավորումների թիվը
- Երաժշտական կրթություն ստացողների թիվը

- Գեղագիտական կրթություն ստացողների թիվը
- Մանկապատանեկական ստեղծագործության կրթություն ստացողների թիվը
- Տարվա ընթացքում կազմակերպված հաշվետու համերգների թիվը
- Տարվա ընթացքում կազմակերպված ցուցահանդեսների թիվը

Որակական ցուցանիշներ

- Արտադպրոցական դաստիարակության հիմնարկի (երաժշտական դպրոց, արվեստի դպրոց և այլն) ծանրաբեռնվածության հարաբերակցությունը նրա հզորությանը
- Համայնքում երաժշտական դպրոց, արվեստի դպրոց և այլն հաճախող երեխաների տեսակարար կշիռն դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ
- Մեկ երեխայի հաշվով արտադպրոցական դաստիարակության հիմնարկի պահպանման ծախսերի գումարը և համապատասխանությունը նորմատիվներին
- Մատուցվող ծառայության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին
- Ծնողների կարծիքը մատուցվող ծառայությունների վերաբերյալ
- Ծնողների կարծիքը կազմակերպվող հաշվետու միջոցառումների վերաբերյալ
- Մեկ երեխայի համար գանձվող ծնողական վճարի հարաբերակցությունը ընդհանուր ծախսերի նկատմամբ
- Ծնողական վճարներից ազատման արտոնությունների առկայությունը
- Արտադպրոցական դաստիարակության հիմնարկի (երաժշտական դպրոց, արվեստի դպրոց և այլն) գույքի և սարքավորումների վիճակը
- Արտադպրոցական դաստիարակության հիմնարկի (երաժշտական դպրոց, արվեստի դպրոց և այլն) շենքի վիճակը
- Արտադպրոցական դաստիարակության հիմնարկում (երաժշտական դպրոց, արվեստի դպրոց և այլն) ջեռուցման համակարգի առկայությունը
- Սոցիալական տարբեր խմբեր (կարիքավոր ընտանիքներ, հաշմանդամներ, փախստականներ, այլազգիներ և այլն) ներկայացնող երեխաների կազմում արտադպրոցական կրթություն ստացողների տեսակարար կշիռը
- Արտադպրոցական դաստիարակության հիմնարկի համալրվածությունը անհրաժեշտ մանկավարժներով
- Մեկ մասնագիտության գծով ուսումը շարունակողների թիվը
- Մեկ մանկավարժի հաշվով երեխաների թիվը
- Երաժշտական կրթություն ստացողների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ
- Գեղագիտական կրթություն ստացողների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ
- Մանկապատանեկական ստեղծագործության կրթություն ստացողների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ
- Արտադպրոցական դաստիարակության հիմնարկ (երաժշտական դպրոց, արվեստի դպրոց և այլն) հաճախող երեխաների ստեղծագործական ունակությունների, երաժշտական ունակությունների բարձրացում (%-ով)
- Հանրապետական, միջազգային փառատոներին, ցուցահանդեսներին երեխաների մասնակցության արդյունքները

Ժամկետայնության ցուցանիշներ

- Արտադպրոցական դաստիարակության հիմնարկում մեկ դասաժամի տևողությունը
- Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում
- Հարկադիր պարապուրդի օրերի թիվը տարվա ընթացքում
- Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցման ամիսների թիվը տարվա ընթացքում
- Երեխաների հաճախումների թիվը շաբաթվա կտրվածքով
- Արտադպրոցական դաստիարակության հիմնարկի (երաժշտական դպրոց, արվեստի դպրոց և այլն) ջեռուցման օրերի թիվը տարվա ընթացքում
- Մանկավարժների վերապատրաստման հաճախականությունը
- Տարվա ընթացքում կազմակերպվող հաշվետու միջոցառումների թիվը

Բաժին (Ոլորտ) 10. Սոցիալական պաշտպանություն

Քանակական ցուցանիշներ

- Սոցիալական ծառայություններ մատուցող հաստատությունների թիվը
- Սոցիալական հաստատությունների շահառուների ընդհանուր թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը
- Սոցիալական աջակցություն ստացած հաշմանդամների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Սոցիալական աջակցություն ստացած զոհված ազատամարտիկների ընտանիքների թիվը
- Սոցիալական աջակցություն ստացած միայնակ անձանց թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Բուհերում սովորողների թիվը, որոնց ուսման վարձը վճարվում է համայնքի բյուջեից
- Նոր ստեղծված աշխատատեղերի թիվը
- Վճարովի հասարակական աշխատանքներում զբաղվածների թիվը __, այդ թվում՝ կին __, տղամարդ __
- Տարածքային սոցիալական պլանում տեղական սոցիալական ծրագրերի առկայությունը և դրանց թիվը

ՀԱՎԵԼՎԱԾ 9.

ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅԼ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ինչպե՞ս է գենդերային բաղադրիչը ներառվում վերջնարոյունքի նպատակային ցուցիչներում:

1. *Տարբերակել վերջնարոյունքի նպատակային ցուցանիշները՝ առանձին անդրադարձ կատարելով կանանց և առանձին՝ տղամարդկանց:*

Օրինակ.

- Կրճատել գործազրկությունը
- Կրճատել կանանց գործազրկությունը և կրճատել տղամարդկանց գործազրկությունը
- Բարձրացնել մարդկանց անվտանգության և ապահովության մակարդակը
- Բարձրացնել կանանց և տղամարդկանց անվտանգության և ապահովության մակարդակը (հաշվի առնելով նրանց իրավիճակների և կարիքների առանձնահատկությունները)

2. *Տարբերակել ցուցանիշները՝ առանձին անդրադարձ կատարելով կանանց և առանձին՝ տղամարդկանց:*

Օրինակներ.

- Կանանց գործազրկության ցուցանիշը / տղամարդկանց գործազրկության ցուցանիշը
- Կանանց ոչ ֆորմալ/ֆորմալ զբաղվածության ցուցանիշը / տղամարդկանց ոչ ֆորմալ/ֆորմալ զբաղվածության ցուցանիշը

- Կանանց չվճարվող աշխատանքային ծանրաբեռնվածությունը (ժամ/շաբաթ) / տղամարդկանց չվճարվող աշխատանքային ծանրաբեռնվածությունը
- Վերապատրաստման ծրագրերի մասնակցած այն կանանց/տղամարդկանց թիվը, ովքեր աշխատանք են գտել 3 ամսվա ընթացքում
- Մասնակցային բյուջեի հանդիպումների տարեկան մասնակիցների թիվը
- մասնակցային բյուջեի հանդիպումների տարեկան իգական սեռի և արական սեռի մասնակիցների թիվը

3. Եթե առկա է անհավասարություն/ճեղքվածք. սահմանել վերջնարդյունքի որոշակի նպատակային ցուցանիշներ կանանց կամ տղամարդկանց համար (ուղղված անհավասարության կրճատմանը) կամ ճեղքվածքը փակելու նպատակով

Օրինակներ.

- Ավելացնել կանանց մասնակցությունն աշխատուժի մեջ
- Կրճատել գյուղերում բնակվող և երեխաներ ունեցող կանանց գործազրկությունը/ պարապուրդը
- Կրճատել միգրացիոն փորձ ունեցող երիտասարդ տղամարդկանց գործազրկությունը
- Կրճատել հանցավորության ցուցանիշը երիտասարդ տղամարդկանց շրջանում
- Ծնողական արձակուրդ վերցնողների թվի մեջ ավելացնել տղամարդկանց մասնաբաժինը

4. Սահմանել որոշակի ցուցանիշներ կանանց կամ տղամարդկանց համար (ուղղված անհավասարության կրճատմանը) կամ առկա գենդերային ճեղքվածքը փակելու նպատակով

- Ցուցանիշների օրինակներ.
- Միջին մասնագիտական կրթության վկայագիր ունեցող կանանց թիվը
- Միջին մասնագիտական կրթությունն ավարտելուց հետո 6 ամսվա ընթացքում աշխատանք գտած կանանց թիվը
- Աշխատուժի մեջ իգական սեռի մասնակցության տոկոսը
- Ծնողական արձակուրդ վերցնողների թվի մեջ տղամարդկանց մասնաբաժինը

5. Ուղղակիորեն հաշվի առնել գենդերային հիմնախնդիրը

Օրինակներ.

- Խնամքի չվճարվող աշխատանքի մեջ ապահովել գենդերային հավասարությունը
- Բարելավել կանանց և տղամարդկանց հավասարությունը սպորտաձևերում
- Ձգտել մշակել հանրային տարածքների (օրինակ՝ պուրակների կամ բնակարանային ֆոնդի) նախագծման գենդերազգայուն մոդել
- Բարելավել կանանց և տղամարդկանց առողջությունը՝ խթանելով գենդերային բժշկությունը և գիտելիքի տարածումը

6. Ուղղակիորեն հաշվի առնել գենդերային հիմնախնդիրը

Օրինակներ.

- Զանիֆ՝ պուրակ է նախագծվել՝ կիրառելով գենդերազգայուն մոտեցումը (հաշվի առնելով կանանց և տղամարդկանց կարիքները և նախընտրությունները)
- Համայնքապետարանի հրապարակումների քանի՞ տոկոսն է անդրադառնում ԳԶԲ նկատառումներին
- Համայնքապետարանի կողմից կազմակերպված քանի՞ խորհրդաժողովներ են ուղղակիորեն անդրադարձել կանանց և տղամարդկանց միջև հավասարության հիմնախնդիրներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 10.

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»

Ընդունված է Ազգային ժողովի կողմից,
24 հունիսի 1997 թ.

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Յոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է ՀՀ բյուջետային համակարգը և կանոնակարգում է բյուջետային գործընթացը:

Յոդված 1.1. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ բյուջետային համակարգի բոլոր մակարդակների բյուջեների վրա:

Յոդված 2. Պետական և համայնքի բյուջեները

1. Պետական և համայնքի բյուջեները՝ պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր են:

2. Բյուջեները կազմվում, քննարկվում և հաստատվում են Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով:

Յոդված 3. ՀՀ բյուջետային համակարգը

1. ՀՀ բյուջետային համակարգն իրավունքի նորմերով կարգավորվող ՀՀ տնտեսական հարաբերությունների և ՀՀ պետական կառուցվածքի վրա հիմնված հետևյալ երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է՝

ա) առաջին մակարդակ՝ պետական բյուջե.

բ) երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ:

2. Պետական և համայնքների բյուջեները հիմնվում են ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա:

3. ՀՀում բյուջետային համակարգը հիմնվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների վրա՝

ա) բյուջետային համակարգի միասնականություն.

- բ) բյուջետային համակարգի մեջ մտնող տարբեր մակարդակների բյուջեների միջև բյուջետային մուտքերի և ելքերի տարանջատում.
- գ) բյուջեների ինքնուրույնություն.
- դ) բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվություն.
- ե) բյուջեների հաշվեկշռվածություն.
- զ) բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածություն.
- է) բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետություն.
- ը) բյուջեների հրապարակայնություն.
- թ) բյուջետային միջոցների հասցեագրվածություն և նպատակայնություն.
- ժ) բյուջեների իրատեսություն:

Հոդված 4. ՀՀ համախմբված բյուջեն

Պետական բյուջեն և համայնքների բյուջեները (այսուհետ՝ բյուջեներ) կազմում են ՀՀ համախմբված բյուջեն, որի մուտքերը՝ օրենքով՝ սույն հոդվածում թվարկված բյուջեներին ամրագրված աղբյուրներից ձևավորվող (ձևավորված) դրամական միջոցների (առանց միջբյուջետային փոխանցումների գծով մուտքերի), իսկ ելքերը՝ օրենքով սահմանված ուղղություններով ծախսվող (ծախսված) դրամական միջոցների (առանց միջբյուջետային փոխանցումների գծով ելքերի) համապատասխան հանրագումարներն են:

Հոդված 6. Բյուջետային գործընթացը

1. Բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է:
 2. Բյուջեների նախագծերը կազմվում են կառավարության գործունեության, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան:
 3. ՀՀում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:
- Բյուջետային տարվան հաջորդող տարվա առաջին ամսվա ընթացքում կառավարության որոշմամբ կարող է շարունակվել նախորդ բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումը (այսուհետ՝ եզրափակիչ շրջանառություն), եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան չի նախատեսվել:
4. Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն ՀՀ վարչապետի կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունման օրը և ավարտվում տվյալ բյուջետային տարվա բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու օրը:

Գ Լ ՈՒ Խ 4
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Հոդված 16. Պետական բյուջեի նախագծի կառուցվածքը և բովանդակությունը

1. Պետական բյուջեի նախագիծը ներառում է՝

ա) կառավարության բյուջետային ուղերձը.

բ) պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը.

գ) պետական բյուջեի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարությունը ներկայացված՝ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը:

2. Կառավարության բյուջետային ուղերձը ներառում է՝

ա) կառավարության զեկույցը բյուջետային տարվա սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին,

բ) պետության սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների կանխատեսումն առաջիկա երեք տարվա համար,

բ.1) պետական բյուջեի նախագծի հիմքում դրված միջնաժամկետ ծախսերի ծրագրի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝

- բյուջետային եկամուտների, ծախսերի, դեֆիցիտի, համախառն և զուտ պարտքի գծով կառավարության երկարաժամկետ նպատակները և պայմանական (հնարավոր) պարտավորությունները (երաշխիքները).

- մակրոտնտեսական, գնաճի, եկամուտների, ծախսերի, դեֆիցիտի և պարտքի ցուցանիշների գծով ճշգրտված եռամյա կանխատեսումները.

- տնտեսության զարգացմանը և այլ հարցերին վերաբերող այն կարևոր ենթադրությունները, որոնց հիման վրա ճշգրտված են կանխատեսումները.

- միջնաժամկետ ծախսերի ծրագրում շարադրված՝ կառավարության ռազմավարական գերակայությունները և առաջիկա տարվա բյուջեում արտացոլվելիք կոնկրետ գերակայությունները.

- ճշգրտված տեղեկատվություն՝ հիմնական հարկաբյուջետային ռիսկերի և դրանց հավանականության վերաբերյալ (բարձր, միջին, ցածր).

- միջնաժամկետ ծախսերի ծրագրի հրապարակումից հետո կառավարության քաղաքականության և հարկաբյուջետային նպատակների մեջ տեղի ունեցած Էական փոփոխությունների նկարագրությունը և դրանց հիմնավորումը:

Սույն մասում նշված տեղեկատվությունն անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել ոչ թե որպես բյուջետային ուղերձի առանձին մաս, այլ ներառվել բյուջետային ուղերձի այլ բաղկացուցիչ մասերում.

գ) պետական բյուջեի մասին օրենքի նախագծի բացատրագիրը.

դ) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված բյուջետային ելքերը ծրագրային (սույն օրենքի 6.1-ին գլխում ներկայացված դրույթների իմաստով) ձևաչափով ներկայացնող փաստաթուղթը.

ե) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված ծրագրերի վերջնական արդյունքի ցուցանիշների գծով կանխատեսումները (բացառությամբ պետական մարմինների ներքին ծառայությունների համար նախատեսվող վարչական բնույթի ծախսային ծրագրերի), ինչպես նաև ծրագրերի միջոցառումների իրագործման աստիճանը բնութագրող ֆինանսական և առկա (մշակված) արդյունքային (կատարողական) փաստացի, սպասվելիք և կանխատես-

վող (համապատասխանաբար նախորդ, ընթացիկ և ծրագրերի միջոցառումների ավարտի համար նախատեսված բյուջետային տարիների վերջի դրությամբ) ցուցանիշները (բացառությամբ պետական մարմինների ներքին ծառայությունների համար նախատեսվող վարչական բնույթի ծախսային միջոցառումների) սահմանող Չավելվածները.

զ) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված ամփոփ ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման:

3. Բացատրագիրը պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը հիմնավորող փաստաթղթերի ամբողջությունն է, որը ներառում է՝

ա) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված դեֆիցիտի (պակասուրդի) կամ Չավելուրդի հիմնավորումը, այդ թվում՝ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման նպատակով ներգրավվող վարկերի տոկոսադրույքները և հատկացման ժամկետները, ինչպես նաև այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված բյուջետային տարվան նախորդող երկրորդ տարվա (այսուհետ սույն հոդվածում, ինչպես նաև սույն օրենքի 31-րդ հոդվածում՝ նախորդ բյուջետային տարի) և առաջին տարվա (այսուհետ սույն հոդվածում, ինչպես նաև սույն օրենքի 21-րդ և 31-րդ հոդվածներում՝ ընթացիկ բյուջետային տարի) հաշվարկային և սպասվելիք համապատասխան ցուցանիշների նկատմամբ.

բ) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) կամ Չավելուրդի համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա համար հաստատված ցուցանիշների նկատմամբ.

գ) **(կետն ուժը կորցրել է 30.04.13 ՉՕ-45-Ն)**

դ) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը՝ ըստ օրենքով սահմանված հարկային և այլ եկամտատեսակների.

ե) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով առաջարկվող հատկացումների հիմնավորումը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման, այդ թվում՝ բյուջետային տարում տրամադրվող վարկերի և բյուջետային երաշխիքների ծավալներն ու ուղղությունները, բյուջետային ծախսերի հաշվարկները հիմնավորող նորմատիվները (համապատասխան նորմատիվների սահմանված լինելու դեպքում).

ե.1) պետական բյուջեի մասին օրենքի նախագծով առաջարկվող հատկացումների հիմնավորումը՝ ըստ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման, այդ թվում՝ բյուջետային տարում տրամադրվող վարկերի և բյուջետային երաշխիքների ծավալներն ու ուղղությունները, բյուջետային ծախսերի հաշվարկները հիմնավորող նորմատիվները (համապատասխան նորմատիվների սահմանված լինելու դեպքում).

զ) պետական բյուջեից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի կատարման համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորումը, որը ներառում է ծրագրի՝

-իրավական հիմքը.

-բովանդակությունը.

-ինդիկատորները և նպատակները.

-կատարման փուլերը և ժամկետները.

է) առաջիկա տարվա վերջի դրությամբ ՀՀ արտաքին և ներքին պարտքի կառուցվածքը, դրա համեմատական վերլուծությունը՝ նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ.

ը) կառավարության պահուստային ֆոնդի և պետական պահուստների ձևավորման համար առաջարկվող հատկացումների հիմնավորումը.

թ) տեղեկություններ՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 10-րդ մասում նշված մարմինների բյուջետային ֆինանսավորման հայտերով պահանջված և ՀՀ կառավարության առաջարկած հատկացումների հետ կապված համաձայնեցումների արդյունքների մասին.

ժ) տեղեկություններ՝ ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին՝ օրենքով սահմանված կարգով տրամադրվող հատկացումների մասին.

ժա) **(կեսն ուժը կորցրել է 30.04.13 ՀՕ-45-Ն)**

ժբ) տեղեկություններ՝ պետական բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին, և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ՝ փաստացի աշխատողների (զբաղեցրած հաստիքների) միջին տարեկան ցուցակային թվաքանակի մասին.

ժբ.1) **(կեսն ուժը կորցրել է 24.10.07 ՀՕ-224-Ն)**

ժբ.2) կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատված առաջիկա բյուջետային տարվա կապիտալ ներդրումների ծրագիրը և ծախսերի նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով, ինչպես նաև վերջինիս վերաբերյալ կառավարության եզրակացությունը.

ժգ) այլ տեղեկություններ, որոնք ՀՀ կառավարությունն անհրաժեշտ է համարում պետական բյուջեի մասին օրենքի նախագծի հիմնավորման համար:

4. Պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը ներառում է՝

ա) պետական բյուջեի եկամուտները և ծախսերը՝ սույն օրենքով սահմանված դասակարգմամբ (բացառությամբ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման).

ա.1) պետական բյուջեի եկամուտները սույն օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դասակարգմամբ և ծախսերը՝ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգմամբ.

բ) պետական բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) կամ Հավելուրդը և դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ Հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ սույն օրենքով սահմանված դասակարգմամբ.

բ.1) **(կեսն ուժը կորցրել է 24.10.07 ՀՕ-224-Ն)**

բ.2) ՀՀ կենտրոնական բանկի վարչական ծախսերի նախահաշիվը՝ օրենքի նախագծի առանձին Հավելվածի տեսքով, և կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը.

գ) օրենքով սահմանված այլ դրույթներ և ցուցանիշներ:

5. Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով կենտրոնական բանկին առաջարկվում է գնաճի սահող թիրախ, այն է՝ տարվա ընթացքում որոշումների կայացման համար գնաճի նպատակային մակարդակը և դրանից շեղումների թույլատրելի չափը: Տարվա ընթացքում դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնելիս կենտրոնական բանկը առաջնորդվում է որոշման կայացման օրվան հաջորդող 12 եռամսյակների համար գնաճի նպատակային մակարդակին հասնելու տրամաբանությամբ:

Հոդված 20. Համայնքների բյուջեներին տրվող հատկացումները

1. Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով՝ համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ:

2. Համայնքներին չի կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատ-

կացված ֆինանսական միջոցների ուղղում կոնկրետ ծախսերի իրականացմանը:

Պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4 տոկոսը:

3. Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և հատկացման կարգը սահմանվում է օրենքով:

4. Պետական բյուջեի ծախսերում կարող են նաև նախատեսվել համայնքների բյուջեներին հատկացվող՝

ա) այլ դոտացիաներ՝ համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով որևէ ծախսատեսակի (ծրագրի) իրականացման հետ չկապակցված, անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ:

բ) սուբվենցիաներ՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ: ՀՀ կառավարությունն իրավասու է հետ պահանջել համայնքից պետական բյուջեից համայնքին հատկացված սուբվենցիաների ոչ նպատակային ծախսված գումարները: Սուբվենցիաների տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 21. Պետական բյուջեի նախագծի կազմումը

1. Պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքները կազմակերպում է կառավարությունը՝ առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման հիման վրա՝ այդ որոշմամբ և սույն օրենքով նախատեսված ժամկետներում:

2. Պետական բյուջեի նախագիծը կազմելիս կառավարությունը կամ նրա լիազորած պետական կառավարման մարմինը, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի 31 հոդվածին համապատասխան, խորհրդակցում է կենտրոնական բանկի հետ՝ պետական բյուջեի նախագծին առնչվող հարցերի, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի միջնաժամկետ կանխատեսումների շուրջ:

2.1. Պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացը բաղկացած է երկու փուլից՝

ա) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակման համար պատշաճ ծրագրային հիմքեր ստեղծելու նպատակով առաջիկա երեք տարվա՝ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակում:

բ) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակում:

2.2. Առաջիկա երեք տարվա՝ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ միջնաժամկետ ծախսերի ծրագիր) մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել կառավարության համար կառավարելու պետական հատվածի ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան: Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ծառայում է հիմք՝ պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար:

2.3. Միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման փուլն սկսվում է առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման ընդունման օրը և ավարտվում միջնաժամկետ ծախսերի ծրագրի հրապարակման օրը: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակումն իրականացվում է սույն օրենքով և առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Պետական լիազորված մարմինը մշակում և առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում պետական մարմիններին և տրամադրում միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումները: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումներում ներկայացվում են պետական մարմինների կողմից մշակվող ոլորտային միջնաժամկետ ծրագրերի նախագծերին ներկայացվող ընդհանուր պահանջները, այդ նախագծերի ներկայացման կարգը, ինչպես նաև տեղեկություններ՝ առաջիկա երեք տարում կառավարության հարկաբյուջետային սկզբունքների, կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշների և ռազմավարական ծախսային գերակայությունների վերաբերյալ:

2.5. Պետական մարմինները կազմում և պետական լիազորված մարմին են ներկայացնում իրենց ոլորտային միջնաժամկետ ծախսերի ծրագրերը՝ առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում:

2.6. Պետական մարմնի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն ստորագրում է պետական մարմնի ղեկավարը:

2.7. Սահմանված ժամկետում պետական մարմնի միջնաժամկետ ծախսերի ծրագրերի չներկայացման դեպքում դրանք ըստ անհրաժեշտության և հնարավորության կազմում է պետական լիազորված մարմինը:

2.8. Իր պարտականությունները կատարելու համար պետական լիազորված մարմինն իրավասու է պետական մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:

2.9. Պետական լիազորված մարմինը մշակում է միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը և առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացնում է կառավարություն:

2.10. Կառավարությունը քննարկում և մինչև ընթացիկ տարվա հուլիսի 10-ը հաստատում է միջնաժամկետ ծախսերի ծրագիրը: Կառավարությունը հրապարակում, ինչպես նաև Ազգային ժողով է ներկայացնում՝ ի գիտություն, միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 20-ը:

2.11. Առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակման փուլն սկսվում է ոչ ուշ, քան ՀՀ կառավարության կողմից ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հաստատման օրը:

2.12. Պետական լիազորված մարմինը մշակում և առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում պետական մարմիններին և ուղարկում առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու և դրանք պետական լիազորված մարմին ներկայացնելու մեթոդական ցուցումները (դրանց մեջ արտացոլելով այն իրավական ակտերի ցանկը, որոնցով, նախատեսված դրույթների համաձայն, պետք է հաշվարկվեն բյուջետային ծախսերը, հաշվարկման ձևերը, դրանց լրացման ցուցումները և այլ նյութեր ու ցուցումներ, որոնք պետական լիազորված մարմինը անհրաժեշտ կհամարի տրամադրել պետական մարմիններին՝ առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու համար):

3. Պետական լիազորված մարմինը մշակում և առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում պետական մարմիններին և ուղարկում առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը (նաև բյուջետային ելքերը ծրագրային՝ սույն օրենքի 6.1-ին գլխում ներկայացված դրույթների իմաստով, ձևաչափով) կազմելու և դրանք պետական լիազորված մարմին ներկայացնելու մեթոդական ցուցումները (դրանց մեջ արտացոլելով այն իրավական ակտերի ցանկը, որոնցով նախատեսված դրույթների համաձայն պետք է հաշվարկվեն բյուջետային ծախսերը, հաշվարկման ձևերը, դրանց լրացման ցուցումները և այլ նյութեր ու ցուցումներ, որոնք պետական լիազորված մարմինը անհրաժեշտ կհամարի տրամադրել պետական մարմիններին՝ առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու համար):

Առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ

սահմանված ժամկետներում պետական լիազորված մարմինը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կառավարության սահմանած իրավական հսկողության բարձրագույն մարմնի (այսուհետ՝ իրավական հսկողության բարձրագույն մարմին) միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում է վերջիններիս համար պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներ՝ պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի և պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու նպատակով ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերի և նորմատիվների, պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտի կազմման ու ներկայացման կարգի, բյուջետային դասակարգման մանրամասների, ինչպես նաև ըստ առանձին համայնքների համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների կամ լրացուցիչ ծախսերի պետության կողմից փոխհատուցվող գումարների հաշվարկման համար անհրաժեշտ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշվառվող ելակետային տվյալների, դրանց հաշվարկման և ներկայացման կարգի ու ժամկետների, բյուջետային ծախսերի նախահաշիվների ու համայնքի բյուջեի (կրա բաղկացուցիչ մասերի) միասնական ձևերի մասին, ինչպես նաև խորհրդատվական բնույթ կրող ցուցումներ (ուղեցույցեր): Պետական լիազորված մարմինը՝ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավասու է պարզելու տեղական ինքնակառավարման մարմիններին պետական բյուջեից տրվող հատկացումների հաշվարկման համար այդ մարմինների կողմից ներկայացվող տվյալների արժանահավատությունը: Ըստ առանձին համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիայի հաշվարկները կատարելու համար կառավարության լիազորած պետական մարմինը (այսուհետ՝ դոտացիայի գումարներն հաշվարկող մարմին) առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ընթացակարգով և ժամկետներում տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում է վերջիններիս համար պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներ՝ ըստ առանձին համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիաների (այս հոդվածում այսուհետ՝ դոտացիա) գումարների հաշվարկման համար անհրաժեշտ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշվառվող ելակետային տվյալների կազմի, դրանց հաշվարկման և ներկայացման կարգի ու ժամկետների մասին:

4. Պետական մարմիններն առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումների համաձայն կազմված իրենց և համակարգի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը (որտեղ ցույց է տրվում կապն առաջիկա երեք տարվա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հետ և ընդգծվում են առաջիկա երեք տարվա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի նկատմամբ բոլոր զգալի շեղումները), իսկ դոտացիայի գումարները հաշվարկող մարմինը՝ դոտացիայի գումարի՝ ըստ առանձին համայնքների բաշխումը առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացնում են պետական լիազորված մարմին:

4.1. Տեղական ինքնակառավարման մարմինները պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու նպատակով պետական լիազորված մարմնից ստացված մեթոդական ցուցումներին համապատասխան կազմված առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների կամ լրացուցիչ ծախսերի պետության կողմից փոխհատուցվող գումարների ըստ առանձին համայնքների հաշվարկման համար անհրաժեշտ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշվառվող ելակետային տվյալները, ինչպես նաև օրենսդրությամբ պահանջվող այլ նյութեր, առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում տարածքային կառավարման մարմինների միջոցով ներկայացնում են պետական լիազորված մարմին: Տեղական ինքնակառավարման մարմինները պետական բյուջեից հատկացվող դոտացիաների գումարների՝ ըստ առանձին համայնքների հաշվարկման համար անհրաժեշտ՝ իրենց կողմից հաշվառվող ելակետային տվյալները դոտացիայի գումարները հաշվարկող մարմ-

նից ստացված մեթոդական ցուցումներով սահմանված ծավալով, կարգով և ժամկետում ներկայացնում են դոտացիայի գումարներն հաշվարկող մարմին:

4.2. Առաջիկա տարվա դոտացիայի ընդհանուր գումարների ըստ առանձին համայնքների բաշխման հաշվարկներն իրականացնելու համար անհրաժեշտ՝ տեղական ինքնակառավարման մարմնի (համայնքի ղեկավարի) կողմից հաշվառվող ելակետային տվյալները մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը դոտացիայի գումարները հաշվարկող մարմնում օրենսդրությամբ սահմանված ծավալով և կարգով չստացվելու դեպքում առաջիկա տարվա համար այդ համայնքի բյուջեին տրվող դոտացիան հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ընթացիկ տարվա դոտացիայի հաշվարկներում կիրառված համապատասխան ելակետային տվյալները, եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

4.3. Ընթացիկ տարվա դոտացիայի հաշվարկներում կիրառված ելակետային տվյալներում կամ կատարված հաշվարկներում մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը որևէ համայնքի գծով սխալների հայտնաբերման դեպքում դոտացիայի գումարները հաշվարկող մարմինը՝ հիմք ընդունելով ընթացիկ տարվա դոտացիայի հաշվարկման ճշգրտված ելակետային տվյալները և (կամ) վերացնելով հաշվարկներում տեղ գտած վրիպումները, կատարում է տվյալ տարվա դոտացիայի գումարների ըստ առանձին համայնքների բաշխման վերահաշվարկ, որի արդյունքները սույն հոդվածի 4.5-րդ մասին համապատասխան արտացոլվում են առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում:

4.4. Ընթացիկ տարվա դոտացիայի հաշվարկներում կիրառված ելակետային տվյալներում կամ կատարված հաշվարկներում որևէ համայնքի գծով սխալների հայտնաբերման մասին ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից հետո դոտացիայի գումարները հաշվարկող մարմնում ստացված տեղեկատվության հիման վրա տվյալ տարվա դոտացիաների գումարների՝ ըստ առանձին համայնքների բաշխման վերահաշվարկ չի իրականացվում:

4.5. Ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր համայնքի գծով սույն հոդվածի 4.3-րդ մասի համաձայն վերահաշվարկված և նույն տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված դոտացիայի գումարների միջև՝

ա) բացասական տարբերության առաջացման դեպքում այդ տարբերությունը (ընթացիկ տարվա համար ավել հաշվարկված գումարը) հետ է գանձվում այդ համայնքից՝ վերջինիս գծով առաջիկա տարվա համար հաշվարկված դոտացիայի գումարն ընթացիկ տարվա համար ավել հաշվարկված գումարի չափով պակասեցման ճանապարհով (ընդ որում, եթե գանձման ենթակա գումարը գերազանցում է առաջիկա տարվա համար հաշվարկված դոտացիայի գումարը, ապա այդ գերազանցող չափով գումարի գանձումը նույն եղանակով իրականացվում է նաև առաջիկա տարվան հաջորդող հերթական տարիների ընթացքում):

բ) դրական տարբերության առաջացման դեպքում այդ տարբերությունը (ընթացիկ տարվա համար պակաս հաշվարկված գումարը) հատկացվում է տվյալ համայնքին առաջիկա տարվա պետական բյուջեով համայնքների միջև բաշխման համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարի հաշվին՝ այդ համայնքին առաջիկա տարվա համար հաշվարկված դոտացիայի գումարն ընթացիկ տարվա համար պակաս հաշվարկված գումարի չափով ավելացման ճանապարհով: Եթե սույն մասի «ա» կետով սահմանված եղանակով գումարի գանձման ժամանակաշրջանը որոշ համայնքների գծով ընդգրկում է ոչ միայն առաջիկա տարին, այլև դրան հաջորդող հերթական տարիները (գանձման ժամանակաշրջան), ապա սույն կետի համաձայն՝ հատկացում ստանալու իրավունք ունեցող համայնքներին (սույն կետում այսուհետ՝ հատկացում ստանալու իրավունք ունեցող համայնքներ) հատկացումը գանձման ժամանակաշրջանի յուրաքանչյուր տարի պետք է իրականացվի այդ տարիներին գանձման ենթակա գումարի սահմաններում (ընդ որում, հատկացում ստանալու իրավունք ունեցող յուրաքանչյուր համայնքին իրեն հասանելիք հատկացման գումարը գանձման ժամանակաշրջանի յուրաքանչյուր տարում պետք է տրվի հատկացում ստանալու իրավունք ունեցող բոլոր համայնքներին հասանելիք հատկացման ընդհանուր գումարում յուրաքանչյուր համանման համայնքի գումարի տեսակարար կշռին համապատասխանող չափով):

4.6. Սույն հոդվածի 4.4-րդ մասով նախատեսված դեպքում, ինչպես նաև սույն հոդվածի 4.5-րդ մասի համաձայն՝ ըստ առանձին համայնքների համապատասխան տարվա դոտացիայի գումարների վերահաշվարկմամբ այդ տարվա դոտացիաների տրամադրման բնագավառում պետության և համայնքների միջև փոխադարձ պարտավորությունները համարվում են ամբողջությամբ կարգավորված և վերանայման ենթակա չեն, եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

5. Դոտացիայի գումարները հաշվարկող մարմինն առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին և տրամադրում պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող հատկացումների չափերը:

6. Բյուջետային հիմնարկի ֆինանսավորման հայտը ստորագրում է ղեկավարը, որն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում բյուջետային հատկացումների նպատակային օգտագործման համար:

7. Սույն օրենքով սահմանված ժամկետներում բյուջետային ֆինանսավորման հայտերի չներկայացման դեպքում դրանք ըստ անհրաժեշտության և հնարավորության կազմում է պետական լիազորված մարմինը:

8. Կապիտալ ծախսերը հաշվարկվում են նպատակային ծրագրերի հիման վրա: Այդ ծրագրերի իրականացման ժամկետը բյուջետային տարվան գերազանցելու դեպքում առանձնացվում են տվյալ ծրագրերի՝ ըստ տարիների ֆինանսավորման չափերը: Նման ծրագրերով ֆինանսավորվող ծախսերը յուրաքանչյուր բյուջետային տարվա համար ճշգրտում է պետական լիազորված մարմինը և առանձին տողով ներկայացնում համապատասխան տարվա պետական բյուջեում:

8.1. Պետական բյուջեի նախագծի արտարժույթային մուտքերը և ելքերը դրամային արտահայտությամբ հաշվարկվում են՝ կիրառելով պետական բյուջեի նախագիծը Ազգային ժողով ներկայացնելու ամսվա առաջին օրը ՀՀ արտարժույթային շուկայում ձևավորված համապատասխան արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը, իսկ եթե այդ օրվա դրամի միջին փոխարժեքի կիրառմամբ ողջամիտ ժամկետում արտարժույթային մուտքերի և ելքերի նշված հաշվարկը կատարել հնարավոր չէ, ապա այդ ամսվան նախորդող ամսվա առաջին օրը նույն շուկայում ձևավորված համապատասխան արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

8.2. Եթե սույն օրենքով սահմանված կարգով Ազգային ժողով ներկայացվող առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում կառավարության պարտքը նախորդ տարվա ղեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցել է ՀՀ նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի՝

ա) 40 տոկոսը, ապա կապիտալ ծախսերը պետք է լինեն ղեֆիցիտից (պակասուղղից) ոչ պակաս.

բ) 50 տոկոսը, ապա, բացի սույն հոդվածի 8.2-րդ մասի «ա» կետի պահանջից, ընթացիկ ծախսերի (առանց կառավարության պարտքի սպասարկման ծախսերի) աճի առավելագույն չափը նախորդ տարվա ընթացիկ ծախսերի փաստացի ծավալի համեմատությամբ սահմանում է կառավարությունը՝ հիմք ընդունելով ՀՀ համախառն ներքին արդյունքի նախորդ տարիների երկարաժամկետ աճերը.

գ) 60 տոկոսը, ապա, բացի սույն հոդվածի 8.2-րդ մասի «ա» կետի պահանջից, ընթացիկ ծախսերի (առանց կառավարության պարտքի սպասարկման ծախսերի) աճի առավելագույն չափը նախորդ տարվա ընթացիկ ծախսերի փաստացի ծավալի համեմատությամբ և ընթացիկ ծախսերի ընդհանուր ծավալի հարաբերակցությունը հարկային եկամուտներին սահմանում է կառավարությունը՝ հիմք ընդունելով ՀՀ համախառն ներքին արդյունքի նախորդ տարիների երկարաժամկետ աճերը:

8.3. Սույն հոդվածի 8.2-րդ մասով, ինչպես նաև սույն օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները չեն գործում կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ պայմանավորված խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների առկայությամբ:

8.4. Եթե նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը ՀՀ նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի նկատմամբ՝

ա) գտնվել է 50-60 տոկոսի միջակայքում, ապա կառավարությունն այդ տարվան հաջորդող տարում կազմվող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծն աստիճանական 50 տոկոսից նվազեցնելու համար:

բ) գերազանցել է 60 տոկոսը, ապա կառավարությունն այդ տարվան հաջորդող տարում կազմվող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրն Ազգային ժողով ներկայացնելիս Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային և Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծն աստիճանական 60 տոկոսից նվազեցնելու համար:

9. Պետական լիազորված մարմինն առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում հայտատուների հետ համաձայնեցնում է նրանց ներկայացրած հայտերով նախատեսված ծախսերի ֆինանսավորման չափերը:

10. ՀՀ դատական իշխանության մարմինների, ինչպես նաև ՀՀ օրենքներով ստեղծված՝ ՀՀ կառավարության կողմից պատվիրակված որոշակի լիազորությունների հիման վրա առանձին բնագավառներում կարգավորող գործունեություն իրականացնող գործադիր իշխանությունից անկախ մարմինների (սույն մասում այսուհետ՝ հայտատու մարմին) բյուջետային ֆինանսավորման հայտերի պատճենները պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում են Ազգային ժողով: Եթե որևէ հայտատու մարմնի ներկայացրած բյուջետային ֆինանսավորման հայտի շուրջ այդ մարմնի և պետական լիազորված մարմնի միջև ծագած տարաձայնությունները մինչև պետական բյուջեի նախագիծը Ազգային ժողով ներկայացնելը համաձայնեցվել են, ապա պետական բյուջեի նախագծի հետ Ազգային ժողով է ներկայացվում փոխհամաձայնեցված ցուցանիշներ պարունակող, հայտատու մարմնի կազմած բյուջետային ֆինանսավորման հայտի պատճենը:

11. Բյուջետային ֆինանսավորման հայտերի ներկայացման և դրանց շուրջ՝ պետական լիազորված մարմնի ու հայտատուների միջև տարաձայնությունների համաձայնեցման կարգը սահմանում է կառավարությունը՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան:

12. Բյուջետային ֆինանսավորման հայտերի, արտաքին ու ներքին պարտավորությունների և հաջորդ տարում կանխատեսվող մուտքերի հիման վրա պետական լիազորված մարմինը կազմում է հաջորդ տարվա պետական բյուջեի նախագիծը և ներկայացնում կառավարություն:

13. Կառավարությունը պետական բյուջեի նախագիծը՝ ներառյալ նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված ՀՀ կենտրոնական բանկի կապիտալ ներդրումների ծրագիրը և ծախսերի նախահաշիվը Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ:

14. Պետական բյուջեի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածները, բացված տեսքով, սույն օրենքով սահմանված դասակարգմամբ, ներկայացվում են Ազգային ժողով՝ առանձին փակ ծրարով:

15. Եթե պետական բյուջեի նախագծով նախատեսվում է տվյալ բյուջեի կատարումն ապահովող օրենքների ընդունում, ապա կառավարությունն ապահովում է այդ օրենքների նախագծերի ներկայացումը ՀՀ Ազգային ժողով՝ պետական բյուջեի նախագծի հետ միասին կամ մինչև պետական բյուջեի նախագծի ներկայացումը:

Հոդված 22. Ազգային ժողովում պետական բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը

1. Ազգային ժողովում պետական բյուջեի նախագծի քննարկման և հաստատման կարգը սահ-

մանվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով:

2. Եթե պետական բյուջեի նախագծով նախատեսվում է բյուջեի կատարումն ապահովող օրենքների ընդունում, ապա բյուջեի մասին օրենքի նախագիծը քվեարկության է դրվում դրանց ընդունումից հետո:

Սույն մասով սահմանված պահանջը չի տարածվում ՀՀ հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրենքների ընդունման վրա:

3. Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում՝ ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

Այդ դեպքում, մինչև այդ տարում բյուջետային միջոցների օգտագործումը կարգավորող օրենքի ընդունումը, կառավարությունն իրավասու է տվյալ տարում բյուջետային միջոցները ծախսելու՝ օրենսդրությամբ սահմանված նպատակներով կատարել նախկինում կնքված պայմանագրերից բխող պարտավորությունները, ֆինանսական համահարթեցման դոտացիաների հատկացումները տեղական ինքնակառավարման մարմիններին (նախորդ տարվա համար օրենքով սահմանված բաշխմամբ), շարունակել կենսաթոշակների և նպաստների վճարումները, ինչպես նաև ներդրումային ծրագրերի ֆինանսավորումը: Ընդ որում, նշված ծախսերը կարող են կատարվել, եթե դրանց ֆինանսավորման համար նախորդ տարվա պետական բյուջեով արդեն իսկ նախատեսված են եղել հատկացումներ: Այդ դեպքում կատարվող ծախսերի չափը (բացառությամբ կենսաթոշակների և նպաստների վճարման ծախսերի) չի կարող գերազանցել նախորդ տարվա հատկացումների մեկ քառորդը՝ եռամսյակի, կամ մեկ տասներկուերորդը՝ ամսվա կտրվածքով: Կառավարությունն իրավասու է չֆինանսավորել այն ծախսերը, որոնք չեն նախատեսվել տվյալ տարվա բյուջեի մասին իր կազմած օրենքի նախագծում:

4. Եթե մինչև բյուջետային տարվա սկիզբն այդ տարվա պետական բյուջեն չի հաստատվում, ապա մինչև դրա հաստատումը բյուջեից շարունակվում է օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակների և նպաստների ֆինանսավորումը՝ ամբողջ ծավալով:

Հոդված 23. Պետական բյուջեի կատարումը

1. Պետական բյուջեի կատարման կարգը սահմանում է կառավարությունը՝ սույն օրենքի հիման վրա:

2. Պետական բյուջեի կատարման ընթացքում պետական կառավարման համապատասխան մարմնի ղեկավարը կառավարության սահմանած կարգով կարող է կատարել այդ մարմնի կողմից իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով պետական բյուջեի մասին օրենքով սահմանված հատկացումների ընդհանուր գումարի 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև (եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան նախատեսված չէ):

3. Ազգային ժողովի հաստատած պետական բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել Ազգային ժողովի պատգամավորների, Ազգային ժողովի խմբակցությունների, կառավարության առաջարկությամբ՝ օրենսդրական նախաձեռնության կարգով: Պետական բյուջեում այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են պետական բյուջեի մուտքերը կամ ավելացնում ելքերը, Ազգային ժողովը քննարկում է միայն կառավարության եզրակացության առկայությամբ և ընդունում պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ:

Պետական բյուջեի կատարման ընթացքում ՀՀ կառավարությունը, իր սահմանած կարգով, կարող է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 3 տոկոսի սահմաններում վերաբաշխել տվյալ օրենքով սահմանված ծախսային ծրագրերի միջև՝ դրանց գծով օրենքով հաստատված հատկացումների գումարները (եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան նախատեսված չէ): Ընդ որում, հատկացումների գումարների միջծրագրային վերաբաշխումները չպետք է հանգեցնեն տվյալ

տարվա պետական բյուջեով ֆինանսական համահարթեցման դոտացիաների գծով նախատեսված՝ համայնքներին տրամադրվող հատկացումների ընդհանուր տարեկան գումարի նվազմանը (եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան նախատեսված չէ):

Պետական բյուջեի կատարման ընթացքում կառավարությունը, իր սահմանած կարգով, կարող է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի երեք տոկոսի սահմաններում վերաբաշխել տվյալ օրենքով սահմանված ինչպես ծրագրերի, այնպես էլ ծրագրերի միջոցառումների միջև՝ դրանց գծով օրենքով հաստատված հատկացումների գումարները (եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան նախատեսված չէ): Ընդ որում, ծրագրերի, ծրագրերի միջոցառումների հատկացումների գումարների վերաբաշխումները չպետք է հանգեցնեն տվյալ տարվա պետական բյուջեով ֆինանսական համահարթեցման դոտացիաների գծով նախատեսված՝ համայնքներին տրամադրվող հատկացումների ընդհանուր տարեկան գումարի նվազմանը (եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան նախատեսված չէ):

4. Պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 45 օրվա ընթացքում, կառավարությունը սահմանում է պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները և հաստատում սույն օրենքի 41.2-րդ հոդվածում նշված տվյալ տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով նախատեսված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող փաստաթուղթը:

4.1. Պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 45 օրվա ընթացքում, կառավարությունը սահմանում է պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, այդ թվում՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների արդյունքային (կատարողական) ցուցանիշների, ինչպես նաև ըստ այդ միջոցառումների գծով բյուջետային ելքերի տնտեսագիտական և գործառական դասակարգման:

5. Պետական բյուջեի կատարման պատասխանատուն կառավարությունն է:

6. Կառավարությունը, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, Ազգային ժողով է ներկայացնում պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն (նաև էլեկտրոնային տարբերակով)՝ սույն օրենքով սահմանված բյուջետային դասակարգման և տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքի կառուցվածքին համապատասխան:

7. Եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված բյուջետային մուտքերի տարեկան ծավալի թերակատարման վտանգ է առաջանում տվյալ տարվա պետական բյուջեի կատարման ընթացքում, որը կարող է հանգեցնել տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված հատկացումների տարեկան ծավալի 10 տոկոսը չգերազանցող չափով թերակատարմանը, ապա կառավարությունը կարող է ընդունել որոշում տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված տարեկան հատկացումների ընդհանուր գումարը՝ դրանց ընդհանուր ծավալի 10 տոկոսը չգերազանցող չափով կրճատելու մասին՝ ըստ պետական բյուջեի մասին օրենքով սահմանված ուղղությունների կառավարության սահմանած համամասնություններով:

8. Հաստատված պետական բյուջեի եկամուտների կազմում չնախատեսված և այդ բյուջե մուտքագրված նվիրաբերված գումարները կառավարությունն իրավասու է նույն տարում ծախսել՝ ըստ նվիրաբերողի կողմից որոշված ուղղությունների:

9. Պետական բյուջեում փոփոխությունները և լրացումները կատարվում են օրենքով:

Հոդված 24. Պետական բյուջեի կատարման հսկողությունը և վերահսկողությունը

1. Պետական բյուջեի կատարման հսկողությունն իրականացնում է կառավարությունը՝ իր սահմանած կարգով:

2. Պետական բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է Ազգային ժողովը:

3. Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում՝

ա) սույն օրենքի և սվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ.

բ) օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ.

գ) բյուջետային պարտավորությունների կատարման, բյուջետային միջոցների ծախսման օրինականության և հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման ուղղությամբ:

Հոդված 25. Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը

1. Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության հետ Ազգային ժողով է ներկայացնում նաև դրա վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից կառավարություն ներկայացված Կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը:

2. Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝

ա) տեղեկություններ հաշվետու տարում հարկաբյուջետային քաղաքականության և համապատասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, որոնք ազդել են պետական բյուջեի կատարման արդյունքների վրա.

բ) պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (Հավելվորդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ.

գ) տեղեկություններ հաշվետու տարում կառավարության պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով.

դ) տեղեկություններ հաշվետու տարում պետության արտաքին և ներքին պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ.

դ.1) պետական մարմինների կողմից

պետական լիազորված մարմին ներկայացված տարեկան հաշվետվությունների համապատասխան տեղեկություններն այդ մարմինների գծով հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով սահմանված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող՝ ՀՀ կառավարության հաստատած փաստաթղթի մաս կազմող գերատեսչական տարեկան ծրագրերով նախատեսված արդյունքների կատարման վերաբերյալ.

դ.2) պետական մարմինների կողմից պետական լիազորված մարմին ներկայացված տարեկան հաշվետվությունների համապատասխան տեղեկություններն այդ մարմինների գծով հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծրագրերի և ծրագրերի միջոցառումների գծով կառավարության սահմանած արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ.

ե) այլ տեղեկություններ, որոնք կառավարությունն անհրաժեշտ է համարում պետական բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

3. Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածները, բացված տեսքով, սույն օրենքով սահմանված դասակարգմամբ, ներկայացվում են Ազգային ժողով՝ առանձին փակ ծրարով:

4. Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի եզրակացությունը բաղկացած է հետևյալ մասերից՝

- 1) պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիք.
- 2) հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների, ինչպես նաև առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն:
5. Ազգային ժողովի նիստում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը քննարկվում և հաստատվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով՝ մինչև ընթացիկ տարվա հունիսի երկրորդ չորեքշաբթին:

Հոդված 26. Պետական բյուջեի հրապարակայնությունը

Պետական բյուջեի նախագիծը կազմելու, քննարկելու, հաստատելու, կատարելու և դրա նկատմամբ վերահսկողության հրապարակայնությունն ապահովելու համար՝

ա) պետական բյուջեի մասին օրենքի նախագիծն Ազգային ժողով ներկայացնելուց հետո կառավարությունը եռօրյա ժամկետում այն հրապարակում է մամուլում և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ բացառությամբ պետական գաղտնիք պարունակող հարցերի.

բ) Ազգային ժողովում պետական բյուջեի նախագծի քննարկումը լուսաբանվում է պետական լրատվության միջոցներով՝ բացառությամբ պետական գաղտնիք պարունակող հարցերի.

գ) պետական բյուջեի եռամսյակային համամասնությունները և տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող փաստաթուղթը հրապարակվում են կառավարության կողմից հաստատվելուց հետո մեկամսյա ժամկետում.

գ.1) պետական բյուջեի եռամսյակային համամասնությունները, այդ թվում՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և ծրագրերի միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների, ինչպես նաև ըստ այդ միջոցառումների գծով բյուջետային ելքերի տնտեսագիտական դասակարգման՝ հրապարակվում են կառավարության կողմից հաստատվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում.

դ) կառավարությունը բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո 45-օրյա ընթացքում հրապարակում է տեղեկատվություն պետական՝ բյուջեի եռամսյակային կատարման մասին:

Գ Լ ՈՒ Խ 5

ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԸ

Հոդված 27. Համայնքների բյուջեների ձևավորման սկզբունքները

Համայնքների բյուջեների ձևավորման հիմնական սկզբունքներն են՝

ա) համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանու կողմից ընդունված համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիման վրա համայնքային Նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը.

բ) պահուստային ֆոնդի ստեղծումը՝ որպես տվյալ տարվա համայնքի բյուջեում չնախատեսված, ինչպես նաև վարկերի և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ելքերի աղբյուրի և կապիտալ ելքերի ֆինանսավորման հիմնական երաշխիք.

գ) համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը՝ յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեի սույն օրենքի 28-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր բաղկացուցիչ մասում նախատեսված հաշվարկային-դրամարկղային ելքերի հանրագումարը չպետք է գերազանցի համայնքի բյուջեի համապատասխան մասում տվյալ տարում նախատեսված հաշվարկային-դրամարկղային մուտքերի

հանրագումարին.

դ) խնայողականությունը, երբ կատարված ծախսին համապատասխանում է դրան համարժեք նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում.

ե) արդյունավետությունը, երբ ապահովվում է կատարված ծախսի և համայնքի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը.

զ) հավաստիությունը և հստակությունը, որը հնարավորություն է ընձեռում ապահովել բյուջեի կատարման և բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ բյուջեի հոդվածների հիմքում դրվող հստակ հաշվարկների միջոցով.

է) հրապարակայնությունը, որն ապահովում է համայնքի բյուջեի ձևավորման և կատարման վերաբերյալ համայնքի անդամների իրազեկությունը:

Չորված 28. Համայնքների բյուջեների կառուցվածքը

1. Համայնքների բյուջեների կառուցվածքը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում է հետևյալ բաղկացուցիչ մասերի՝

ա) համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե).

բ) համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե):

2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցները (այդ թվում՝ ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդի միջոցները) չեն կարող փոխանցվել համայնքի բյուջեի վարչական մաս, բացառությամբ 28.1-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետի:

Չորված 28.3 Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումը

1. Համայնքների բյուջեներից պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին:

2. Պատվիրակված լիազորությունները (այդ թվում՝ դրանց իրականացման ծախսերի ֆինանսավորումը) իրականացվում են օրենքով կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Չորված 31. Համայնքի բյուջեի նախագծի կազմումը

1. Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է համայնքի զարգացման հնգամյա ծրագրով՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:

2. Համայնքի բյուջեի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

3. Կառավարության կամ նրա լիազորած պետական կառավարման մարմնի կողմից բյուջետային ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները համայնքների բյուջեներով նախատեսվող ծախսերի հաշվարկման ժամանակ կրում են խորհրդատվական բնույթ: Բացառություն են տեղական ինքնակառավարման մարմինների՝ պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի և պետական բյուջեից համայնքների

բյուջեներին տրամադրվող այլ նպատակային ծախսերի ֆինանսավորման դեպքերը:

4. Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքները կազմակերպելու նպատակով համայնքի ղեկավարը՝ աշխատակազմի համապատասխան ծառայությունների և բյուջետային հիմնարկների ղեկավարներին՝

- տալիս է համապատասխան հրահանգներ բյուջեի մուտքերի և ելքերի հաշվարկման ու ներկայացման համար.

- պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով սույն օրենքի 21-րդ հոդվածում նշված՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներն ստանալու օրվանից մեկ շաբաթվա ընթացքում ապահովում է բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման համապատասխան ձևերով:

5. Բյուջետային հիմնարկները համայնքի ղեկավարի կողմից սահմանված ժամկետում համայնքի ղեկավարին են ներկայացնում բյուջետային ֆինանսավորման հայտերը, իրենց պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:

6. Համայնքի ղեկավարն ամփոփում է սահմանված ձևերով ներկայացված տվյալները և կազմում համայնքի բյուջեի նախագիծը, որը բաղկացած է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից:

7. Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը ներառում է՝

ա) (կեսն ուժը կորցրել է 11.04.03 ՀՕ-541-Ն)

բ) համայնքի ղեկավարի զեկույցը բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղությունների մասին,

գ) համայնքի բյուջեի նախագծով նախատեսված եկամուտների և ծախսերի հիմնավորումը, եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դեֆիցիտի (պակասուրդի) կամ Հավելուրդի հիմնավորումը, ինչպես նաև այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաստատված և հաշվարկային ցուցանիշների հետ,

դ) համայնքի բյուջեից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի կատարման համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորումը, որը ներառում է ծրագրի՝

- իրավական հիմքը.

- բովանդակությունը.

- խնդիրները և նպատակները.

- կատարման փուլերը և ժամկետները.

ե) պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ.

զ) բյուջեի վարչական և ֆոնդային մասերի պահուստային ֆոնդի ձևավորման համար առաջարկվող հատկացումների հիմնավորումը.

է) սույն օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան ստացված տեղեկությունները պետական բյուջեի նախագծում (եթե համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծն ավագանու քննարկմանը ներկայացվում է մինչև առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի ընդունումը) կամ պետական բյուջեի մասին օրենքում պետական բյուջեից համայնքի բյուջեին նախատեսված հատկացումների մասին.

ը) (կեսն ուժը կորցրել է 30.04.13 ՀՕ-45-Ն)

թ) տեղեկություններ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկ-

ների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների (գբաղեցրած հաստիքների) միջին տարեկան ցուցակային թվաքանակի մասին:

Ժ) այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի հիմնավորման համար:

8. Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծը ներառում է՝

ա) համայնքի բյուջեի եկամուտները և ծախսերը՝ ըստ բյուջեի բաղկացուցիչ մասերի՝ սույն օրենքով սահմանված դասակարգմամբ (բացառությամբ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման),

բ) համայնքի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) կամ Հավելուրդը և դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ Հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ սույն օրենքով սահմանված դասակարգմամբ,

գ) այլ դրույթներ և ցուցանիշներ, որոնք համայնքի ղեկավարը և ավագանին անհրաժեշտ են համարում համայնքի բյուջեի կատարումը և դրա նկատմամբ վերահսկողությունն ապահովելու համար:

Հոդված 32. Համայնքի բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը համայնքի ավագանու կողմից

1. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում: Համայնքի բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ:

2. Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի նախագծի քննարկման կարգը սահմանվում է օրենքով և համայնքի ավագանու կանոնակարգով:

3. Համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն ներկայացնում է համայնքի բյուջեի նախագիծը, պատասխանում է ավագանու անդամների հարցերին:

Համայնքի ավագանու անդամները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են ավագանու նիստում: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները: Համայնքի ղեկավարը քննարկումներից հետո կարող է վերցնել մինչև մեկ շաբաթ ժամանակ՝ ներկայացված նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար կամ պահանջել հաստատելու բյուջեն:

4. Նշված ժամկետում համայնքի ղեկավարը հրավիրում է համայնքի ավագանու նիստ և ներկայացնում է իր դիրքորոշումը բյուջեի՝ ավագանու առաջարկած փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը համայնքի ղեկավարի ընդունած փոփոխություններով քվեարկության է դրվում ամբողջությամբ: Չընդունվելու դեպքում նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետները կարող է որոշել համայնքի ավագանին՝ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, կամ համայնքի ղեկավարը՝ հրավիրելով արտահերթ նիստ:

5. Համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին, որի վերաբերյալ ընդունում է համայնքի ղեկավարի ներկայացրած համապատասխան որոշման նախագիծը:

6. Համայնքի ավագանին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի բյուջեն կարող է հաստատել նաև մինչև պետական բյուջեի հաստատումը:

Պետական բյուջեի հաստատումից հետո համայնքների մինչ այդ հաստատված բյուջեներում

երկշաբաթյա ժամկետում կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ և (կամ) լրացումներ:

7. Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո 3 օրվա ընթացքում, ներկայացնում է համապատասխան մարզպետին:

Մարզպետը ստուգում է համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի համապատասխանությունն օրենքին՝ պահպանելով սույն օրենքով սահմանված բյուջեների ինքնուրույնության սկզբունքը, հաշվարկների համապատասխանությունը սահմանված մեթոդաբանությանը և բյուջե տային համակարգի միասնականությունն ապահովող սկզբունքների պահպանման դեպքում համայնքի բյուջեն ներառում է պետական լիազորված մարմին ներկայացվող՝ մարզի վարչական տարածքում գտնվող համայնքների բյուջեների ամփոփ տեղեկանքում: Ամփոփ տեղեկանքի ձևը, նրա կազմման կարգը և ներկայացման ժամկետները սահմանում է պետական լիազորված մարմինը:

8. Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման առնչությամբ մարզպետի և համայնքի ղեկավարի միջև առաջացած տարաձայնությունները կարգավորվում են օրենքով սահմանված կարգով:

9. Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում՝ համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում իր անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Համայնքի բյուջեի հաստատման առնչությամբ՝ հրաժարական տալու միջոցով համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ համայնքի ավագանու կողմից որոշում ընդունվելու դեպքում համապատասխան մարզպետը հարցը ներկայացնում է կառավարության լիազորած մարմին, որն էլ օրենքով սահմանված կարգով այն ներկայացնում է կառավարություն:

Եթե կառավարությունը դիմումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Կառավարության կողմից համայնքի ղեկավարի՝ հրաժարական տալու միջոցով լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ համայնքի նոր ղեկավարը բյուջեի նախագիծ է ներկայացնում համայնքի ավագանուն քսան օրվա ընթացքում: Այն քննարկվում և հաստատվում է սույն օրենքով նախատեսված կարգով՝ երեսուն օրվա ընթացքում:

10. Մինչև բյուջետային տարվա սկիզբը համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում՝ ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Այդ դեպքում համայնքի ղեկավարը պարտավոր է կատարել նախկինում կնքված պայմանագրերից բխող պարտավորությունները, չիրականացնել նոր ներդրումներ, իսկ ծախսերը կատարել նախորդ տարվա յուրաքանչյուր ամսում կատարված ծախսերից ոչ ավելի:

Հոդված 33. Համայնքի բյուջեի կատարումը

1. Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը սահմանում է համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատում է բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները:

2. Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեի կատարումն ապահովելու նպատակով՝

ա) համայնքի ավագանու հաստատած տարեկան բյուջեն, եռամսյակային համամասնություններով և բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի տարեկան և եռամսյակային բաշխ-

մամբ հաստատված նախահաշիվները տրամադրում է համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացնող պետական լիազորված մարմին,

բ) ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը,

գ) աջակցում է հարկային մարմիններին՝ համայնքի բյուջե հարկերի մուտքագրման գործում,

դ) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

3. Համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին որոշմամբ սահմանված չափաքանակները:

4. Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ սույն օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի մուտքերը կամ ավելացնում են ելքերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու ընթացակարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով՝ սույն օրենքի համաձայն:

Հաստատված համայնքի բյուջեի եկամուտների կազմում չնախատեսված և այդ բյուջե մուտքագրված նվիրաբերված գումարները համայնքի ղեկավարն իրավասու է նույն տարում ծախսել՝ ըստ նվիրաբերողի կողմից որոշված ուղղությունների:

5. Համայնքի բյուջեի կատարման սպասարկումը, սույն օրենքի համաձայն, կառավարության սահմանած կարգով իրականացնում է պետական լիազորված մարմինը՝ գանձապետարանի ստորաբաժանումների միջոցով:

6. Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն համայնքի ղեկավարն է:

Հոդված 34. Համայնքների բյուջեների կատարման վերահսկողությունը

1. Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են համայնքի ավագանին, Ազգային ժողովը և կառավարությունը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

2. Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է իր անդամի (անդամների) և (կամ) առևտրական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

2.1. Կառավարությունը համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է պետական բյուջեից համայնքին տրված նպատակային հատկացումների (սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից սույն օրենքի համաձայն համայնքի բյուջե մասհանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների) օգտագործման, ինչպես նաև պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների օգտագործման և դրանց մարման ծրագրի նկատմամբ՝ իր կողմից սահմանված կարգով պետական կառավարման լիազորած մարմնի միջոցով:

3. Համայնքների բյուջեների կատարման վերահսկողության հիմնական խնդիրներն են՝

ա) բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգումը,

բ) բյուջետային միջոցների, ներառյալ՝ վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգումը,

գ) բյուջետային պարտավորությունների կատարման, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատումը,

դ) բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանումը,

ե) բյուջետային գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված այլ պահանջների կատարման ապահովումը:

4. Համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի աշխատակազմը, բյուջետային հիմնարկների պաշտոնատար անձինք համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնող անձանց պարտականությունների կատարումը խոչընդոտելու, կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Հոդված 35. Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունները

1. Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին: Համայնքի ղեկավարը սույն մասում նշված հաղորդումը մարզպետին ներկայացնում է պետական լիազորված մարմնի սահմանած ձևաչափով:

2. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:

3. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

4. Համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ ավագանու անդամը (անդամները) կամ առևտրորական մասնագիտացված կազմակերպությունը համայնքի ավագանուն է ներկայացնում իր ուսումնասիրությունների արդյունքները և եզրակացությունները: Իրավախախտումներ հայտնաբերվելու դեպքում ավագանին կարող է դիմել համապատասխան իրավասու մարմիններ:

5. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է ավագանու անդամի (անդամների) կամ առևտրորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը:

6. Համայնքի ավագանու նիստում համայնքի ղեկավարը պատասխանում է ավագանու անդամների հարցերին և տալիս է անհրաժեշտ բացատրություններ:

7. Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման կարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով:

8. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման վերաբերյալ ավագանին ընդունում է համապատասխան որոշում: Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը ղնում է իրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Այդ դեպքում գործում է

սույն օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ համայնքի ղեկավարի կողմից հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցի վերաբերյալ ընթացակարգը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր անդամների ընդհանուր թվի ձայների ամսվազն երկու երրորդով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

Եթե համայնքի ավագանին այնուամենայնիվ իր որոշմամբ համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր անդամների ընդհանուր թվի ձայների ամսվազն երկու երրորդով ընդունում է հրաժարականը, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը նույնպես համարվում է հաստատված:

9. Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը կազմվում է սույն օրենքի պահանջներին համապատասխան պետական լիազորված մարմնի սահմանած ձևով և ներառում է՝

ա) տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի մուտքերի և ելքերի հիմնավորվածության վերաբերյալ, դրանց համապատասխան վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև.

բ) տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով.

գ) տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ.

դ) այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

10. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ավագանու հաստատելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է համապատասխան մարզպետին:

Հոդված 36. Համայնքների բյուջեների հրապարակայնությունը

Համայնքների բյուջեների հրապարակայնությունն ապահովելու համար՝

ա) համայնքի բյուջեի մասին որոշման նախագիծը համայնքի ավագանուն ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում հրատարակվում է տեղական մամուլում: Միաժամանակ պատրաստվում և հրատարակվում են բյուջեի հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ ներառող տեղեկատուներ և գրքույկներ,

բ) բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո մեկ ամսվա ընթացքում հրապարակվում է տեղեկատվություն համայնքի բյուջեի եռամսյակային կատարման մասին,

գ) համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում,

դ) համայնքների ղեկավարները պայմաններ են ստեղծում, որպեսզի համայնքի բյուջեի նախագծին, տարեկան հաշվետվությանը ծանոթանալու և ուսումնասիրելու ցանկություն ունեցող համայնքի անդամները դյուրությամբ ձեռք բերեն համապատասխան փաստաթղթերը:

Գ Լ ՈՒ Խ 7

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ


Հոդված 27. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

Սույն օրենքի պահանջների խախտման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց լիազորություններ իրականացնող իրավաբանական և պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

ՀՀ Նախագահ

Լ. Տեր-Պետրոսյան

Երևան, 21 հուլիսի 1997 թ., ՂՕ-137



ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հրապարակված է համատեղ՝

ՄԱԿ-Կանայք Վրաստանի գրասենյակ
3 Կավսաձե փ, Գրասենյակ 11
Թվիլիսի 0179, Վրաստան
+995 32 222 06 04
georgia.unwomen.org/en

ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան
Պետրոս Աղամյան փ. 14
Երևան 0010, Հայաստան
Tel: +374 60 530000
<https://www.am.undp.org/>

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
Կենտրոնական գրասենյակներ՝ Բոնն և Էջբորն, Գերմանիա
«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային
Կովկասում» ծրագիր
Հանրապետության փ 59, 6րդ հարկ,
Երևան 0010, Հայաստան
+374 (0) 10 51 00 61
www.giz.de

.....

.....